Էջմիածին

АЛС140

ՌՆԴ
ԺԲ. ՏԱՐԻ

ՀՈՎԻՍ ԷՋՄԻԱԾԻՆ

ПА-998

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

VII

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.— Մեր ազգային-եկեղեցական բարեբարները	3
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարեբար պարոն Գալուստ Կյուլպենկյանի մահվան առթիվ փոխանակված հեռագրերը	6
Մ. ՄԻՆԱՍՅԱՆ.— Կոստանդնուպոլսի հանգուցյալ Պատրիարքական տեղապահ երջանկահիշատակ Տ. Դևորգ արքեպիսկոպոս Աբսյանյանը և նրա կտակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին	7
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարեբար պարոն Գալուստ Կյուլպենկյանի մահը	10
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Սրբալույս Մեռոնի օրհնությունը	13
Երուսաղեմի Պատրիարքական տեղապահ բարձրապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Լոնդոնի մեջ	17
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ.— Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի Քահանայության 25-ամյա հոբելյանը	22
ԻՂԻՇԵ ԱԹԵՂԱ.— Ռումինահայ թեմը	24
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ.— Սիրիական խորհրդարանի անդամ պարոն Տիգրան Զրաջյանը Ս. Էջմիածնում	30
Դ. ՍԱՐԳՍՅԱՆ.— Առաքելոց վանք-ամրոցը և գյուղատեղը	33
ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Դ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Հայագիտության զարգացումը Մայր Հայրենիքում	40
Հ. ՊԱԼՅԱՆ.— Շիրակյան խրոնիկա	51
Նորընծա Տ. Արամ քահանա Բոյաջյան	52
Չին-Սովետական բարեկամության ընկերության դեղեզացիան Հայաստանում	53
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	55
ՄՈՒՇԵՂ ԱԹԵՂԱ.— Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում	58
Հանգիստ գերաշնորհ Տ. Ռուբեն արքեպիսկոպոս Մանասյանի	60
Ա. Ք.— «Եզնկայ Եղծ աղանդոց ի չատագովութիւն Աստուծոյ ճշմարտի»	61

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ,

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1955 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

ԿԵՐԱԴՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐԸ

Մայր Աթոռի պաշտոնաթերթը «Էջմիածին» ամսագրի այս համարում հրատարակվում է Կոստանդնուպոլսի նախկին Պատրիարքական փոխանորդ հանգուցյալ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանի կտակը, որով նա Մայր Աթոռ Ս. Էջմիածնին է նվիրում իր անձնական գույքը և հարուստ գրականությունը:

Հանգուցյալ Էջմիածնասեր ու հայրենասեր եկեղեցականի հարազատները ու սիրելիները, հարգելով նվիրատու սրբազանի կամքը և կետ առ կետ կատարելով կտակի բոլոր ուրամադրությունները, մի սրտառուչ ու սիրաշատ նամակի հետ, Մայր Աթոռ են ուղարկել հանգուցյալ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանի անձնական գույքն ու գրականությունը:

Մայր Աթոռի Դեռագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, այդ հարուստ գրականությունը տրամադրվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին, որտեղ, ըստ գրականության բաժինների, պիտի դասավորվեն գրքերը՝ հանգուցյալ նվիրատու սրբազանի անվան սկզբնատառերը կրող մասնավոր դարակների մեջ: Իսկ անձնական գույքը ի պահ է դրված վերարանում:

Դեռագույն Հոգևոր Խորհրդի անունից շնորհակալության և օրհնության նամակ է ուղարկված հանգուցյալ սրբազանի հարազատներին, որոնք այնքան ջերմությամբ և սրտությամբ կատարեցին իրենց որդիական պարտականությունը, հավերժացնելով Տ. Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանի հիշատակն ու սիրելի անունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Արտասահմանի մամուլից մեզ հայտնի դարձավ Մայր Աթոռի համար փերշերս կատարված մի ուրիշ նվիրատվություն:

Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում մահացած տիար Գալուստ Կյուլպենկյանը Մայր Աթոռին կտակել է 400.000 դոլար:

Երկու անուններ, երկու մարդիկ, երկու տարբեր ասպարեզներից, մեկը՝ համեստ ու հավատավոր եկեղեցական, մյուսը՝ ձեռներեց, մեծանուն ու մեծատուն, միջազգային շրջանակի ու համբավի տեր անձնավորություն, բայց երկուսն էլ հարազատ ու ազնվասիրտ հայեր, հայրենասեր և եկեղեցասեր մարդիկ, երկուսն էլ Ս. Էջմիածնի և Մայր Աթոռի հարազատ զավակներ, որոնք իրենց որդիական հարգանքն ու սիրո տուրքն են տալիս Մայր Աթոռին, մեկը իր հարուստ խակից, մյուսը՝ իր ամբողջ ունեցածը՝ «գոյլու չափ զգեանս իւր», բայց երկուսն էլ անկեղծ նվիրումով, ազգի և եկեղեցու խանդավառ սիրով:

Անցյալում մեծ է եղել հայ կեսարիայի երախտիքը մեր ժողովրդի կյանքում: 17-րդ, 18-րդ դարերում և մինչև 19-րդ դարի կեսերը, կեսարացի ամիրաները ու խոջաները, որոնք Թյուրքիայում իրենց ձեռներեցությամբ հասել էին տնտեսական նախանձելի բարձրության, վճռական դեր էին կատարում ոչ միայն Թյուրքիայի ներքին ու անտեսական կյանքում, այլ նաև հայ ազգային-եկեղեցական գործերը կենտրոնացրել էին իրենց ձեռքում, և իրենց նվիրատվություններով շեն ու պայծառ էին պահում մեր մշակույթի կենտ-

ռոն հանդիսացող վանքերն ու եկեղեցիները, հայրենի վանքերից մինչև հեռավոր Ս. Երուսաղեմը, Կոստանդնուպոլիսն ու Վենետիկը:

Կեսարացիները շնորհակալ դեր են կատարել նաև հայ գիտության, կրթության, գրականության զարգացման ու պահպանման գործում:

Կեսարիան հանդիսացել է միշտ էլ հայկական կոլորիտով, հայեցի շնչով, հայկական ավանդություններով ապրող ու ստեղծագործող մեր կարևոր կենտրոններից մեկը, որն իր անջնջելի կնիքը, դրոշմն է դրել հայ կյանքի վրա:

Եվ տիար Դալուստ Կյուլպենկյանը կեսարացի հայ մարդու եկեղեցասիրությունը, ձեռներեցությունն ու նարկությունը իր մեջ լավագույնս մարմնավորող անձնավորությունների առաջիններից մեկն է հանդիսացել, որի անունը սերտորեն ու լայն շափով կապված է եղել Սփյուռքի մեր մի շարք եկեղեցիների, կրթական, մարդասիրական հաստատությունների շինության, պայծառության և այլ բարեարարությունների հետ:

«Երանի՜ որ ունիցի յիշատակ ի Սիոն»:

Մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքում Ս. Էջմիածինը հանդիսացել է մեր հոգևոր Սիոնը, որի հետ անխզելի կապով կապված է եղել հայ ժողովուրդը որպես իր հավերժական կենտրոնի, իր հոգևոր Հայրենիքի հետ:

Ահա թե ինչու միայն հայրենի հողի վրա կանգնած հուշարձանները ու կոթողները հավիտենական ու անմահ են: Մեր ժողովուրդը շատ բան է կառուցել օտարի հողի վրա, բայց, այսօր, դժբախտաբար, այդ կատարված բարեարարություններից շատերի հետքն անգամ չի մնացել, որովհետև «Մառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն»: Մինչ, մեր հայրենի աշխարհը՝ սուրբ քարերի մի աշխարհ է, որտեղ յուրաքանչյուր քար ու կոթող, կամար ու խոյակ, թեկուզ ավերակ, բայց լուռ խոսում է մեր անցյալի մեծության մասին:

Ժամանակն է, որ յուրաքանչյուր ճշմարտապես հայրենասեր և էջմիածնասեր մարդ, մտածի Ս. Էջմիածնում մի հավերժական հիշատակ ունենալու մասին:

Անցյալում հայ ժողովուրդը ոչինչ չի խնայել Ս. Էջմիածնի համար: Նա կանգ չի առել ոչ մի տնտեսական, բարոյական զոհողության առաջ հանուն Ս. Էջմիածնի: Հենց դրա համար էլ Ս. Էջմիածինը դարձել է Սրբություն Սրբոց հայության համար, «ճշմարտապես և ոչ կարծեօ»:

Այսօր, մանավանդ, Մայր Աթոռը կարիքն ունի մեր ազգային մեծահարուստ բարեարարների, հայրենասեր, էջմիածնասեր մեր հոգևորականության, մեր հավատացյալ հայ ժողովրդի նյութական ու բարոյական դրական աջակցության:

Փա՜ռք, անսահման երախտի՜ք մեր հայրենի հարազատ պետության, որ իր միջոցներով ձեռնարկեց Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքներին: Բայց Մայր Աթոռում կան կատարվելիք այնպիսի ձեռնարկներ, որոնք պահանջում են տնտեսական, նյութական նույնքան խոշոր միջոցներ: Մայր Տաճարի վերանորոգությունը որպես պատմական ու հարատարապետական արժեքավոր ու հնագույն կոթողի, բարոյական, նյութական վերակառուցման աշխատանքների սկիզբն է միայն: Նյութական պայմաններ են անհրաժեշտ, կազմակերպելու համար էջմիածնի անբաժանելի մասը կազմող Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի և Ս. Շողակաթի վանքերը վերանորոգելու գործը: Անհրաժեշտ է նաև կազմակերպել Մայր Աթոռի տպարանը, ստվարացնել Մայր Աթոռի միաբանությունը և Հոգևոր Ճեմարանը է՛լ ավելի ինքնաբավ դանձնել: Դեռ չենք խոսում այն ձեռնարկների մասին, որոնք շոշափվել են նախորդ խմբագրականներում:

Վերջին տարիները Մայր Աթոռի տնտեսական ամբողջ ծանրությունը ընկել է Մայր Հայրենիքի և մեր սովետական թեմերի վրա: ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԵՄԵՐԻ ՊԱՏՎԻ, ԽՂՃԻ, ԵԿԵՂԵՑԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴՈՐԾՆ Է՝ ՆՅՈՒԹԱՊԵՍ ԵՎ ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴՈՅՈՒԹՅՈՒՆԸ:

Ուրախ ենք հոգևին, որ վերջերս մեր մի շարք արատասահմանյան թեմերում եղան մեծ հանգանակություններ՝ տեղական եկեղեցիների կարիքների համար, բայց, պետք է հիշեցնել, որ մեր էջմիածնասեր և հայրենասեր առաջնորդների առաջնահերթ խնդիրներից մեկն է նաև Մայր Աթոռի տնտեսական ապահովությունը, որի մասին պիտի որ մտածեին մեր թեմական առաջնորդներն ու խորհուրդները, եկեղեցական հոգաբարձությունները, հայրենակցական կազմակերպությունները, և առաջին հերթին՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը:

Գողոս Նուպար փաշայի գլխավորությամբ, հայ ունևոր դասի աջակցությամբ, և բովանդակ հայ ժողովրդի մասնակցությամբ կազմակերպված այդ իրապես պատվաբեր ու ազգային մեծ միությունը պետք է գլխավորի Մայր Աթոռի նյութական օժանդակության հարցը Սփյուռքում:

Սովետական օրենքով Պետությունը բաժանված է եկեղեցուց, դպրոցը՝ եկեղեցուց: Մայր Աթոռը Պետությունից չի ստանում նյութական ոչ մի միջոց: Մայր Աթոռի նյութական ապահովության հարցը մեր թեմերի,

այդ բվում մանավանդ մեր Սփյուռքի բեմերի պատվի խնդիրն է: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը իր լայն ու հնարավոր միջոցները սպառում է միայն մեր Սփյուռքի բեմերում, և մոռացության է տրված Մայր Արոռի նյութական օժանդակության հարցը:

Մի ժողովրդի հոգեկան մեծությունը նրա կենսունակության, ուժի, գեղեցկության աղբյուրը ոչ այնքան նրա նյութական հզորության մեջ է, որքան նրա բարոյական իդեալի և հոգեկան առաքինության:

Հենց հայ ժողովրդի մեծությունը ևս խարսխված է նրա հավատքի, սիրո և բարոյական ուժի վրա:

«Երանելի է ասել քան զառնուն» (Գործք, Ի 35):

Հայ ժողովուրդը առատաձեռն ժողովուրդ է: Մեր ժողովրդի այդ առաքինությունը հիմնված է սիրո և զոհաբերության վրա:

Նրանք, ովքեր ոսկու չափանիշով են դատում կյանքն ու մարդկային բոլոր հարաբերությունները, նրանք դժբախտներ են, որոնք նույնիսկ չեն կարող վայելել իրենց դիզած հարստությունը, որոնք փողի, մամոնայի առաջ ստրկացած հոգիներ են:

ՈՍԿՈՒ ԴԵԶԵՐԻ մոտ ունենալ ՈՍԿԻ ՍԻՐՏ, հարստության կողքին՝ առաջ միտք և մարդասիրական վերաբերմունք, հանրային-հասարակական պարտքի գիտակցություն:

«Մեծատանց որ են յայսմ աշխարհի՝ պատուէր տաջիր մի՛ հպարտանալ և մի՛ յուսալ ի մեծութիւն սնոտի, այլ յԱստուած... գործել, մեծանալ գործովք բարութեան» (Ա Տիմոթ., Զ 17):

Մարդկանց մեծությունը, վեհությունը դրսևորվում է նրանց խոնարհության, զոհաբերության ոգու մեջ, ժողովրդի, Ազգի, Հայրենիքի և Եկեղեցու հանդեպ ցուցաբերված նվիրման ու սիրո մեջ:

Ոչ ոք մեծ չի եղել առանց զոհողության, նվիրման ոգու, որովհետև մեծությունը հոգեկան առաքինություն է, որը բխում է Դերագույն Զոհողությունից՝ Աստուծուց:

Պատմական օրեր են լինելու Մայր Աթոռում, որոնք լավագույն առիթներ են հանդիսանալու հայ ունևորի, հայ արհեստավորի, հայ մտավորականի, հայ բովանդակ ժողովրդի համար, իրենց նվիրական պարտքը կատարելու Մայր Աթոռի հանդեպ, որ հազարամյակներ շարունակ, հոգեպես ծնել, ոնել, դաստիարակել, առաջնորդել և այսօրվա խաղաղ նավահանգիստն է առաջնորդել հայ ժողովրդին, դարերի փորձիկների միջով:

Համազգային-հասարակական այդպիսի սրտառուչ վերաբերմունքներ Մայր Աթոռի համար կունենան նաև բարոյական մեծ նշանակություն, որը կբարձրացնի Մայր Աթոռի հեղինակությունը, միջազգային կշիռը:

Այս առթիվ ուրախ ենք հայտնելու, որ այդ հպատակով Մայր Աթոռում ստացվել է մի ոմն հավատացյալ ու ազնիվ մարդու 5.000 դոլարի նվիրատվությունը, գերապատիվ Տ. Գերեգին եպիսկոպոս Փոլատյանի միջոցով:

Մեզ հայտնել են նաև, որ ուրիշ նվիրատվություններ ևս եղել են Գերեգին եպիսկոպոսի միջոցով, որոնք շուտով կստացվեն Մայր Աթոռում:

Մենք վստահ ենք, որ հայ ժողովրդի սիրտն ու միտքը, այսօր մանավանդ, սերտորեն ու անմոռանալի կերպով կապված են Մայր Աթոռի, Ս. Էջմիածնի և մեր պանծալի Հայրենիքի հետ:

Վստահ ենք, նույնպես, որ յուրաքանչյուր հավատացյալի սրտի ամենաջերմ ցանկությունն է հիշատակ ունենալ հայրենի հողի վրա՝ Ս. Էջմիածնում, որտեղ գուրգուրանքով, սերունդների երախտագետ զգացմունքներով կհիշվի Մայր Աթոռի մեծ ու փոքր երախտավորների խնկելի հիշատակը:

Արդարև, երանի՜ է նրան, ով անմահ հիշատակ կունենա Մայր Աթոռում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԲԱՐԵՐԱՐ ՊԱՐՈՆ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՊԱՐՈՆ ՆՈՒՊԱՐ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻՆ

ՓԱՐԻԶ

Խորը վշտով իմացանք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերար պարոն Գալուստ Կյուլպենկյանի ցավալի մահը: Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի միաբանության և անձամբ իմ անունից հայտնում ենք մեր խորը ցավակցությունները անդարձ կորստի համար: Աղոթում ենք Աստուծուն՝ հանգուցյալի հոգու փրկության և հանգստի համար: Թող Հոգին Սուրբ մխիթարի հանգուցյալի սգակիր ընտանիքին և բարեկամներին: Օգոստոսի 7-ի կիրակին մատուցելու ենք հանդիսավոր պատարագ և հոգեհանգիստ:

Օրհնությամբ՝
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

3 օգոստոսի 1956 թ., Էջմիածին:

ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ

ՆԻՑՑԱ

Հայտնում ենք մեր խորը ցավակցությունները Մայր Աթոռի բարերար պարոն Գալուստ Կյուլպենկյանի ցավալի մահվան առթիվ: Օգոստոսի 7-ին Մայր Տաճարում մատուցվելու է հոգեհանգստյան պատարագ: Խնդրում ենք մխիթարել հանգուցյալի ընտանիքի անդամներին Մայր Աթոռի անունից:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

3 օգոստոսի 1956 թ., Էջմիածին:

ԳԵՐԱՇՆՈՐՀ ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հանուն իմ և ամբողջ ընտանիքիս հայտնում եմ, որ շատ զգածված ենք Ձեր համակրանքից, վշտակցությունից և աղոթքներից: Խնդրում եմ ընդունել մեծարանքս և անկեղծ շնորհակալությունները անձամբ Ձեր և Գերագույն Հոգևոր Խորհրդի այն բարյացակամ բարեպաշտիկ մտածման համար, ըստ որում հանդիսավոր պատարագ և հոգեհանգստյան պաշտոն է կատարվել իմ սիրելի հոր հոգու հանգստյան և փրկության համար:

ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ

12 օգոստոսի 1956 թ., Փարիզ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՋԱՆԿԱՀԻՆԱՑԱԾ Տ. ԳԵՎՈՐԳ ՍՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՍԼԱՆՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԿՏԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՆ

Էջմիածնասեր և հայրենասեր, Հայ Եկեղեցու շահերի և նրա ավանդական իրավունքների անենկուն պաշտպաններից մեկն էր հոգելույս Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանը։ Նա ծնվել է Ակնա Բինկյան գյուղում 1865 թվականին մեծահարուստ ընտանիքում։ 1895 թվականի հայկական աղետների ժամանակ կորցնելով կնոջը (նահատակված), Գ. Արսլանյանը ուխտում է նվիրվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և ծառայել իր սիրելի ժողովրդին։ Առաջին հինգ տարիներին նա նվիրվում է որբահավաքման նվիրական գործին՝ խնամելով և դաստիարակելով մինչև 200 որբ Տիվրիկում և Սեբաստիայում։ 1901 թվականին ստանալով վարդապետական աստիճան, հավատարիմ իր ուխտին, Արսլանյանը ամբողջովին նվիրվում է առօրյա եկեղեցական գործունեության։ Այնուհետև Արսլանյանին տեսնում ենք առաջնորդական պաշտոնով Նվդոկիայում, Մելիտինեում (Մալաթիա), Ակնում, Խարբերդում, Ռոդոստոյում, և ի վերջո Ադանայում, որտեղից, իր հոտի հետ, տարագրվում է դեպի Սիրիայի անապատները։

Համաշխարհային առաջին պատերազմը վերջանալուց հետո (1919 թ.), Արսլանյանը վերադառնում է իր նախկին պաշտոնատեղին և նոր եռանդով անցնում է աշխատանքի՝ առաջնորդական պաշտոնի հետ նվիրվելով նաև անապատներից վերադարձող հարյուր հազարավոր հայ որբերի ու այրիների, վերապրող բեկորների պարենավորման հոգնատանջ աշխատանքին։

Իր եկեղեցական գործունեության ընթացքում Արսլանյան սրբազանը երկու անգամ ընտրվում է Թյուրքահայոց Պատրիարքական տեղապահ (1922—1927 թ. թ. և 1944—1951 թ. թ.)։ Երկու անգամին էլ, սակայն, նրա տեղապահությունը դուրգդիպում է շափազանց ծանր ու տագնապալից ժամանակների։ Այսուհանդերձ, Տեղապահ Արսլանյան որբուգանին հաջողվում է մեծ դժվարությամբ ու երկարամյա պայքարով փրկել ու վերականգնել Կոստանդնուպոլսի Պատրիարքարանը տնտեսապես ու ֆինանսապես, ինչպես նաև ճանաչել տալ Հայոց Պատրիարքարանի դարավոր իրավունքները ու 1862 թվականի Ազգային Սահմանադրությունը։

Հանդուցյալ Սրբազանը լինելով վերին աստիճանի նախանձախնդիր Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի միասնության, ինչպես նաև հանդիսանալով չերմ պաշտպանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վեհիրավության, անսասան հավատքով ու պողպատյա կամքով անխոնջ ու անվեհեր մաքառում էր այն մարդկանց դեմ, որոնք փորձում էին ստվեր ձգել Մայր Աթոռի վրա։

Ալեկոծ, փոթորկոտ իր կյանքում, Արսլանյան սրբազանը բեղմնավոր վաստակ է ունեցել նաև գրչի ու գրականության ասպարեզում, տալով մի շարք գրական-բանասիրական արժեքավոր աշխատություններ։ Առանձին հատորներով նա լույս է ընծայել տասնյակ գրական գործեր և դրել է նույնքան անտիպ աշխատություններ։ Բացի այդ,

նա աշխատակցել է Սփյուռքում հրատարակվող մի շարք օրաթերթերի ու ամսագրերի՝ ազգագրական, գյուղագրական, տեղագրական, կրոնաբարոյական բազմաթիվ հոդվածներով։

կեղեցիներ, վանքեր, հիվանդանոցներ և դրպրոցական շենքեր, հիմնել է որբանոցներ և արհեստանոց, երկու դպրոց և մեկ մայրանոց (ծննդատուն), վերջինիս պահպանությունը ապահովելով իր սեփական միջոցնե-

Նոչանկաճիշատակ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյան

Իր պաշտոնավարության ընթացքում Արսլանյան սրբազանը ձեռնարկել է բազմապիսի ու բազմաթիվ շինարարական աշխատանքների. նա նորոգել է տվել մի քանի տասնյակ ե-

որով, և այլ բարեգործական հաստատություններ։

Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանը անսահման սիրում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածի-

նը, Հայ Եկեղեցին ու Հայրենիքը, և այդ սիրո բազմաթիվ ապացույցները ավել է նա իր հիանալի գործունեության ընթացքում։ Կյանքի վերջին օրերին նա չէր մոռացել իր այնքան սիրած և պաշտած Էջմիածինը. իր վերջին կամքով Արսլանյան սրբազանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին է կտակել ավելի քան 3.000 հատոր գրքերից և հավաքածուներից բաղկացած իր գրադարանը։ Նա Էջմիածնին է կտակել նաև իր անձնական եկեղեցական ոպասներն ու սրբանոթները՝ արծաթյա սկիհ, մեռոնաթափ արծաթյա աղամնի, արծաթյա 2 ձեռքի խաչ, աղամանդակուռ 2 լանջախաչ, արծաթյա կազմով ավետարան և մաշտոց, մետաքսյա 2 ծաղկյա փիլոն և այլ թանկարժեք իրեր։ Նվիրված է նաև արծաթապատ եպիսկոպոսական 1 ասա՝ հոգեյուր սրբազանի գտեր՝ համեստափայլ սիկին Հոսիֆոսիմ Արսլանյանի կողմից։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մատենադարան-գրադարանը, ընդունելով Արսլանյան արքեպիսկոպոսի այնքան ճոխ և արժեքավոր գրադարանը, որոշել է պահել նրանք հանգուցյալ Սրբազանի անունը կրող գրադարաններում, իսկ գրադարանների վերև դնել նվիրատու Սրբազանի մեծադիր նկարը։

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը սրբությամբ կպահի իր համեստ և նվիրված եկեղեցականի բարի հիշատակը։

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

(Անդամ Ս. Էջմիածնի Գեղագույն Հոգևոր Խորհրդի)

ՄԵԾԻՐ ԵՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԲԱՐԵԲԱՐ ՊԵՐՈՆ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ՄԱՀԸ

Հուլիսի 20-ին Փարիզից ստացված հաղորդագրությունից հայտնի դարձավ, որ Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում, Ավիզոյի իր շքեղ պալատում, երկակարատև հիվանդությունից հետո կնքել է մահկանացուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերար, հայտնի մեծահարուստ պարոն Գալուստ Կյուլպենկյանը։

Հանգուցյալը ծնվել է 1869 թ. Կեսարիայի (Թյուրքիա) Թալաս գյուղաքաղաքում, առևտրականի ընտանիքում։ Մասնագիտական իր կրթությունը ստանալով Լոնդոնում որպես նավթագետ-ինժեներ, նա շատ արագ բարձրանում է տնտեսական բազմաբարդ սանդուղքներով։ 1891—1892 թվականներին հանգուցյալը ճանապարհորդում է Կովկասում և զբաղվում նավթի հետազոտական աշխատանքներով։ Այդ նույն ժամանակ ֆրանսերեն լեզվով նա գրում է իր նշանավոր աշխատություններից մեկը՝ «Ապշերոնյան բերակզիին և ճանապարհորդություն Կովկասում» խորագրով, որը մեծ հետաքրքրություն է առաջացնում Եվրոպայում։ Որոշ ժամանակ նա աշխատում է Բաքվի նշանավոր նավթարդյունաբերող, ռուսական «նավթի թագավոր» հայազգի Մանթաշևի մոտ որպես խորհրդատու։ Նա այստեղ շատ շուտ ըմբռնում է, թե ի՛նչ հսկայական նշանակություն կարող է ունենալ ցանկ ոսկու շահագործումը։ Հանգուցյալի այդ ձգտմանը նպաստում է հոր մահից հետո կտակով իրեն թողնված շոշափելի մի հարստություն՝ մոտ 400.000.000 ֆրանկ։

Նավթարդյունաբերության ասպարեզում իր առաջին խոշոր ձեռնարկը նա սկսում է Իրաքում՝ կազմակերպելով Թյուրքական նավթային ընկերությունը (Turkish petroleum company)։ Նա այդ ընկերության նախաձեռնությամբ սկսում է Մուսուլի նավթահանքերի շահագործումը։ Նա կարողանում է իր ձեռքը կենտրոնացնել այն բոլոր արժեթղթերը, որոնք երբեմն պատկանում էին Թյուրքական ազգային բանկին, գերմանական բանկին և Ռոյալ Դաչ Շել միությանը։

1914 թվականին, Գալուստ Կյուլպենկյանը իրագործում է իր խոշոր ձեռնարկներից մեկը՝ Թյուրքական նավթային ընկերության բաժնեթղթերը հանձնում է Անգլո-Իրաքյան նավթային ընկերության և այդ ճանապարհով դառնում Մուսուլի նավթահանքերի սեփականատերը։ Նա ստանում է այդ ընկերության շահույթի հինգ տոկոսը։ Այդ հիմքով նա հսկայական հարստություն է դիզում և դառնում աշխարհի 17 ամենահարուստ մարդկանցից մեկը (Ռոկֆելերի, Մորգանի և մյուսների շարքում. այս թվում չի մտնում նույնիսկ Ռոտշիլդը)։ Կյուլպենկյանին անվանում են «5 տոկոսի պարոն», «նավթի արքա»։ Նա իր սեփական միջոցներով կառուցում է աշխարհի խոշորագույն նավթամուղը Մուսուլից մինչև Միջերկրական ծով։ Ըստ մամուլում եղած հաղորդագրությունների, մահանալուց հետո հանգուցյալ Կյուլպենկյանը թողել է 2 միլիարդ դոլարի հարստություն։

Լինելով մեծ գեղարվեստասեր, համաշխարհային առաջին պատերազմի նախորյակին նա Փարիզում կառուցում է իրեն համար մի պալատ և հավաքում նկարների մեծարժեք մի կոլեկցիա, որոնք հաճախ ցուցադրվում են Լուվրում և Բրիտանական թանգարանում։ Նա, փաստորեն, գեղարվեստական նկարների և թանգարանային արժեքների խոշորագույն կոլեկցիոներներից մեկն էր աշխարհում։

Կյուլպենկյանը և նրա բարեհամբավ ընտանիքը այլաոու բարերարություններ ունեն արտասահմանի հայկական շրջանում. նրանք են հիմնել Կոստանդնուպոլսի Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցի Կյուլպենկյան հարկաբաժինը, որն օժտված է բժշկական ամենաարդիական գործիքներով։ Նրանք են կառուցել Հալեպում (Սիրիա) Վերժին Կյուլպենկյան մայրանոցը ու հիանալի կահավորել։ Նրանք են նույնպես հիմնել Հալեպում Պողոս Կյուլպենկյանի անվան բարձրագույն նախակրթարանը՝ տարագիր հայորդիներին ուսում տալու համար, և այլ հաստատություններ, որոնք մեծ բարիք են եղել գտնված վայրերի տարաբախտ հայերի համար և՝ առողջապահական, և՝ դաստիարակչական տեսակետով։

Որպես Հայաստանյայց Առաքելական եկեղեցու զավակ, հանգուցյալն ունի բարերարություններ նաև հօգուտ հայոց եկեղեցիների. այսպես, նա է կառուցել Լոնդոնի (Անգլիա) հայոց Ս. Սարգիս եկեղեցին՝ ի հիշատակ իր հոր՝ Սարգիս Կյուլպենկյանի։ Նա է կառուցել Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանին կից, Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի Պատրիարք լուսահոգի Տ. Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի անունը հավերժացնող հոյակապորեն գեղակերտ Դուրյան մատենադարանը։

Ողբացյալ բարեբար պարոն Գալուստ Կյուլպենկյան

Հանգուցյալը հաճախ նվիրատվություններ է կատարել արտասահմանի հայերի թշվառությունները մեղմելու նպատակով. այսպես օրինակ, Կիլիկիայից Լիբանան ապաստանած տարագիր հայերին նյութապես օժանդակել է՝ դեպի Մուսուլ (Իրաքի նավթառատ շրջանը) կատարած ուղևորության ժամանակ։

Կարճ ժամանակով, հանրածանոթ Պողոս Նուպար փաշայի մահվանից հետո, նա ընտրվել է նախագահը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության՝ մի կազմակերպություն, որը բարերար դեր է կատարում արտասահմանի հայության չքավոր զանգվածների մշակութային ու ֆիզիկական կարիքները բավարարելու գործում։

Հանգուցյալը հիվանդության անկողնում իսկ անայլայլ պահեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ սիրալիր բարեկամությունը, որի համար դրել է երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. հայրենասեր Կաթողիկոսը։ Նա, ինչքան էլ բազմազբաղ լիներ և առօրյա աշխատանքով կլանված, չէր մոռանում շնորհավորել Ամենայն Հայոց հայրապետին ու Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ Քրիստոսի Ս. Մենդյան և Ս. Հարության տոների առթիվ։ Հոգելույս Հայրապետին խոստացել էր իր հարստությունից բաժին հանել նաև Ս. Էջմիածնին. ինչպես հեռագրական գործակալությունները ծանուցին նրա մահվան կապակցությամբ, նա հարգել է իր խոստումը։

Մեծանուն հանգուցյալի բարեմասնություններից մեկը եղել է այն, որ նա իր ընտանեկան հարկում պարտադրել է խոսել միայն մայրենի լեզվով՝ հայերեն։

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ կ-ապրի»։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ԱՏԵՓԱՆՅԱՆ



ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընդանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը 1954 թվականի ապրիլի 21-ի սրբատառ կոնդակով որոշել էր 1954 թվականի սեպտեմբերի 26-ին, Վարագա Ս. Խաչի տոնին, Մայր Աթոռում կատարել Սրբալույս Մեռոնի օրհնություն, սակայն անակնկալ մահը (9 մայիսի 1954 թ.) Հայրապետի այդ իղձը անկատար թողեց։

Նկատի ունենալով, որ առաջիկա կաթողիկոսական ընտրությունից և Ս. Օծումից հետո տեղի է ունենալու նաև Սրբալույս Մեռոնի օրհնություն, բարվոք համարեցինք տպագրության հանձնել մեր փոքրիկ աշխատությունը՝ «Սրբալույս Մեռոնի օրհնությունը» վերնագրով, նպատակ ունենալով բավարարել հայ հավատացյալների հոգևոր հետաքրքրությունը։

Հայ բարեպաշտ և հավատացյալ ժողովրդի սրտին մոտիկ, ամենանվիրական ու համաժողովրդական, ազգային-եկեղեցական մեծաշուք ու խորհրդավոր տոնակատարություններից մեկն է հանդիսացել միշտ էլ Սրբալույս Մեռոնի օրհնությունը։

Դարեր շարունակ, Ս. Գրիգոր Լուսավորչի օրերից մինչև այսօր, Սրբալույս Մեռոնի կաթսան դրվել է Երկնավոր Ճարտարապետի դուցմամբ հիմնված Միածնաէջ Տաճարի Ս. Սեղանի առաջ, բեմի վրա, և Ս. Լուսավորչի հաջորդ Ամենայն Հայոց Հայրապետը իր սրբատառ կոնդակներով հրավիրել է իր հավատացյալ հոտին՝ դիմել հանուրց Հայաստանյայց Մայր Աթոռը՝ հանդիսատես և առնակից լինելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարերով սրբագործված՝ Սրբալույս Մեռոնի մեծագույն և խորհրդավոր հանդեսի կատարմանը, որը տեղի է ունեցել միշտ էլ պատշաճ հանդիսությամբ, շքեղությամբ, հոգևոր մխիթարության սրբազան բավարարությամբ, իբր մեր նախնիքներից մեզ ավանդ մնացած անմոռանալի և համբուրելի նվիրականություն։

Եվ ամեն անգամ, Սրբալույս Մեռոնի օրհնության հոգեպարար հանդեսին ներկա լինելու բուռն ցանկությամբ, դեպի Ս. Էջմիածին՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարավոր ու պատմական կենտրոնը փութացել է հայ հավատացյալ ժողովուրդը հեռու թե մոտիկ մեր թեմերից, համբուրելու Սրբալույս Մեռոնի կաթսան, Լուսավորչի արժանավոր հաջորդի Ս. Աջը և իր լուման գցելու Մայր Աթոռի դանձանակի մեջ, որպեսզի միշտ պայծառ պլպլա Լուսավորչի կանթեղը հայ հավատքի երկնակամարի վրա։

Վիճակուս ենք, որ այս տարի ես մեր հավատացյալ ժողովուրդը կգա Սրբալույս Մեռոնի

օրհնության հանդեսին, նույն զգացմունքներով ու սրբազան խոկմունքով, կգա նաև համբուրելու Հայրենի սրբազան հողը և ողջագուրվելու Մայր Հայրենիքում ապրող իր հարազատների հետ։

ներկա Մայր Հայրենիքը՝ իր պատմական հուշարձաններով, որպես մագնիսական ուժ, կրերեն տարաբնակ և հեռաբնակ հայ ժողովրդի ներկայացուցիչներին ու կհամախմբեն պատմական Տաճարի շուրջը՝ Հայրենիքի կա-

Սրբալույս Մեռոնի կաթսան

«Մենք հավատում ենք,— ասում է Հանդուցյալ Գեորգ Զ. Մեծագործ Հայրապետը Սրբալույս Մեռոնի օրհնության առթիվ գրած իր սրբատառ կոնդակում,— որ մեր նախնյաց և մեր ներկա Սրբություն Սրբոցը՝ հայ քրիստոնյա մարդու Լուսո Տաճարը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր սրբություններով, և մեր

ղոտն առնելու, Հայրենի երկրի անցյալ և ներկա հուշարձանները տեսնելու, նորա ներկա կուլտուրական վերելքով հիանալու, նորա տնտեսական խոշոր հառաջխաղացմամբ ոգեվորվելու և իր կրոնական ծարավը հագեցնելու՝ համբուրելով իր սրբությունները ու՝ իր սրտին մոտիկ Սրբալույս Մեռոնի օրհնու-

թյունը տեսնելով՝ ոգեշնչվելու և՝ արձագանքելով իր նախնյաց սրտառուչ զգացմունքին՝ ձայնելու. «Եկայք շինեսցուք սուրբ դիսորանն յուսոյ»։

1926 թվականից ի վեր Մայր Աթոռում չի կատարվել Սրբալույս Մեռոնի օրհնություն։ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. հանդուցյալ Հայրապետը իր դահակալության առաջին իսկ օրերից մտադրել էր կատարել այդ հոգևոր միջոցառության և շնորհաշխության խորհուրդը, բայց միջազգային անհայտ պայմանները խանգարում էին վեհափառի այդ ցանկության կատարումը։

***

«Մեռոնս բառը հունարեն ծագում ունի (հունական ձևն է μύρον կամ μύρον) և նշանակում է բույսից հոսող հեղուկ՝ հյութ, և գործ ածվում է առհասարակ ձիթապտղի հյութի կամ յուղի այն տեսակի համար, որը կանգված է անուշահոտ համեմունքներով։

Կրոնների պատմությունից հայտնի է, որ ձիթենու յուղի՝ ձեթի իրև օծանելիք գործածությունն ու օրհնությունը ժողովուրդների հոգևոր կյանքում և կրոնական ըմբռնումների մեջ, շատ հին սովորություններից մեկն է։ Հատկապես հրեա ժողովրդի մոտ, Հին Կտակարանում, շատ մեծ տեղ էր հատկացված Իսրայելի ազգային-հոգևոր կյանքում յուղի օրհնության և գործածության։ Արդարև, «իւղով և խնկով և գինւով զուարճանայ սիրտս» (Առակք, ԻԸ 9)։

Ս. Գրքում օծման յուղը որպես նյութեղեն միջնորդ էր համարվում, որով աստվածային Հոգին և Շնորհը իջնում և ներգործում է մարդոց և իրերի վրա։ Այն կարծիքը գոյություն ուներ, որ յուղի օծումով մարդիկն ու իրերը նվիրական ու սուրբ են դառնում։ Այնպես որ, Հին Կտակարանում, շատ հին ժամանակներից, օծումն ուներ նվիրագործող նշանակություն, և ինչպես առարկաները, նույնպես նաև մարդիկ, որոնք նվիրված էին Եհովայի հոգևոր սպասավորության, օծվում էին ձիթենու յուղով։ «Խօսեցայ։ Տէր ընդ Մովսիսի և ասէ. Եւ դո՛ւ, առ քեզ խունկս անուշունս... և իւղ ձիթենեաց հիմնեսցես միով։ Եւ սրբացես զարն իւղ յօծումն սրբութեան, իւղ նիխեալ ըստ արուեստի իւղագործաց՝ իւղ օծումն սրբութեան լինիցի... Եւ իւղ յօծումն օծուցեան սրբոյ եղիցի։ Ձեզ յաղագս ձեր» (Ելք. Լ 22—31)։ Այսպես՝ օծված էին Մովսեսի վկայության խորանը իր բոլոր կահավորությամբ, Սրբության Սեղանով և Ավազանով. «Եւ օծցես... դիսորան վկայութեանն... և սրբեսցես... և եղիցի Սրբութիւն Սրբութեանց»։ Օծմամբ էր ընդունում նաև իր սուրբ կոչումը Սեղանին սպասավորող քահանան։ Օծումով էին իշխանություն ստանում նաև Իսրայելի բաղաքական-կրոնական ղեկավարները՝ թագավորները ու մարգարեները։ «Եւ ա՛ռ Սամուէլ զեղջերն իւղոյ, և օծ (զԴաւիթ) ի մէջ եղբարց իւրոց, և խաղաց Հոգի Տեառն ի վերայ Դաւթի յօրէ յայնմանէ» (Ա Թագ., ԺՁ 13)։

***

Հայ հավատացյալ ժողովրդի կրոնական զգացմունքների համար էլ Սրբալույս Մեռոնը, որպես նվիրական ու խորհրդավոր սրբություն, սերտորեն կապված է քրիստոնեական պաշտամունքի հետ։ Քրիստոնեական ըմբռնումով և հասկացողությամբ ևս, ամեն մի իր

Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը

և անձ՝ ա՛յն ժամանակ է միայն սրբազան ուժ ստանում, երբ Սրբալույս Մեռոնի գրոշմը կա վրան։ «Եւ դուք օծութիւն ունիք ի սրբոյն... և օծութիւնն՝ որ ընկալաք ի նմանէ, բնակեսցէ ի ձեզ» (Ա Յովհ., Բ 20, 27)։ Հայ քրիստոնյան խալ է հանում երեսը, եկեղեցու, Ս. Խորանի, Ս. Ավազանի և սրբերի նկարների առաջ, որովհետև Սրբալույս Մեռոնով սրբագործված են, համբուրում է եկեղեցու պաշտոնյայի աջը՝ որովհետև օծյալ է։

Օծման համար սրբազան յուղ գործածելու սովորությունը շատ հին էր Քրիստոնեական Ընդհանուր եկեղեցու կյանքում, և որը առաջ է եկել Դրոշմի խորհրդի հաստատությունից։ Առաքելական դարում, մկրտվածներին յուղով

օծում կամ որոշվում էին, իբրև Ս. Հոգին ընդունելու և նոր, վերածնված մարդ դառնալու նշան։ Առաքելական և սուրբ Հայրերի թղթերում շատ վկայություններ կան հավատացյալների օծման մասին։ «Սրբազանին աստուածածնելութեան կատարողական պարդև և շնորհք՝ իւղոյն աստուածայնով կատարմամբ կատարին» (Դիոնիսիոս Արիսպագացի)։ Սակայն Հայաստանյայց Եկեղեցին Սրբազան Յուղը գործ է ածում ոչ միայն Դրոշմի, այլ նաև Ձեռնադրության ժամանակ։ Օրթոդոքս և արևելյան եկեղեցիները (ասորի, կոպտ) բոլոր եկեղեցական պաշտոնները բաշխում են պարզ ձեռնադրությամբ և աղոթքով։ Կաթոլիկ Եկեղեցին օծում է միայն քահանայապետի և եպիսկոպոսների ձեռքերը. իսկ մեր Եկեղեցին՝ ձեռնադրության ժամանակ օծում է քահանայի ճակատը, ձեռքերը, իբրև սրբազնագործ պաշտոնյայի, որ սուրբ և անմահ պատարագ է մատուցելու, ինչպես օծվում էին Հին Ուխտի քահանաները։ Օծվում է նաև եպիսկոպոսը, որ հաջորդ է առաքյալների և հովվում է Քրիստոսի բանավոր հոտը, ինչպես օծվում էին Հին Կտակարանի քահանայապետները։

Հայ Եկեղեցուն հատուկ է նաև հայրապետական մեծահանդես օծումը, որը տեղի է ունենում Սրբալույս Մեռոնի օծյալի գագաթի վրա կաթեցնելով, իբրև ընդհանրական Գլխի Հայ Եկեղեցու։

Մեզ մոտ Սրբալույս մեռոնով օծվում են նաև եկեղեցիները, Սեղանի Վեմքարն ու Ս. Ավազանը, խաչերն ու պատկերները։

Քրիստոնեական ո՛չ մի եկեղեցու կյանքում Սրբազան Յուղը կամ Սրբալույս Մեռոնը որպես նվիրագործող ու խորհրդավոր սրբություն, նվիրականություն, այնքան մեծ արժեք, հոգևոր նշանակություն, ընդհանրացած ժողովրդայնություն չի ունեցել, որքան հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կյանքում։

Սրբալույս Մեռոնը հայ ազգային-եկեղեցական գիտակցության և զգացմունքների համար միշտ էլ եղել է և է հայ ժողովրդի հոգևոր միասնականության և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու անխախտելի միության նվիրական խորհրդանշանը, հոգևոր շաղախը։ «Սրբալույս Մեռոնը հանդիսանում է նաև ամենասերտ ու անխզելի կոդը, որով ի սփյուռս աշխարհի տարածված հայությունը կապված է իր քրիստոնեական ծագման վայրի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ» (Գեորգ Զ.)։

Լուսավորչի օրերից մինչև այսօր հայ ժողովուրդը Սրբալույս Մեռոնի կաթսայի մեջ իր ապագա կյանքի, հավերժության գաղափարն է դրել, որովհետև Սրբալույս Մեռոնը «Սինվոլն է Հայ Եկեղեցու միության. դա նշանակում է, որ մենք ամենքս այդ Եկեղեցու զավակներն ենք։ Աշխարհի որ անկյուններում էլ լինենք, մենք միևնույն զավակներն ենք մեր Առաքելական Ս. Եկեղեցու» (Գարեգին Ա. Կաթողիկոս)։

Այս իսկ պատճառով, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սրբալույս Մեռոնի օրհնությունը վերապահված է հայրապետական բարձրագույն իշխանության։ Շատ վաղուց, Սրբալույս Մեռոնի մեջ մարմնացող շնորհաբաշխության իրավունքը, իբրև հոգևոր կոչման բարձրագույն աստիճան, կենտրոնացել է հանձին հայրապետական իշխանության։ Ըստ եկեղեցական օրենքի, «պարտ է արքային զՍուրբ Միւռոնն, այսինքն դիւղն անուշահոտութեան, հայրապետին օրհնել» (Հովհան Օձնեցի)։

Ահա թե ինչու մեր Եկեղեցին բացառիկ շքով և հանդիսությամբ է կատարում Սրբալույս Մեռոնի օրհնությունը։ Սրբալույս Մեռոնի օրհնության հանդեսն ու ծիսական-արարողական ավանդական կարգը լրիվ ու պատշաճ շուքով կատարելու համար, պարտադիր է Հայ Եկեղեցու բոլոր եպիսկոպոսների մասնակցությունը հանդեսին։ Հայ հավատացյալ ժողովրդի խորունկ հավատքով, ամեն անգամ Սրբալույս Մեռոն օրհնելիս Մայր Աթոռում, Ս. Հոգին աղավնակերպ իջնում է «ի Հայաստան աշխարհս», իբր նոր շնորհաբաշխություն։ «Քում ամենիմաստ էութեանդ խոստովանիմք զամենայն պարդևս ի մեզ ծաղկեալ և աճեցեալ, որ ձեռնադրես առաքեալս, լցուցանես մարգարէս, ուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես համերս և բանաս զփակեալ սկսանջս խլիցս» (Նարեկացի)։

Ճշմարտության, արդարության, խաղաղության, սիրո աստվածային Հոգին է առաջնորդել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն դարերի միջով, որպես «հրեղեն սիւն յանապատի»։

Այդ Ս. Հոգով է ապրել հայ ժողովուրդը և այդ աստվածային Ս. Հոգու ներգործությամբ անկորուստ և անաղարտ է պահել իր ազգային-եկեղեցական ինքնությունն ու արժանապատվությունը, իր հավատքի ուղղությունն ու ճշմարտությունը, Հայրենիքի սերը, մարդասիրության վեհ գաղափարները։

Ահա թե ինչու Լուսավորչի օրերից մինչև այսօր, հայ հավատացյալ ժողովուրդը, մեծագույն հավատքով ու երկյուղածությամբ, ներկա է եղել ամեն անգամ Սրբալույս Մեռոնի օրհնության, և Մեռոնի կաթսայի առաջ ծնրադիր՝ հաղորդակցել է իր արքաղան նախնիքների հավատքի, հայրենասիրության, մարդասիրության հետ։

(Շարունակելի)

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԲԱՐՁՐԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԼՈՆԴՈՆԻ ՄԵՋ

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՎՈ ՊԵՏԻՆ ՀԵՏ

Երուսաղեմի Պատրիարքական տեղապահ բարձրապատիվ Տ. Եղիշէ սրբազան արքեպիսկոպոս Տերտերյանը հունիս 15-ի առտվան ժամը 10-ին ժամանեց Լոնդոնի օդակայանը, ընկերակցությամբ Կիլիկիո Կաթողիկոսարանի դիվանապետ հոգեշնորհ Տ. Շահէ վարդապետ Աճեմյանի, որ կընկերանա Նորին Սրբազնության Եվրոպայի իր շրջապտույտին ընթացքին։

Օդակայանին մեջ Նորին Սրբազնությունը ընդունելու եկած էին Լոնդոնի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պսակ վարդապետ Թումայանը, Քենտրբերիի արքեպիսկոպոսին կողմե երկու եկեղեցականներ, ինչպես նաև հունաց և ռուսաց եկեղեցիներու ներկայացուցիչները։ Դիմավորելու եկած էին նույնպես եկեղեցվո խնամակալության կողմե պարոն Ն. Էքսերճյանը, իսկ համայնական խորհուրդի կողմե պ. պ. Եդվարդ Պենլյանը, Լեոն Ապաճյանը, Արշակ Սաֆրաստյանը, Գրիգոր Կյուլպենկյանը, դոկտ. Կորկոտյանը, Արտաշես Խաչատուրյանը և ուրիշներ։

Օդակայանեն ինքնաշարժները ուղղվեցան Ս. Սարգիս եկեղեցին, ուր Տեղապահ սրբազանը ընդունվեցավ «Հրաշափառով», իսկ երիցատան մեջ դիմավորվեցավ պարոն Ս. Հակոբյանի կողմե, որ իրեն բարի գալուստ մաղթեց։

Բոլոր ներկաները հյուրասիրվեցան թեյով։ Սրբազան հայրը հանուն Երուսաղեմի Ս. Աթոռին իր օրհնությունները տվավ Լոնդոնի հայ գաղութին և իր շնորհակալությունը հայտնեց ներկաներուն։

Շնորհիվ Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցվո հովիվ և սրբազան հոր եղբայրակից հոգեշնորհ Տ. Պսակ վարդապետի իմաստուն կարգադրություններուն և նախորոք պատրաստված երկու շարաթներ լեցնող ծրագրի մը՝ նույն օրը իրիկվան ժամը 8-ին, սրբազան հայրը սեղանակից եղավ Քենտրբերիի արքեպիսկոպոսին, Գերմանիո Լութերականաց արքեպիսկոպոսին, հին կաթոլիկներու Ուտրեխտի արքեպիսկոպոսին և բարձրաստիճան եկեղեցական ու աշխարհական անձնավորություններու, որոնց թիվը 120-ի կհասներ։

Ընթրիքի միջոցին, Նորին Սրբազնությունը ներկայացվեցավ սեղանակիցներուն Սրբ Ռոնալդ Ստորսի միջոցով, նախկին կառավարիչը Երուսաղեմի, որ, ի միջի այլոց, ըսավ թե ինք կճանչնար Երուսաղեմի վանքը և Ս. Հակոբա գեղեցիկ եկեղեցին, որ հիացում կառթե բոլորին։ Ան ավելցուց, թե Հայոց եկեղեցին Երուսաղեմի մեջ լատինաց և հունաց հավասար իրավունքներ ունի Ս. Տեղյաց մեջ և թե իբրև կրոնական հաստատություն պատիվ կրնա բերել աշխարհի ամենեն մեծ պետության անգամ։ Ըսավ նույնպես, թե ինք Երուսաղեմի կառավարիչ եղած ժամանակ, սրբազանը տակավին ուսանող մըն էր և որ այժմ կանչված է վարելու բազմապահանջ հաստատության մը գործերը, մանավանդ այս դժվարին օրերուն։

Ընթրիքեն հետո, Լամբետ Պալասի մատենադարանին մեջ ի պատիվ հյուրերուն երգվեցան զանազան հին գործիքներու վրա միջնադարյան կեղտական երաժշտության մեղեդիներ։

Ժամը 10.30-ին, բոլոր հյուրերը հրաժեշտ առնելով Անգլիկան Եկեղեցվո Պետ Քենտրբերիի արքեպիսկոպոսեն՝ մեկնեցան։

ՆԻԿԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՀՐԱՎԵՐԸ

Հունիս 17-ին, ուրբաթ օր, բարձրապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս հրավիրված էր ներկա ըլլալու Անգլիկան Եկեղեցվո արտաքին հարաբերությանց խորհուրդի նիստին, որուն կնախագահեր Ուեսթմինիստրի գահերեց դոկտ. Դոն։

ՀԱՅԿ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍԱ-998

ժողովը հետաքրքրվեցավ, այլ հարցերու կարգին, գլխավորապես Ս. Հարութիւնեան տաճարի նորոգութեան և Ս. Տեղեաց գոյավիճակի հարցերով, ինչպես նաև Հայոց Պատրիարքարանի արաբներուն և հրեաներուն հետ ունեցած հարաբերութեանց խնդրով։

Տեղապահ սրբազանը գոհացում տվավ ժողովի հետաքրքրութեան՝ վերոհիշեալ հարցերու նկատմամբ, և պատասխանեց ժողովի անդամներուն ըրած մասնավոր հարցումներուն։

Հավարտ ժողովին, հաստատութեան բարտուղարը առաջնորդեց սրբազանը, իր հետևորդներուն հետ միասին, դեպի շենքին կարևոր մասերը և ցույց տվավ անոնց պատմական այն սրահները, ուր Բրիտանական Խորհրդարանը իր ժողովները գումարեց Համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքին։

Այնուհետև, ընդունելութեան մեծ սրահին մեջ, Նիկիական ակումբը, որ մասնավոր կազմակերպութիւն մըն է, ստեղծված՝ սերտ հարաբերութիւն պահելու համար Նիկիո հանգանակը ընդունող եկեղեցիներու միջև և որուն կնախագահե Անգլիկան Եկեղեցվո Պետը և կատենապետե Սըր Ռոնալդ Ստորս, նախկին կառավարիչ Երուսաղեմի, մասնավոր թեյասեղանով մը պատվեց Տեղապահ սրբազանը։ Թեյասեղանին հրավիրված էին նաև Լոնդոնի հայ գաղութին ներկայացուցիչները։

Սըր Ռոնալդ բարեգալուստի խոսքերով ողջունեց Տեղապահ սրբազանը, ծանոթացնելով ներկաներուն Երուսաղեմի Պատրիարքարանը և անոր կատարած կարևոր դերը քրիստոնյա այլ համայնքներու շարքին։ Ան շատ բարձր գնահատեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի անցյալն ու ներկան, մաղթեց, որ բարձրապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս կարող ըլլա հաղթահարել ներկա դժվարութեանց՝ պահելու համար Պատրիարքարանը իր դարավոր դիրքին վրա։

Տեղապահ սրբազանը շնորհակալութեան խոսքերով պատասխանեց Սըր Ռոնալդ Ստորսի համակրալից արտահայտութիւններուն, և ավելցուց, թե հոն, ուր կա սեր և եղբայրական զգացում՝ հոն ամեն բան կարելի է։

Թեյասեղանի ընթացքին, Սըր Ռոնալդ ներկաները ծանոթացուց Տեղապահ սրբազանին։ Անոնց մեջ կնշմարվեին Անգլիկան եկեղեցվո եպիսկոպոսներ, բարձրաստիճան վարդապետներ, հունաց արքեպիսկոպոսը, Ռուս եկեղեցվո ներկայացուցիչներ և այլ օտար կամ անգլիացի երևելի անձնավորութիւններ։

Ի ԽՆԴԻՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹՅԱՆ

Հունիսի 18-ին, շաբաթ, կեսօրե ետք ժամը 3.30-ին, Տեղապահ սրբազանը հրավիրված էր Անգլիկան եկեղեցիներու մերձեցումը պատրաստելու կոչված միութեան կողմե, որ կկոչվի Fellowship of St. Alban and St. Sergius։

Հիշյալ միութիւնը պատրաստած էր թեյասեղան մը, որուն հրավիրված էին, բացի միութեան վարչութեան անդամներեն, հունաց արքեպիսկոպոս Աթենագորաս և իր հետևորդները, ինչպես նաև Ռուս եկեղեցվո վարդապետներ։

Սիրալիր և մտերիմ մթնոլորտի մը մեջ, սրբազան հայրը հայտնեց իր շնորհակալութիւնը՝ իրեն ի պատիվ ցուցաբերված հարգանքին համար և մաղթեց, որ քրիստոնյա եկեղեցիները իրարու մոտեցնելու ամեն ջանքերուն հաջողութեամբ պակվի։

Սույն ընդունելութիւնը տևեց մոտ մեկ ու կես ժամ, որմե ետք սրբազանը և իր հետևորդները հրաժեշտ առին։

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԵՋ

Հունիսի 19-ը, կիրակի օր, բացառիկ օր մը եղավ Լոնդոնի հայ գաղութին համար։ Շնորհիվ հոգեշնորհ Տ. Պսակ վարդապետի կարգադրութեանց, Երուսաղեմի Պատրիարքական տեղապահ սրբազանը պատարագեց Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցիին մեջ։ Բացի Լոնդոնի հայ գաղութեն, սուրբ պատարագին ներկա գտնվեցան Անգլիկան, Հույն և Ռուս եկեղեցիներու ներկայացուցիչները։ Անգլիկան եկեղեցվո կողմե եկած էր Բետֆորդի եպիսկոպոս Մեկ Ինիս, իսկ Հույն և Ռուս եկեղեցիներու կողմե երկու վարդապետներ։ Հոն էին նաև Հորդանանի ուսանող դինվորականներեն և Հորդանանի հյուպատոսարանեն երկու ներկայացուցիչներ։

Բոլոր եկեղեցականները, հայ և օտար զգեստավորվեցան Լոնդոնի հոգևոր հովիվի պաշտոնատան մեջ և թափորով առաջնորդվեցան եկեղեցին։

Պսակ վարդապետի ջանքերուն շնորհիվ կազմված դպրաց դասը շատ վարժ և զգայուն կերպով երգեց Եկմալյանի պատարագը, առաջնորդութեամբ հայր սուրբին։ Ս. Սեղանին կսպասարկեր Շահե վարդապետը։

Եկեղեցին կհորդեր հավատացյալներու բազմութեամբ, որոնց մեծ մասը դուրսեն

կհետևեր արարողության։ Սրբազանը քարոզեց «Հայր մերն» առաջ, բնական ունենալով Հին Կտակարանեն «Մորենին վառեալ որ ո՛չ այրէր»։ Իր խոսքի կախարդիչ հմայքով սրբազանը ներկայացուց Հայոց եկեղեցվո դերը, ինչպես անցյալի, այնպես ալ մեր օրերուն, խոսեցավ գաղութահայության ներկա կացության մասին և շեշտեց եկեղեցվո կատարելիք մեծ գործը, արտասահմանի ցրված հայության մասերը իրարու բերող՝ իրրև մաղնիս կախարդական։

Սրբազան հայրը մասնավոր հիշատակության արժանացուց Ս. Սարգիս եկեղեցվո և նացած է մեծ «երանիէին. «երանի՛ եկեղեցի շինողաց...»։ Տեղապահ սրբազանը ավելցուց, թե շնորհիվ վսեմաշուք Գալուստ Կյուլպենկյանի, Ս. Սարգիս եկեղեցին եղած է Լոնդոնի հայության հոգևոր կեդրոնը, ուր կալալա միշտ հայ հոգիին կանթեղը։

«Տէր ողորմեացէն» առաջ, Լոնդոնի հոգևոր հովիվ Պսակ վարդապետը խնդրեց ներկաներեն, որ աղոթեն մասնավորաբար եկեղեցվո բարերարի առողջության համար։

Հավարտ սուրբ պատարագի, ներկաները, հայ և օտար, մոտեցան սրբազան հոր և ծանոթացան անոր հետ։

Ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը Լոնդոնում, զգեստավորված, առաջնորդվում է Ս. Սարգիս եկեղեցին

Ս. Երուսաղեմի Պատրիարքարանի բարերար վսեմաշուք Գալուստ Կյուլպենկյանը, հիշելով այս առթիվ երախտագետ սերունդներու ձայնը արձագանքող մեր դարավոր հիշատակարանները, ուր եկեղեցի շինողը արժանացած է մեծ «երանիէին. «երանի՛ եկեղեցի շինողաց...»։ Տեղապահ սրբազանը ավելցուց, թե շնորհիվ վսեմաշուք Գալուստ Կյուլպենկյանի, Ս. Սարգիս եկեղեցին եղած է Լոնդոնի հայության հոգևոր կեդրոնը, ուր կալալա միշտ հայ հոգիին կանթեղը։

«Տէր ողորմեացէն» առաջ, Լոնդոնի հոգևոր հովիվ Պսակ վարդապետը խնդրեց ներկաներեն, որ աղոթեն մասնավորաբար եկեղեցվո բարերարի առողջության համար։

Հավարտ սուրբ պատարագի, ներկաները, հայ և օտար, մոտեցան սրբազան հոր և ծանոթացան անոր հետ։

Բոլորի դեմքին վրա կցոլար գոհունակությունը՝ ներկա գտնված ըլլալու հայկական հոգեմայլ պատարագին, այնքա՜ն նրբությամբ երգված, և ունկնդրած ըլլալու հոգեշունչ խոսքերը բարձրապատիվ Տ. Եղիշե սրբազանին։

ՄԵՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԵՆՏԲԵՐԻԻ ՄԵՋ

Հունիսի 20-ին, երկուշաբթի առավոտ, գերապատիվ Ուադամս վարդապետ, Անգլիկան եկեղեցվո արտաքին հարաբերությանց դիվանապետ, բարձրապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և իր հետևորդները առաջնորդեց Լոնդոնեն Քենտրբերի, ուր կգտնվի Անգլիկան եկեղեցվո Պետին Աթոռը։

Երկու ժամվան ճամբորդությենե մը ետք, սրբազան հայրը հասավ Քենտրբերիի հրո-

շանավոր եկեղեցին, ուր ընդունվեցավ գահերեցին՝ գերապատիվ Ջոնսոնի կողմէ և առաջնորդվեցավ մեծ սրահը։

Գերապատիվ գահերեցը մասնավոր սեղան տված էր իր հյուրերուն և Քենտրբերիի գլխավոր ներկայացուցիչներուն համար։

Ճաշը տեղի ունեցավ շատ հաճելի մթնոլորտի մը մեջ՝ ստեղծված գերապատիվ Ջոնսոնի սրամտություններով և շատ հաճելի խոսակցությամբ։

Կեսօրե ետք, մասնավոր կարգադրությամբ մը սրբազան հայրը մասնակցեցավ երեկոյան ժամերգության։

Քենտրբերիի ժողովուրդը, որուն հայտարարություն եղած էր, թե Երուսաղեմի Տեղապահին ի պատիվ երեկոյան արարողությունը պիտի կատարվեր հատուկ հանդիսությամբ, փութացած էր լեցնել տաճարը։

Այս առաջին անգամն էր, որ հայ բարձրաստիճան եկեղեցականի մը առիթ կտրվեր նախագահել մեծ թափորին և հայերեն բառերը արձագանքել այդ հսկայական տաճարի կամարներուն տակ։

Քենտրբերիի երիցապետը, քահանաները և սարկավագները, ինչպես նաև Տեղապահ սրբազանը զգեստավորվեցան տաճարի ավանդատան մեջ և դպիրներու առաջնորդությամբ հառաջացան դեպի դասը։ Նուրբառով, եմիփորոնով և դավազանով, սրբազանը բարձրացավ դեպի այն մասնավոր տեղը, որ կհատկացվի Քենտրբերիի արքեպիսկոպոսին։ Երիցապետը և արարողության մասնակցող եկեղեցականները խոնարհեցան սրբազան հոր առջև և գերապատիվ Ջոնսոն, իր երիցապետի հանդիսավոր զգեստները հագած, արտասանեց բարեգալուստի հետևյալ խոսքերը.

«Ձերդ ամենապատվություն.

«Ինձի համար մեծ հաճույք մըն է ողջունել Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչը, որ մին է Հայ Եկեղեցվո գլխավոր առաջնորդներեն։ Խոսելով հանուն երիցապետին և եկեղեցականության Քենտրբերիի, որ Մայր Եկեղեցին է անգլիկան համայնքին, ես ինքդինքս մասնավորաբար երջանիկ կնկատեմ ողջունելու Ձեր ներկայությունը՝ իբրև հարգելի ներկայացուցիչը քրիստոնեության կեդրոնին՝ Սուրբ Քաղաքին։ Ձերդ ամենապատվության դիրքը, իբրև մին Ս. Քաղաքի մեջ իրավունք ունեցող ներկայացուցիչներուն՝ ծանոթ է մասնավորաբար Ձեր բարեկամական հարաբերությամբ Ս. Քաղաքի Անգլիկան եկեղեցիին հետ, և ասիկա մեծագույն ուրախություններեն մին է մեզի բոլորիս համար։

«1948-են ի վեր, Դուք և Երուսաղեմի հայ միաբանությունը դիմագրավեցիք բազմաթիվ դժվարություններ։ Ս. Երկրին աղետը, անոր հետևանքով ստեղծված տնտեսական դժվարությունները և ընդհանուր ու Ձեր գաղթականներու կացությունը՝ Ձեզ մատնեցին լուրջ դժվարություններու։ Սակայն հիացումով լսած ենք Ձեր ի գործ դրած ճիգերուն մասին, տեղավորելու համար զանոնք բոլորը և հայթայթելու բոլորին՝ կարելի նպաստ, արտասահմանի Ձեր հայերու ըրած օժանդակություններուն շնորհիվ։ Եվ կմաղթենք Ձեզի ամեն հաջողություն՝ Ձեր այս ձեռնարկներուն մեջ։

«Մեծ հաճույք մըն է մեզի համար Ձեզ ունենալ այս տաճարին մեջ, մեզի հետ, և կհուսանք, որ երբ կվերադառնաք Ձեր սիրելի Ս. Հակոբա վանքը, կառուցված Ս. Քաղաքի սրտին վրա, Ձեզի հետ պիտի տանիք մեր եղբայրական և սրտագին ողջույնները՝ բոլոր անոնց, որոնք առանձնաշնորհումը ունին ծառայելու այդ սրբազան վայրերուն մեջ։ Այս առիթով, Ձեզի կհայտնեմ իմ անձնական ուրախությունը՝ ինձի եկած Հայ մեծ եկեղեցիին, զոր այնքան լավ կճանչնամ, Ձեր Մայր Հայրենիքին և Ձեր հին ու գեղեցիկ Էջմիածնի մայրավանքին։

«Ընդունեցեք մեր սրտագին աղոթքները Երուսաղեմի խաղաղության համար, հիշելով սաղմոսերգուին բառերը Երուսաղեմի վերաբերմամբ. «Երանի՜ անոնց, որ կսիրեն քեզ»։ Կաղոթենք խաղաղության և բարօրության համար բոլոր անոնց, որոնք կպահեն Ս. Տեղերը, մասնավորաբար Ձեզի համար, իմ շատ սիրելի սրբազանս, և Ձեր կողմէ հովվրված հոտին համար։»

Երբ Քենտրբերիի ծերունազարդ երիցապետը կարտասաներ իր ճառին այս վերջին խոսքերը՝ իր աչքերուն մեջ արցունքներ կային։ Նո՛ւյն յուզումով երիցապետին պատասխանեց սրբազանը, քիչ անգամ իրմե լսված հուզյալ պերճախոսությամբ մը։

Տաճարը լեցնող բազմությունը ոտքի վրա կանգնած ունկնդրեց սրբազան հոր խոսքերը, որոնք մաս առ մաս կթարգմանվեին անգլիերենի Տ. Պսակ վարդապետի կողմե։

Կես ժամ տևող արարողությենեն ետք, դպիրները քառաձայն երգեցին ուրախության շարական մը, ի պատիվ Տեղապահ սրբազանին, հիշատակելով իր անունը երգին մեջ։

Արարողությենեն ետք, սրբազան հայրը հանդիսավոր թափորով առաջնորդվեցավ ավանդատուն, ուր օրհնեց դպիրները և խրոնըված ժողովուրդը։ Հատկանշական պարագա մը կուզենք հիշել այս առիթով. այնքան գրավվեցան սրբազանի անձեն, որ իրենց օտոգրաֆները ներկայացուցին անոր, որ գրի անոնց մեջ։

Հետ միջօրեի թեյի ընթացքին, երիցապետը իր հեղինակած գիրքերը նվիրեց սրբազան հոր, ստորագրել տվավ Արքեպիսկոպոսարանի մատյանը, և ապա, շատ սիրալիր ու տաք մթնոլորտի մը մեջ՝ Տեղապահ սրբազանը հրաժեշտ առավ։

***

Հունիսի 21-ին, երեքշաբթի իրիկուն, Լոնդոնի հայոց համայնական խորհուրդը ընթրիքի հրավիրած էր Տեղապահ սրբազանը Դր Վերե պանդոկին մեջ։ Ներկա էին Լոնդոնի հայ գաղութին գլխավոր ազգայինները։ Անոնցմե շատեր խոսք առին և հայտնեցին իրենց հարգանքի և ուրախության զգացումները՝ բարձրապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոսին։

***

Հունիսի 22-ին, չորեքշաբթի կեսօրե ետք. տեղապահ սրբազանը ներկա գտնվեցավ Երուսաղեմի և Արևելքի Առաքելության տարեկան հավաքույթին, որուն ընթացքին սույն կազմակերպության ղեկավարները ներկայացուցին իրենց տեղեկագիրները։

Ժողովին կնախագահեր Լոնդոնի եպիսկոպոսը։ Ներկա էր և խոսք առավ նաև Երուսաղեմի անգլիկան եպիսկոպոսը, որ ներկայացուց Անգլիական Եկեղեցվո կատարած աշխատանքը Միջին Արևելքի մեջ։

Երկու եպիսկոպոսներն ալ մասնավոր գոհունակությամբ վեր առին Տ. Եղիշե սրբազանի ներկայությունը իրենց մեջ, և հայտնեցին իրենց եղբայրական զգացումները հանդեպ Հայոց Եկեղեցիին և Երուսաղեմի Պատրիարքարանին։

***

Նույն օրը, դիշերը, Տեղապահ սրբազանը և իր հետևորդները ընթրիքի հրավիրված էին Լոնդոնի բարձրագույն ակումբը, Athaeneum Club, որ ժամադրավայրն է Լոնդոնի բաղաքական, կրոնական և տնտեսական շրջանակներու ամենեն ազդեցիկ անձնավորություններու։ Սրբազան հայրը հոգեշնորհ Տ. Պսակ և Տ. Շահե վարդապետներուն հետ սեղան նստավ Արտաքին գործոց նախարարության Միջին և Մերձավոր Արևելքի գործերու վարիչներուն հետ։ Խոսակցության գլխավոր նյութը եղավ Ս. Հարության տաճարի նորոգության հարցը, որուն մասին սրբազան հայրը տվավ անհրաժեշտ լուսաբանությունները։

ԲԱՑԱՌԻԿ ՊԱՏԻՎՆԵՐ ԼՈՆԴՈՆԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԵՋ

Հունիսի 24-ին, կեսօրի ետք ժամը 3-ին, Լոնդոնի Ս. Պողոս Մայր եկեղեցի երկու երեցներ եկան հայոց եկեղեցին՝ առաջնորդելու համար Եղիշե սրբազանը դեպի իրենց եկեղեցին։ Առաջին անգամն էր, որ հայ բարձրաստիճան եկեղեցական մը պիտի մասնակցեր Լոնդոնի Մայր Տաճարի արարողությանց և հայերեն աղոթք պիտի արտասաներ այնտեղ։

Լոնդոնի Ս. Պողոս Մայր եկեղեցին կգտնվի մայրաքաղաքին կեդրոնը, Տրաֆալգար Սկվերի մոտ, և բրիտանական մայրաքաղաքի կարևորագույն շենքերեն մին է։ Հսկայական տաճար մըն է ան, որուն գմբեթը կհիշեցնե Հռոմի Ս. Պետրոս եկեղեցվո հռչակավոր գմբեթը։

Այս հռչակավոր տաճարի աստիճաններեն բարձրացած ժամանակ, սրբազան հայրը դիմավորվեցավ եկեղեցվո գահերեցին կողմե և առաջնորդվեցավ դեպի ներս։ Եկեղեցվո գահերեցը ցույց տվավ սրբազան հոր տաճարին գլխավոր մասերը, հիշատակարանները, դամբարանները և ներքնամասը, յուրաքանչյուր առթիվ տալով անհրաժեշտ բացատրություններ։

Ժամը 4-ին, սրբազան հայրը զգեստավորվեցավ ավանդատան մեջ և շուրջառով, եմիփորոնով ու գավազանով նախագահեց մասնավոր թափորին։ Դասին մեջ, սրբազան հոր առաջարկվեցավ եպիսկոպոսի աթոռը, ուրկե հետևեցավ ան երեկոյան ժամերգության։

Այս բացառիկ առթիվ, եկեղեցվո վարդապետներեն մին արտասանեց մասնավոր քարոզ մը, ուր հայտնեց գահերեցին և եկեղեցվո պաշտոնյաներուն զգացած պատիվը՝ Հայոց դարավոր եկեղեցվո Ս. Տեղյաց սպասարկող բարձրաստիճան եկեղեցականի այս այցելության առթիվ։

Հավարտ արարողության, սրբազան հայրը հրավիրվեցավ Ս. Սեղան և այնտեղեն իր առջև ծնրադրած գահերեցը ու եկեղեցականները օրհնեց հայերեն աղոթքով։

Բազմաթիվ հայեր, որոնք խառնված էին ներկաներու բազմության, խոր հուզումով մը համակվեցան ի տես այս բացառիկ պատիվին, որուն կարժանանար հայ եկեղեցական մը և ի լուր հայոց հին լեզվի խնկաբույր աղոթքին, որ կբարձրանար բրիտանական մայրաքաղաքի Մայր Տաճարի երկնասլաց կամարներուն տակ։

Տեղապահ սրբազանի Լոնդոնի մեջ անցուցած օրերեն՝ ամենեն ավելի հիշատակելիներեն մին եղավ այս։

(«Թեյրութ», «ՁԱՐԹՈՆՔ» օրաթերթ, 9, 10 և 12 Հուլիսի 1955 թ.)

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՆ ՍՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆԻ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Նյու-Յորքում, 1955 թվականի մայիսի 15-ին, Թեմական խորհրդի և Թեմական պատգամավորական համագումարի որոշումով, Կենտրոնական հանձնախմբի նախաձեռնությամբ, պատշաճ հանդիսությամբ և արժանավայել շքով նշվեց Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմի նախկին առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի կուսակրոն քահանայության և ազգային-կրթական գործունեության 25-ամյա հոբելյանին նվիրված եզրափակիչ երեկույթը։

Մայիսի 15-ին Նյու-Յորքը հյուրանոցի հաշարանն էին հավաքվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներ՝ Ամերիկայի Արևելյան Թեմի բարեխնամ առաջնորդ գերապատիվ Տ. Մամբրե արքեպիսկոպոսի գլխավորությամբ, հայ մամուլի, ազգային մարմինների, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, հարանվանությունների ներկայացուցիչներ և անհատ համակիրների մի մեծ խումբ, մոտ 500 հոգի, սրտագին ողջունելու համար հոբելյար սրբազանին։

Տիրան սրբազանը Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի՝ Ս. Հակոբյանց դարավոր միաբանության անդամներից է։ Նա իր զարգացումով, կրոնական պատրաստությամբ և եկեղեցասիրությամբ պատվավոր տեղ է գրավում Սիոնի մեր բարձր հոգևորականության շարքերում։

Հոբելյար սրբազանը ծնվել է 1904 թվականին, Կիլիկիայի Այնթապ քաղաքում, կրոնական-եկեղեցական ավանդություններով հարուստ ու բարեպաշտ քահանայի ընտանիքում։

Սրբազանը իր նախնական կրթությունը ստացել է իր ծննդավայրի ազգային-թեմական դպրոցում, և մանկության վաղ սրերից իր սրտում զգացել է Եկեղեցուն և ժողովրդին ծառայելու սրբազան կոչում։

Տիրան սրբազանը որդին էր լուսահոգի Տ. Ներսես ավագ քահանա Թավուշճյանի, որը քահանաների դասում իր կրոնական նախանձախնդրությամբ, կանոնապահությամբ, քահանայական պատրաստությամբ, որպես նախկին արմաշական բարձր էր կանգնած քահանայական վեհ կոչման ու պարտականության դիրքերում։ Տ. Ներսեսը մի երջանիկ օր, իր անդրանիկ որդու՝ Տիրանի ձեռքից բռնած, հայր Աբրահամի օրինակով և հավատքով, նրան առաջնորդել էր Երուսաղեմի

հայոց վանքի պատմական կամարների տակ, դեպի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ս. Սեղանը՝ սիրով, հավատարմությամբ և նվիրումով ծառայելու համար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և Ազգին։

Համաշխարհային առաջին պատերազմից հետո, Դուրյան Պատրիարքի ջանքերով բացված Երուսաղեմի նորաբաց ժառանգավորաց վարժարանի առաջին սաներից մեկն է եղել սրբազանը, որը հաջողությամբ ավարտելով ժառանգավորաց վարժարանի դասարանական և Ընծայարանի լսարանական բաժինները, 1928 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվել իր ուսուցիչ Դուրյան Պատրիարքից, օծակից ունենալով նորայր եպիսկոպոս Պողարյանին և նույն տարվա աշնան ուղարկվել է Լոնդոն՝ աստվածաբանական և Ս. Գրական-մեկնողական դիտելիքների մեջ խորանալու համար։

1930 թվականին սրբազանը վերադառնում է վանք, բազմակողմանիորեն զարգացած, կայուն և խոր գիտելիքներով հարստացրած իր միտքը։ Երիտասարդ ու խոստումնալից հոգևորականի առաջ բացվում է կրթական, ազգային-եկեղեցական գործունեության լայն ասպարեզ։ Նա դասատու է նշանակվում ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում, ապա 1932 թվականին կարգվում է նույն վարժարանի և Ընծայարանի տեսուչ։ Տիրան սրբազանը անսպառ եռանդով աշխատում է այդ պաշտոնում և արդյունաշատ գործունեություն է ունենում Երուսաղեմի վանքի հոգևոր նոր սերնդի կրոնական-ուսումնական պատրաստության և դաստիարակության ընդգավառում։ Այդ տարիներին նա խորանում է ընդհանրապես աստվածաբանության և հատկապես Հայ Եկեղեցու աստվածաբանության հարցերում։

1936 թվականից հետո Տիրան սրբազանին տեսնում ենք հովվական ու առաջնորդական պատասխանատու պաշտոններում, որտեղ ի հայտ է բերում վարչական-կազմակերպչական ընդունակություններ և սրտագին նվիրումով ծառայում է իր հոտին և Եկեղեցուն։

Հովվական-առաջնորդական պաշտոնավարություն է ունեցել հոբելյար սրբազանը Փարիզում, Լոնդոնում և հուսկ ուրեմն Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմում, և իր ողջ եռանդն ու կարողությունները ի սպաս է դրել իր ժողովրդի ազգային-կրթական հոգևոր կարիքներին։

Հիշատակության արժանի է առանձնապես հոբելյար սրբազանի Ամերիկայի Արևելյան Թեմի առաջնորդական պաշտոնավարությունը։

Եկեղեցասիրությունն ու ժողովրդասիրությունը միշտ էլ մեր անցյալի և ներկա հոգևորականության ամենասիրելի առաջինություններն են եղել։ Ս. Լուսավորիչը, Մեծն Ներսեսը, Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը, Շնորհալին, Տաթևացին, Աշտարակեցին, Հրիմյանը, Գևորգ Զ.-ը մեծ են եղել ու պաշտելի և՛ իրենց ժողովրդասիրությամբ, հայրենասիրությամբ, և՛ իրենց եկեղեցասիրությամբ։ Նրանք ապրել ու ստեղծագործել են հայ ժողովրդի սիրով և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կաղապարով։ Ժողովրդասիրությունն ու Եկեղեցասիրությունը այն երկու բևեռներն են, որոնց շուրջը դարձել է միշտ մեր մեծ ու պանծալի նախնիքների խանդավառ հոգին։

Տիրան սրբազանը Ամերիկայում առաջնորդական պաշտոնի կոչվեց բարդ ու դժվարին պայմաններում, երբ կրքերը լրիվ չէին հանդարտվել և կային մարդիկ, կազմակերպություններ, որոնք իրենց անձնական հատվածական շահը վեր էին դասում Հայ Եկեղեցու և ժողովրդի շահերից։ Այնուամենայնիվ Տիրան սրբազանը կարողացավ ձեռնհասորեն ղեկավարել և կազմակերպել Սփյուռքի մեր ամենակարևոր և հայրենասեր թեմերից մեկի՝ Ամերիկայի թեմի ազգային-եկեղեցական գործերը, թեև, պետք է ասել, նրա վարչագիտությունը վերծ չմնաց նաև որոշ սայթաքումներից և թերություններից։

Հոբելյար սրբազանը գտնվում է իր ուժերի ծաղկման և բարձր վերելքի շրջանում։ Ազգն ու Եկեղեցին սրբազանից դեռևս սպասում են ավելի շատ շնորհակալ ծառայություններ։ «Որքան ատեն որ Աստված ինձի կպարգևնուտ և կարողություն, պիտի շարունակեմ իմ գործը։ Կծառայեմ դատի մը, որուն մեկ պաշտոնյան եմ։ Կծառայեմ մեր Եկեղեցվույն և իմ սիրելի ժողովրդին»։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր սիրո տուրքն է միացնում սրբազանի 25-ամյա հոբելյանի առթիվ արտահայտված հանրային հրապարակային մեծարանքին, մաղթելով հոբելյար սրբազանին բեղմնավոր տարիներ, աննահանջ սիրով և խոհուն գիտակցությամբ, նույն ոգով և նույն թափով ծառայելու Հայ Եկեղեցուն և Հայ Ազգին։

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՐ ԹԵՄԵՐԸ

II. ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄԸ

ումինահայ գաղութը անցյալում՝ Արևելյան Եվրոպայի հայկական ամենամեծ գաղթականություններից մեկն էր Լեհաստանի հայ գաղութից հետո։

Գաղթականությունը, հայ ժողովրդի պատմության միշտ ընկերացող այդ տխուր երևույթը, միշտ էլ շարիք է եղել հայ ժողովրդի համար։

Մայր Հայրենիքից՝ պատմական Հայաստանից դեպի օտար երկրներ կատարված հայ գաղթականության, գլխավոր ու մեծագույն պատճառներից մեկն էլ հանդիսացել է քաղաքական այն անապահով և իրավազուրկ վիճակը, որի մեջ ստիպված էր ապրել մեր ժողովուրդը անցյալում, իր պատմության զանազան շրջաններում։

Հայ ժողովրդի պատմության մեջ, ամենամեծ ու զանգվածային գաղթերից մեկն էլ եղել է այն, որ կատարվել է դեպի Արևելյան Եվրոպա, Բագրատունյաց մայրաքաղաք Անիի կործանումից հետո և սելջուկյան արշավանքների ժամանակ։

Հենց 11-րդ դարի երկրորդ կեսից էլ սկսվեցին գաղթականության մեծ հոսանքները դեպի Կիլիկիա, Փոքր Ասիա, Միջերկրական ծովի ափերը, հարավային ռուսական Ղրիմ, ապա Մոլդավիա, Վալաքիա, Գալիցիա, Տրանսիլվանիա, Լեհաստան։

Հեռավոր, օտար, բայց հյուրընկալ ափերի վրա հայերը հաստատվեցին որպես վարպետ արհեստավորներ և առևտրականներ։

Իրենց նոր Հայրենիքում հայ գաղթականները իրենց աշխատասիրությամբ ոչ միայն շուտով տուն տեղ ստեղծեցին, այլ նաև հսկա հարստություններ դիզելով իրենց ձեռքում պահեցին այդ երկրների ներքին և արտաքին առևտուրը, Արևելքի և արևմուտքի միջև վաճառականության գլխավոր միջնորդներ դարձան, զարկ տվեցին արվեստներին, գիտությանը։ Նրանք նորից շինեցին հայկական վանքեր, եկեղեցիներ, դպրոցներ, հիմք դրին նոր հայաքաղաքների և ապրեցին օտարության մեջ նոր կյանքով, բայց միշտ Մայր Հայրենիքի կարոտով և սիրով։

Ռումինահայ գաղութն էլ ահա այդպիսի գաղութներից մեկն էր, ուր Անի մայրաքաղաքից մազապուրծ փախած հայեր ռումին ասպընջական հողի վրա ապաստան գտնելով, հաստատվեցին այդ երկրում, վայելելով նույնիսկ մի շարք ներքին արտոնություններ, հատկապես առևտրական ասպարեզում, և որի շնորհիվ հասան տնտեսական նախաձեռի բարեկեցության, ունեցան իրենց սեփական վարչությունը, ներքին ինքնավարություն, սեփական դատարան ու թաղապետություն։ Գաղթական հայերի անձնական ազդեցությունն ու տնտեսական դիրքը այնքան մեծացավ ռումին երկրի վարչական, տնտեսական կառավարման մեջ, որ եղավ պատմական որոշ ժամանակ, երբ նույնիսկ մոլդավական գահի վրա բարձրացան ռումին հողի վրա ազգայնացած հայեր։ (Հ. Ղ. Ալիշան, «Կամենից»)։

Ռումինահայ գաղութը ակիզբ է առնում այսպես 14-րդ դարի կեսից, այսինքն ռումին իշխանության հիմնադրման շրջանից։

1418 թվականին, մոտ 3.000 հայ ընտանիքներ (15.000 հոգի) Ալեքսանդր չել Պուն՝ Բարի կոչված իշխանի օրով հաստատվեցին Մոլդավիայի յոթ քաղաքներում՝ Սուչավա, Հոթին, Բոտոշան, Տորոհոյ, Վասլույ, Ցաշ, Ռոման, Պաքրու, Ֆոկշան, Չեթաթյա-Ալպը (տե՛ս Բաբայան Լևոն, «Հայերը Մոլդավիայում», Թիֆլիս, 1911 թ., էջ 31—85)։

Այս շրջանի ռումինական մի շարք քաղաքներ իրենց հարստությամբ, զարգացմամբ,

տնտեսական, կուլտուրական նշանակությամբ պարտական են հայ ժողովրդի շինարար և ստեղծագործ աշխատանքին։

1401 թվականին հայասեր և բարի իշխան Ալեքսանդր չել Պունի հրովարտակով, Սուլավա քաղաքի Ս. Ակենետ կոչված հայկական վանքում հաստատվել է հայ եպիսկոպոսություն, վարելու համար Մոլդավիայի, Բուկովինայի (Հյուսիսային Մոլդավիա) հայ ազգային-եկեղեցական կյանքը։

Հարավային Ռումինիայի՝ Վալաքիայի և Դորբրուջայի՝ հայ գաղութները հաստատված են ավելի ուշ շրջաններում, 17-րդ դարից, և մանավանդ կազմակերպվել են 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, նոր դաղթականության հոսանքներով, երբ 1895 թվականին, Թյուրքիայում հայկական ջարդերից և 1915 թվականի ապրիլյան եղեռնից ազատված թյուրքահայ դաղթականները եկան հաստատվելու Հարավային Ռումինիայում։

Իսկ Տրանսիլվանիայի հայ գաղութը, որը իր բազմամարդությամբ և հնությամբ կարող էր մրցել Արևելյան Եվրոպայի մյուս հայ գաղութների հետ, և ուր անցյալում հայ դաղթական ժողովուրդը ազգային-եկեղեցական բացառիկ արտոնություններ է վայելել, դժբախտ դեպքերի բերումով, Կաթոլիկ եկեղեցու սիստեմատիկ հալածանքների պատճառով 17-րդ դարի վերջերին «բոնի միությամբ» լեհահայ գաղութի տխուր օրինակով պոկվեց հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու ծոցից և ընդմիշտ կորավ հայության և Եկեղեցու համար։ Այսոր Տրանսիլվանիայի մեջ մոտ 4.000 հունգարացած հայեր կան... մոռացած այն ամենը, ինչ հայկական է...» (տե՛ս Արշակ Մ. Այթունյան, «Տեղեկագրություն Հայոց դաղթականության որբ ի Մոլդո-Վալաքիա, Հունգարիս և ի Լեհաստան», Ֆոքշան, 1877 թ., էջ 25)։

1401 թվականին կազմակերպված Մոլդավիայի հայ ազգային-եկեղեցական թեմի էջմիածնից ուղարկված առաջնորդները նստել են մերթ Սուչավայում, ուր շինվել են 10 սրբավայրեր՝ վանք, եկեղեցի, մատուռ (2 վանք, 2 եկեղեցի և 2 մատուռ կանգուն են մինչև այսոր) և մերթ Յաշում։ Սուչավայում շինված հայ վանքերն ու եկեղեցիները իրենց թվով և շքեղությամբ աչքի են ընկել, և Սուչավան անվանել են «Ռումինահայոց Անին» (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1948 թ., մայիս-հունիս, Ս. Քոլանջյան, էջ 62)։

Սկզբնական շրջանին ռումինահայ թեմը ունեցել է ազգային-եկեղեցական լավ կազմակերպություն, տեղացի ռումին իշխանների և ռումին մեծահարգի և ազնիվ ժողովրդի բարյացակամության և օժանդակության շնորհիվ, Բայց այդ թեմի ազգային-եկեղեցական կյանքի խաղաղ զարգացումը երկար չի տևում։ Վրա են հասնում նորից մռայլ օրեր հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու համար։ Նորից է իմում դառնության բաժակից հայ ժողովուրդը։

16-րդ դարից Մոլդավիայի թեմը ապրում է մի փորձանքաշատ ժամանակաշրջան, իսկ 1769 թվականից հետո, հաջորդում են թյուրք կառավարության և ընդհանրապես իսլամության կրոնական հալածանքներն ու դավանափոխության սպառնալիքներն ու վտանգները, այն աստիճան, որ 18-րդ և 19-րդ դարերում նույնիսկ դադարել է թեմական, ազգային-եկեղեցական կենտրոնական իշխանությունը գոյություն ունենալուց, և Մայր Աթոռից ուղարկված նվիրակները կամ այցելու առաջնորդներ մի կերպ վարել են թեմի գործերը։ Այնուամենայնիվ, այդ ծանր օրերին ևս, անհուն զոհողություններով և զրկանքներով, հայ եկեղեցիները, որպես կրոնական համայնքներ, կարողացել են պահել իրենց գոյությունը, նույնիսկ ապրել են ներքնապես հոգևոր պայծառ ու գիտակից կյանքով՝ ամուր կառչած հայրենի սրբություններին և Ս. Էջմիածնին։

Այս շրջանում է, որ Կոստանդնուպոլսի ազգիցիկ ամիրաների շնորհիվ և տեղացի հայերի նվիրատվությամբ շինվում են մի շարք եկեղեցիներ, յուրաքանչյուր եկեղեցական համայնք կազմակերպում է իր ներքին ազգային-եկեղեցական կյանքը, ինչպես այդ լինում էր ընդհանրապես Թյուրքիայում, բացվում են ծիսական դպրոցներ՝ եկեղեցու հովանու տակ։ 19-րդ դարում «Մոլդավիայում գրեթե ամեն հայ եկեղեցական համայնք ուներ նաև հայկական վարժարան» («Էջմիածին» ամսագիր, 1948 թ., հուլիս-սեպտեմբեր, էջ 67, Վաղդեն ծայրագույն վարդապետ)։ Հայտնի են եղել իրենց կրթական-դաստիարակչական աշխատանքներով և նոր սերնդի հայեցի և քրիստոնեական դաստիարակության գործում Յաշի «Գարագաշ», Ռմանի «Սոդոմոնյան», Ֆոքշանի, Սուչավայի, Բոտոշանի, Տրկու Օկնայի, Բուխարեստի ազգային դպրոցները։

1812 թվականին, որոշ ժամանակ, երբ Բեսարաբիան կցվում է Ռուսաստանին, ռուս կառավարությունը Քիշնեում հաստատում է հայոց նոր առաջնորդություն, որը իր իրավասության տակ է առնում նաև Մոլդավիայի հայ ազգային-եկեղեցական թեմը։ Սակայն

Ռումինահայ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն Եպիսկոպոս Պալեյանը
երջանկահիշատակ Տ. Տ. Դեորդ Զ. Կաթողիկոսի հետ

այդ երկար չի տևում և մինչև 1921 թվականը Ռումինահայ թեմը կառավարվում է Մայր Աթոռից և նրա հրահանգով Կոստանդնուպոլսի Պատրիարքարանից ուղարկված այցելու առաջնորդներով։

Ռումինահայ թեմը կազմակերպելու նպատակ ունեցող Մայր Աթոռի և Կոստանդնուպոլսի ջանքերը չեն տալիս ոչ մի դրական արդյունք, որովհետև ոչ ոք չէ կրցած տեղական հայության հետ լեզու գտնել ու թեմը կազմակերպել։ Ռումինահայերը այդ շրջանին սիստեմատիկ կերպով մերժած են որևէ առաջնորդ ունենալ, սակայն միշտ ու անկեղծորեն հավատարիմ մնացած են Հայաստանյայց եկեղեցվո բարձրագույն իշխանության, կրոնա-դավանական և ազգային տեսակետ («Էջմիածին» ամսագիր, 1948 թ., հուլիս-սեպտեմբեր, էջ 67, Վազգեն ծայրագույն վարդապետ)։

1921 թվականից սկսյալ Քիշնևի առաջնորդությունը փոխադրվեց Բուխարեստ, կազմակերպվեց Ռումինահայ թեմը, առաջնորդ ունենալով Մայր Աթոռի միաբան Հուսիկ ծայրագույն վարդապետ Զոհրապյանին։ Նորընտիր առաջնորդը իր պաշտոնավարության առաջին տարիներին հաղթահարեց բավական լուրջ դժվարություններ, մինչև որ 1931 թվականի օգոստոսի պետական օրենքով Հայոց Եկեղեցին ճանաչվեց պետականորեն «որպես ռումեն հողի վրա ապրած և կարգացած պատմական եկեղեցիներից մեկը»։

Հուսիկ ծայրագույն վարդապետը եպիսկոպոսանալով Ռումինահայ թեմի վրա, պաշտոնավարեց մինչև 1942 թվականի հոկտեմբերը։

1943 թվականի նոյեմբերին առաջնորդական տեղապահ ընտրվեց Տ. Վազգեն վարդապետ Պալճյանը, որը և առաջնորդ ընտրվեց 1948 թվականին և որ մինչև այսօր այնքան ձեռնհասորեն և արժանավորությամբ վարում է Ռումինահայ թեմը։

Ռումինահայ թեմին մաս են կազմում այսօր 15 եկեղեցական համայնքներ, որոնցից կարևոր են՝

1. Բուխարեստը, ուր ապրում են ավելի քան 8.000 հայեր, Կոստանդնուպոլսից և Բուլղարիայից գաղթած, Բուխարեստը իր եկեղեցիներով, կրթական հաստատություններով, սիրտն է հայ գաղութին, ուր նստում է առաջնորդը. կա երկսեռ յոթնամյա վարժարան, 142 աշակերտներով, կա թաղական խորհուրդ, հոգաբարձություն, Հայ մշակույթի տունը, ծերանոց, բուժարան, աղքատախնամ մարմին, հայ մամուլ։ Գաղութի բոլոր կազմակերպությունները, համերաշխորեն, առաջնորդի հետ միասին, վարում են թեմի ազգային-եկեղեցական գործերը։

2. Կոնստանցան, ուր ապրում են մոտ 1.600 հայեր։ 1942 թվականին այրվեց աշտեղի Ս. Աստվածածին փայտաշեն եկեղեցին։ Պաշտամունքը կատարվում է դպրոցի մեծ սրահում, որը վերածվել է եկեղեցու։ Կա երկսեռ քասամյա վարժարան 70 աշակերտներով։

3. Դալացը, 200 հայ բնակչությամբ, ունի եկեղեցի, կառուցված 1853 թվականին։

Ռումինիայի մյուս եկեղեցական համայնքներից պետք է հիշել անպայման Սուչյալան, ուր թեև այսօր ապրում է շուրջ 400 հայ, բայց անցյալում նա մեծ դեր է կատարել ռումինահայության ազգային-եկեղեցական կյանքում և հայ կուլտուրայի պատմության մեջ։ Այդտեղ է գտնվում 1521 թվականին կառուցված Ս. Խաչ եկեղեցին և 1513 թվականին կառուցված Ս. Սիմեոն եկեղեցին (այժմ կիսավեր), և Ս. Ակսենտ վանքը 1551 թվականին կառուցված (ավերակ)։ Մեծ ուխտատեղի է 1512 թվականին կառուցված Հաճկատար Ս. Աստվածածին վանքը։

Հիշատակության արժանի է նաև Յաշը, որը մի ժամանակ Ռումինահայ թեմի մտավոր շարժման կենտրոնն է հանդիսացել։ Այժմ այստեղ ապրում են մոտ 50 հոգի հայեր։ Տեղվույն Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1395 թվականին և վերանորոգված է 1782 և 1929 թվականներին։

Ընդհանուր առմամբ հայության թիվն է Ռումինիայում շուրջ 12.000 հոգի, որոնցից 90%-ը 1895 թվականից հետո Թյուրքիայից գաղթած հայերն են կազմում՝ ոդոստոցիներ, քեմախցիներ, պոլսեցիներ, երզնկացիներ, բրուսացիներ, կեսարացիներ, վանեցիներ և մշեցիներ։

Պետք է ասել, որ ռումինահայ գաղութի սկզբնավորության օրերից սկսած, ռումեն կառավարական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում շնորհակալ և կարևոր դեր են խաղացել հայերը։ 14—15-րդ դարերում, երբ քաղաքականապես և տնտեսապես ամրապնդվում և ընդարձակվում էր նորաստեղծ Մոլդավական իշխանությունը, հայ վաճառականներն ու արհեստավորները ոչինչ չեն խնայել իրենց նոր հայրենիքի հզորացման և զարգացման գործի համար, և իրև քաջահմուտ առևտրականներ Արևելքի շուկաներին և արևելյան ժողովուրդների լեզուներին և բարքերին, մեծապես սատարել են ռումեն իշխանության տնտեսական զարգացման, կատարելով միաժամանակ դիվանագիտական պատասխանատու պաշտոններ՝ որպես Ռումեն իշխանության շահերի պաշտպաններ Արևելքում։

Հայերը ակտիվորեն մասնակցել են նաև Մոլդավիայում ռումեն ժողովրդի մղած ազատագրական պայքարին՝ սովետական բրոնակալության դեմ, և նրանցից շատերը ընկել են մարտում՝ հանուն ռումեն ժողովրդի աղատության և անկախության։

Արվեստի, մշակույթի, գիտության ասպարեզում էլ աչքի են ընկել հայերը իրենց փայլուն տաղանդով և շնորհալի ձիրքերով։

1944 թվականի օգոստոսի 23-ին, Սովետական հաղթական և հերոսական բանակները ազատագրեցին նաև Ռումինիան։ Անառնեսկուի ֆաշիստական կառավարությունը տապալվեց և Ռումինիայում ապրող բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի և հայ գաղութի համար բացվեց մի նոր, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի շրջան։

Ռումինիայում ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկայի հռչակումով, ռումեն ժողովուրդը իր ձեռքերում վերցրեց իր սեփական երկրի բախտը վճռելու, տնօրինելու աղատությունը։ Երկրի իշխանությունը իր ձեռքում կենտրոնացրեց ռումեն ժողովուրդը։ Այս հանգամանքը շատ նպաստավոր հող ստեղծեց Ռումինահայ թեմի ազգային-եկեղեցական գործունեությունը է՛լ ավելի կազմակերպելու և դաղութի կյանքը իր կոչման և առաքելության բարձրության վրա դնելու համար։ Նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն սրբազանի իմաստուն, շրջահայաց ազգային-եկեղեցական քաղաքականությունը, ազգային մարմինների, թաղական խորհրդի, մտավորականության, մամուլի, կրթական և հայրենակցական կազմակերպությունների համերաշխ և աղդեցուտ աշխատանքը տվել է ու տալիս է իր բարի պտուղները։ Այսօր Ռումինահայ թեմը մեր Սփյուռքի թեմերից ամենակազմակերպված, հայրենասեր, ազգային-եկեղեցական ավանդություններով ու շնչով ապրող, մեր պանծալի Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի սիրով ու կարոտով խանդավառ առաջին թեմերից մեկն է, շնորհիվ առաջնորդ սրբազանի հայրենանվեր և էջմիածնասեր ղեկավարության։

Վազգեն սրբազանը Սփյուռքի մեր բարձր հոգևորականության շարքերում իր ուրույն ու պատվավոր տեղն է գրավում, իր համալսարանական բարձրագույն կրթությամբ, ազգային-եկեղեցական բազմակողմանի զարգացումով և պատրաստությամբ, իր բարեմույն և հեզահամբույր բնավորությամբ, իր համեստությամբ, անաչառ հայրենասիրությամբ և գիտակից, նվիրված եկեղեցասիրությամբ, հոգևորականի կոչման և պարտաճանաչության խորը գիտակցությամբ. «Ահա իսրայելացի, յորում ոչ գոյ նենգութիւն»։

Վազգեն սրբազանը ծնվել է 1907 թվականին Ռոդոստոյում բարի, հավատավոր ու աշխատասեր հայ արհեստավորի ընտանիքում։ Պատանի Վազգենի նախադպրոցական շրջանի դաստիարակության գործում մեծ ու վճռական դեր է կատարել նրա ուսուցչուհի մայրը, որը իր մայրական անխարդախ կաթի հետ, ուսումնասեր Վազգենին ջամբել է ազգային-եկեղեցական սրբություններին և նվիրականություններին հանդեպ սեր, գուրգուրանք ու պատկառանք։ Սրբազանի մանկությունն ու պատանեկությունը անցել են Բուխարեստում, ուր և ստացել է իր միջնակարգ ու ապա բարձրագույն կրթությունը Բուխարեստի համալսարանում, գրականության և փիլիսոփայության ֆակուլտետներում։

Համալսարանավարտ, բազմակողմանիորեն պատրաստված, խոստումնալից երիտասարդի առաջ բացվում է կրթական, լրագրական, հասարակական, դրական գործունեության մի լայն ասպարեզ։ Տարիներ շարունակ ռումինահայ դաղութում նա կատարում է մանկավարժական բեղուն աշխատանք, ռումինահայ աճող նոր սերնդի հոգում վառ պահելով Մայրենի Եկեղեցու և լեզվի սերը, Հայրենիքի սրբազան կարոտը։ Իր մանկավարժական, լրագրական, հասարակական աշխատանքների հետ, սրբազանը զբաղվում է՝ դրական կյանքով։ Այդ տարիներին նա արդեն հասուն գրող է, ունի գրելու տաղանդ, դրական փորձ ու ճաշակ, հյութեղ, պատկերավոր և հարուստ լեզու, թեավոր մտածումներով ու պատկերներով համեմված, նրա բեղուն գրչին են պատկանում մի շարք արժեքավոր պատմա-բանասիրական աշխատություններ, օրինակ, «Մուսա-լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ», «Արիմյան Հայրիկ որպես դաստիարակ» և այլն։

1943 թվականին, հայ ժողովրդին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն լավագույնս և բոլորանվեր ծառայելու անսահման սիրով և խոստումով, Աթենքում, գերաշնորհ Տ. Կարապետ արքեպիսկոպոս Մաղլիմյանից կուսակրոն քահանա է ձեռնադրվում և իր վարդապետական քառասունքը անցկացնում է Սուչավայի պատմական Հաճիկատար հին վանքի խորհրդավոր ու միստիկ միջավայրում, ինքնակրթությամբ խորանալով կրոնական և սուրբգրական գիտելիքների մեջ։

Նույն տարին էլ նշանակվում է Ռումինահայ թեմի առաջնորդական տեղապահ։

1945 թվականին մասնակցում է Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովին։

1948 թվականին, երջանկահիշատակ Գեորգ Զ. Կաթողիկոսը, Իր հայրապետական բարձր ուշադրության արժանացնելով երիտասարդ ու շատ տիրելի վարդապետի գործունեությունը Ռումինահայ թեմում, նրան իր հայրապետական Ս. Աջով և օրհնությամբ շնորհում է

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ծայրագույն վարդապետության աստիճանը։

1951 թվականին Վեհափառ Հայրապետը Վազգեն ծայրագույն վարդապետին եպիսկոպոս է ձեռնադրում Երուսաղեմի Պատրիարքական փոխանորդ Տ. Եղիշե վարդապետի, Մայր Աթոռի միաբան Տ. Սահակ վարդապետի և Երուսաղեմի միաբան Սուրեն և Նորայր վարդապետների հետ։

Վազգեն սրբազանը, սակայն, դափնիների վրա հանգստացողը չէ. նա իրեն հատուկ ներիտասարդական կորովով, հոգևորականի նախանձախնդիր ոգով, հայրենասեր ջերմ սիրով հովվում է իր թեմը, արժանավայել լրջությամբ և կազմակերպվածությամբ, արժանանալով իր հոտի անվերապահ սիրուն և մեծարանքին, և ոումեն ժողովրդի և կառավարության վստահության և բարյացակամության, Ռուս և Ռումեն Պրավոսլավ եկեղեցիների սրտագին բարեկամության։

Վազգեն սրբազանը հաճախ եղել է Մայր Հայրենիքում զանազան առիթներով և վերջերս մամուլին է հանձնել Մայր Հայրենիքից և Ս. Էջմիածնից իր խանդավառ տպավորությունները և հուշերը՝ «Հայրենի արևին տակ» խորագրի ներքո։

Վազգեն սրբազանը դտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման ամենարեղմնավոր շրջանում։ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, հայ հավատացյալ ժողովուրդը, Նորին Սրբազնություն գերաշնորհ ու սիրելի Վազգեն եպիսկոպոսից սպասում են ավելի արդյունավետ և մեղվային աշխատանք ազգային-եկեղեցական կյանքում՝ ի փառս Հայ Եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի։

ԵՂԻՇԵ ԱԲԵՂԱ

ՍԻՐԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՆԹԱՄ ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԶՐԱՇՅԱՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 20-ին, չորեքշաբթի օրը, հետմիջօրեին, Ս. Էջմիածին այցելեց սիրիական խորհրդարանի և վերջերս Սովետական Միություն ժամանած սիրիական խորհրդարանական պատվիրակության անդամ պարոն Տիգրան Զրաշյանը, որ Հայաստան էր ժամանել հուլիսի 18-ին՝ սեփական աչքերովը տեսնելու համայն հայության սրբությունն սրբոցն եղող Մայր Հայրենիքի վերելքը։

Էջմիածնի ճանապարհի վրա, հարգելի հյուրը այցելել էր Զվարթնոցն ու հիացել՝ 7-րդ դարի հայկական ճարտարապետության հրաշակերտներից մեկն եղող այդ տաճարի հոյակապ մնացորդներով։ Նա եղել էր նաև Էջմիածնի Միկոյանի անվան հավաքական տնտեսությունում (կոլտնտեսությունում) և սիրալիր զրույց ունեցել կոլտնտեսության վարչության նախագահ և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Ե. Մարգարյանի հետ։

Ս. Էջմիածին ժամանելիս, առաջին հերթին, պարոն Տ. Զրաշյանը հետաքրքրվեց Մայր Տաճարում կատարվող կոթողական շինարարությամբ, բարձրացավ մինչև նկարիչների մոտ, որոնք 9 ամիս է, ինչ անընդհատ աշխատում են սրբավայրի հնամենի նկարազարդումները (գործ՝ Նաղաշ Հովնաթանյանի և Հովնաթան Հովնաթանյանի) վերականգնելու, ման եկավ Մայր Տաճարի բոլոր անկյուններն ու տեսավ պեղումների ժամանակ հայտնաբերված հիմքերը, որոնք պատկանում են նոր քրիստոնեությունն ընդունած Տրդատ թագավորի համամտությամբ Ս. Գրիգոր Լուսավորչի ցուցմունքով քանդված հեթանոսական (սանդարամետի) մեհյանին, հաստատելով ճշտությունն այն ավանդության, ըստ որում, 66 օր քարոզելուց հետո տեսած տեսիլքի համաձայն, Ս. Գրիգորն ու նորադարձ քրիստոնյաները սկսում են շինել վկայարանները, առաջինը՝ Վաղարշապատ քաղաքի հյուսիս-արևելքում, ուր Ս. Հռիփսիմեն էր նահատակվել, երկրորդը քաղաքի հարավում, ուր Ս. Գայանեն էր սպանվել, երրորդը՝ այդու մեջ, հենձանի մոտ, ուր մյուս կույսերն էին նահատակվել (Շողակաթ), իսկ չորրորդ մեծ սյունի տեղ, ուր սանդարամետի մեհյանը կար,— այսինքն՝ ա՛յն տեղ, ուր, ըստ տեսիլքի, երկթևյան հրաթև լուսեղեն դինվորների միջև երկնքից իջնող բարձր ու սահեղ մարդը (Միածինը) ձեռքի ոսկի ուռով ծեծեց գետինը,— հետագայում (301—303 թ. թ.) կառուցում են Մայր Տաճար Ս. Էջմիածինը։

Մայր Տաճարի հիմնական ու ընդարձակածավալ վերանորոգության մանրամասնություններին այսպես մոտիկից ծանոթանալուց հետո, պարոն Զրաշյանն առաջնորդվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի մոտ։

Սրբազան հայրը, շուրջն ունենալով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանին և Մարտիրոս Տեր-Ստեփանյանին, պրոֆեսոր. Աշոտ Աբրահամյանին և բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետին, հայրական գուրգուրանքով ընդունում է սիրիական խորհրդարանի հայ դեպուտատին՝ պարոն Տիգրան Զրաշյանին, որին ընկերակցում են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ

և Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Հրաչյա Գրիգորյանն ու Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության նախագահ Բարդեն Աստվածատրյանը։

Խոսակցությունն անցնում է ջերմ ու սիրալիր մթնոլորտում։ Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող սրբազանը, որ նախապես երկիցս եղել է Լիբանանում, հետաքրքրվում է Սիրիայի և Լիբանանի հայության, Անթիլիասում հաստատված Կիլիկիայի Կաթողիկոսության, նրա թեմերում գոյություն ունեցող եկեղեցիների և պաշտոնավարող հայ հոգևորականների ներկա վիճակով։ Պատվարժան հյուրը այդ բոլոր հարցումներին պատասխանում է յուրահատուկ տակտով, մեկին ու անսխթեթ խոսքերով և որպես հայ ժողովրդի հարազատ զավակ, գտնում է, որ վերջին ներգաղթը (1946—1948 թ. թ.) մեծագույն բարիքներից մեկն եղավ վտարանդի հայերի համար։

— Սիրիական կառավարությունն ու սիրիական ժողովուրդը համակրանքով են ընդունված քաղաքական դժբախտ դեպքերի բերմամբ։ իրենց երկրում ասylնչականություն գտած տարագիր հայ ժողովրդի հանդեպ։ Սիրիական կոնստիտուցիայում նույնիսկ հատուկ հոդված կա հայ կրոնական և մշակութային հաստատությունների աղատության ի նպաստ։

Զուտ ազգային կյանքի շուրջ տեղի ունեցած խորհրդակցության հաջորդում է հյուրերին ի պատիվ տրված ճաշկերույթը։ Նախագահ սրբազանը, հուզիչ բաժակաճառով, ոգեկոչում և պանծացնում է հիշատակը մեծագործ Տ. Տ. Գեորգ Զ. երջանկահիշատակ Հայրապետի, ապա շեշտելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ընդհանուր հայության ներկայացրած կարևորությունը, բաժակ է առաջարկում Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության, Մայր Աթոռի և Կիլիկիայի Կաթողիկոսական Աթոռի վրայից սև քողի շուտով վերացման և Հայ Եկեղեցու միասնականության հավերժ պահպանման համար։

Հաճելի էր սիրիական խորհրդարանական դելեգացիայի անդամ, Սիրիայի խորհրդարանի դեպուտատ պարոն Տիգրան Զրաջյանի բերնից լսել Հայաստանից ստացած իր տպավորությունները, որոնց անդրադարձավ նա իր խոսքի մեջ, ճաշկերույթի ընթացքին։ Հավատարմորեն տալու համար հարգելի դեպուտատի Հայաստանից ստացած տպավորությունները, նույնությամբ եմ բերում Հայաստանի հեռագրական գործակալության նրա արած հայտարարությունը.

«Որպես Սիրիական պառլամենտական դելեգացիայի անդամ, ես այցելեցի Ստալինգրադ և Բաքու քաղաքները, որտեղ տեսա աղնիվ, նվիրված աշխատանք և խաղաղությունը պաշտպանելու ցանկություն ու վճռականություն։ Ինձ հետաքրքրում էր և՝ Սովետական Միությունը, և՝ նրա բաղկացուցիչ մասը կազմող Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան։

«Առաջին անգամ լինելով Սովետական Հայաստանում, հարկ եմ համարում շեշտել, որ տեսածներս գերազանցեցին իմ պատկերացումներն ու սպասելիքները։ Ինձ համար մեծ երջանկություն էր անձամբ ականատես լինել այն բուռն շինարարական աշխատանքին, որ կատարվում է հայ ժողովրդի ձեռքով՝ ռուս մեծ ազգի եղբայրական օգնությամբ։

«Հայաստանում գտնվածս ժամանակ այցելեցի մայրաքաղաքի թանգարանները, Մատենադարանը, եղա Էջմիածնի Միկոյանի անվան կոլտնտեսությունում, որտեղ տեսա, թե ինչպես կատարելագործված մեքենաներով մշակում են հողը, էլեկտրականությունն օգտագործում են անասնապահության մեջ։ Հարկ եմ համարում շեշտել այն ժրաջան եռանդը, առավելագույնը ստեղծելու ձգտումը, որ կարդացվում էր կոլտնտեսականների դեմքերին և նկատվում նրանց աշխատանքում։

«Օպերայի և բալետի թատրոնում ունկընդրեցի վրացական «Քեթո և Կոտեն» օպերան, ինչպես նաև մեր ազգային «Անուշ» օպերան։ «Անուշը» մի բարձրարվեստ, իսկապես անուշ գործ է։ Անզուգական են երգիչ-երգչուհիների և պարուհիների կատարումը, մանավանդ խմբային տեսարանները։ Հմայիչ է թատրոնի շենքի կերտվածքը։ Առհասարակ գեղարվեստական ճաշակը Հայաստանում շատ զարգացած է։ Որտանց ցավում եմ, որ հնարավորություն չունեմ երկար մնալու, լսելու նաև Հայաստանի երաժշտական մյուս խմբերի համերգները։

«Հայաստանում գտնված ժամանակամիջոցում այցելեցի Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանը, որը խիստ փառահեղ է, բարձր, լուսավոր և օդասուն, Ամեն անկյուն ողողված է լույսով և արևով։ Իր հարմարություններով, սարքավորումներով և արտադրանքով ձեռնարկությունը կարող է մրցել Եվրոպայի շատ և շատ առաջնակարգ գործարանների հետ։

«...Ինձ բավականություն պատճառեց Էջմիածնի Մայր Տաճարի վերաշինությունը, որի վրա զգալի միջոցներ են ծախսվում։ Սփյուռքի հայության հավատացյալ հատվածին գոհունակություն կպատճառի այդ։

«Ինչ որ տեսա Սովետական Հայաստանում՝ լինի մշակութային գործ, կոլեկտիվ տնտեսություն, թանգարան, թե արդյունաբերական ձեռնարկություն, շատ և շատ հուզեց ինձ։ Այդ ամենը արդյունք է հայ ժողովրդի ազգային վերածնության, նրա ստեղծագործ չանքի և Սովետական իշխանության խաղաղասեր քաղաքականության։

«Հավատում էի և Սովետական Միություն գալուց հետո խորապես համոզվեցի, որ սովետական մարդիկ ամեն չանք գործադրում են խաղաղության պաշտպանության համար։ Ինձ առավել, ես ուրախացնում է Սովետական Հայաստանը այն պատճառով, որ նա նվիրված անդամն է Սովետական Միության, որը հաստատակամորեն պաշտպանում է միջազգային խաղաղությունը։ Դա ամրապնդում է սերը Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի նկատմամբ Սփյուռքի հայության, ինչպես նաև արաբական հողում ապրող հայերի մեջ, որոնք վայելում են հին, աշխատասեր ժողովրդի հարգանքն ու բարեկամությունը։

«Սիրիան, որի պառլամենտի անդամներից մեկը լինելու պատիվն ունեմ ես, ջերմորեն ձգտում է խաղաղության։ Նա ամեն չանք կգործադրի ամրապնդելու խաղաղությունը, ամրապնդելու բարեկամությունը մեծազորն և խաղաղասեր Սովետական Միության հետ։

Երբ Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի և անդամ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի օրհնությունն ստանալուց և ներկաներին հրաժեշտ տալուց հետո հարգելի հյուրը ինքնաշարժ էր նստում Երևան վերադառնալու համար, կարծես մի խորհրդավոր մեղեդի էր դարձրանում Մայր Տաճարի պատմական քարերից և հեռացող հարգամեծար այցելուին պատգամում.

— Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն տարեք Սփյուռքի հայրենակարոտ հայերին։

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ-ԱՄՐՈՑԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏԵՂԸ

(Իջևանի շրջան)

§ 1

Նորդյաց երկիրը կամ Կայենո գավառը, ինչպես միջնադարում անվանվում էր ներկայիս Իջևանի շրջանը, հարուստ է բազմապիսի հետաքրքիր պատմական հուշարձաններով, որոնց մեծագույն մասից ավերակների կույտեր կամ լոկ հետքեր են մնացել, իսկ փոքր մասը դեռևս կանգուն է, շատ կամ քիչ վնասված վիճակում։ Հատկապես նկատելի է ավերակ բնակավայրերի շատությունը, մանավանդ լեռնային մասում, ժայռերի ծերպերին (բերդերը), սարալանջերում ու ձորերում, ծածկված անտառով, թփերով ու մացառներով։ Երևում է, որ հնում այդ երկիրը խիտ բնակչություն է ունեցել, և այդ զարմանալի չէ, որովհետև հարուստ բնություն ունի, արգավանդ հող և մեղմ ու բարեխառն կլիմա։ Բացի այդ, իր աշխարհագրական դիրքով այդ երկրամասը երեք հարևան երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադվանքի սահմանների միացման հանգույցային կետում է գտնվում և ներկայանում է իբրև մի դուռ մեծ ու փոքր քարավանային ճանապարհների վրա, որոնք Աղստև գետի հովտով և այլ լեռնանցքերով հարևան երկրները կապել են Հայաստանի ներքնաշխարհի և նրա կուլտուրական ու քաղաքական կենտրոնների (Այրարատ, Շիրակ) հետ։

Այս շրջանի ճարտարապետական նշանակություն ունեցող յավաղուն հուշարձաններից երկուսը— Դեղձնուտի վանքը[1] և Մակարավանքը[2]— արդեն ծանոթ են «Էջմիածին» ամսագրի ընթերցողներին։ Սակայն դրանք, երկուսն էլ, կրոնական տիպի հուշարձանների թվին են պատկանում։ Այս հոդվածով նպատակ ունենք ընթերցողներին ծանոթացնելու հուշարձանների մի այնպիսի խմբի, որը կրոնական և աշխարհիկ հուշարձանների իրար հետ շաղկապված մի ամբողջություն է ներկայացնում։ Ցավոք, մինչև որս այդ հուշարձանների խմբին անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել, այնինչ դրա ավելի մանրազնին ուսումնասիրությամբ բավականին հարուստ նյութ կհայտնաբերվեր հայկական միջնադարի քաղաքական ու տնտեսական կյանքը պարզաբանելու համար։

Խոսքը Առաքելոց վանքի և, այսպես կոչված, գյուղատեղի մասին է։

§ 2

Հուշարձանների այդ հետաքրքիր խումբը գտնվում է Իջևանի շրջանի հեռավոր ձորերից մեկում՝ Կունեն գետակի ձորում, Գետաշեն գյուղից 3—3,5 կիլոմետր հեռավորության վրա։ Գյուղից մեկ կիլոմետր հեռավորությամբ, այնտեղ, ուր գտնվում են հին Կունեն գյուղի ավերակները, գետակի հովիտը նեղանում է։ Աջից և ձախից անտառապատ բարձր

1. «Դեղձնուտի վանքը և նրա վիմագրությունը», «Էջմիածին» ամսագիր, 1953 թ. ապրիլ։

2. «Մակարավանք», «Էջմիածին» ամսագիր, 1954 թ. փետրվար, մարտ, ապրիլ, մայիս։

լեռները մոտենալով իրար, առաջացնում են մի նեղ կիրճ, որի միջով, գետակի ձախ ափով, ձգվում է դեպի Կիրանց և Դեղձնուտի վանքերը տանող քարոտ, բայց ավտոմորիլային երթևեկությանը հարմարեցրած, գեղատեսիլ ճանապարհը։ Գործարանից 2—2,5 կիլոմետրի վրա կիրճը լայնանում է, ձախափնյա լեռնաշղթան մի լայն աղեղ է կազմում և ձորը գոգավորվում։ Ահա այդ լեռնագոգում, պարսպված անտառապատ բարձր սարերի խիստ թեք լանջերով, տեղավորված է Առաքելոց հուշարձանների խումբը, որը բաղկացած է ամրոցից, վանքից, բնակատեղից՝ իր եկեղեցիներով, քարվանսարայով, պահակատնով, կամրջով, բաղնիքով և բազմաթիվ այլ շենքերի ավերակներով։ Նման, բազմապիսի հուշարձանների մի տեղում գտնվելը, ինքնին, մի բացառիկ և հետաքրքրական երևույթ է, և արժանի ավելի խոր ուսումնասիրության։

§ 3

Առաքելոցի լեռնահովիտը ձախափնյա լեռնաշղթայից աստիճանաբար իջնում է դեպի Կունեն գետակը։ Հովիտը, իր վերևի մասում, սեպաձև խրվում է լեռնաշղթայի սահմանը կազմող ժայռերի կուրծքը, որտեղ, հսկա քարակարկառների տակից, բխում է մի փոքրիկ աղբյուր, որի ջրերը, միացած անձրևի և ձյան ջրերին, առաջացրել են մի հեղեղատ, որը հյուսիսից հարավ, ամրոցի արևմտյան քարաժայռերի ոտորոտով ընթանալով, հովիտը բաժանում է երկու անհավասար մասերի։

Հուշարձանների բռնած տարածությունը, արևելքից արևմուտք, մոտավորապես մեկ կիլոմետր է, իսկ հյուսիսից հարավ՝ 500—600 մետր, ներառյալ աջափնյա, գետակի եզրին նեղ շերտով ձգվող տափարակը։ Այսպիսով, ըստ իր տեղադրության, Առաքելոցը բաժանվում է երեք անհավասար թաղերի, որոնցից ամենամեծը արևմտյան թաղն է, որտեղ և հիմնականում գտնվում է բնակատեղը։ Այդ թաղի արևմտյան սահմանները որոշ չեն։ Տարածությամբ, համեմատարար, ավելի փոքր է արևելյան թաղամասը, որտեղ գտնվում են ամրոցն ու վանքը և կանգուն ու ավերված շենքերի մեծագույն մասը։ Այս միակ թաղամասն է, որի սահմանները որոշ են և պարզ։ Երրորդ՝ հարավային թաղամասը գետակի աջափին է և միանում է բնակատեղին Սրանոցի կամրջով։ Այդ թաղամասի սահմանները նույնպես որոշ չեն։

§ 4

Այժմ անցնենք հուշարձանների համառոտ նկարագրությանը, սկսելով արևելյան թաղամասից։

Վանք-ամրոց.— Կարևոր ենք համարում, նախ, մի երկու խոսք ասել այս երկու բաների զուգակցության առթիվ։ Հայտնի է, որ հայկական բոլոր վանքերն էլ պարսպապատ են եղել։ Որոշ տեղերում վանքերը եղել են միաժամանակ և ամրոցներ, շնորհիվ իրենց բնական դիրքի և արհեստական հզոր ամրությունների—հաստահեղույս, ամուր պարիսպների և բուրգերի—որոնք նման չեն սովորական պատերի, այլ նպատակ են ունեցել հարձակվող թշնամի ուժերին լուրջ դիմադրություն ցույց տալ։

Առաքելոց ամրոցը շինված է արևելյան թաղամասում գտնվող, հնգկողմանի զուգահեռ, հյուսիսից հարավ ձգվող մի նեղ և երկար քարաժայռի հարթ գագաթին և իր բարձր դիրքով իշխում է բնակատեղի վրա։ Այդ քարաժայռի հյուսիսային ծայրը, քիչ ցածրադիր ու թամբաձև նեղ պարանոցով, միանում է բնակատեղն ու ամրոցը Հյուսիսից շրջանցող լեռան։ Այդ կողմից ամրոցը պաշտպանված է բարձր պարսպով և իրար մոտ տեղավորված բուրգերով։ Պարսպի այդ մասը կանգուն է (բացառությամբ արևելյան ծայրի), թերևս շնորհիվ այն հանգամանքի, որ դա միաժամանակ վանքի գլխավոր եկեղեցու և ժամատան հյուսիսային պատերին է փոխարինում։ Արևմտյան ընդերկայնական ճակատը կախված է քարաժայռի ստորոտում խորն ընկած հեղեղատի վրա, այնպես, որ այդ կողմից ամրոցը միանգամայն անառիկ է։ Ամրոցի քարաժայռի հարավային սուր ծայրը մեծ բարձրությունից զառիթափ իջնելով խրվում է բնակատեղի մեջ։ Ամրոցի արևելյան ընդերկայնական ճակատը, որը միաժամանակ նրա ամենադյուրամատչելի և խոցելի մասն է, նայում է քարաժայռի և այդ կողմից իջնող լեռան փեշերի մեջ տեղավորված մի երկար, սկզբում նեղ և աստիճանաբար լայնացող, դեպի գետակն իջնող, գեղեցիկ հովտի վրա։

Ամրոցի երկարությունը 135, իսկ լայնքը 32 մետր է։ Ունեցել է հաստ և ամուր պարիսպներ, որոնցից կանգուն են մնացել, ինչպես հիշեցինք, հյուսիսային և հյուսիս-արևմտյան անկյունի մասերը իրենց չորս բուրգերով։ Պարիսպների մնացած մասերից շատ քիչ բան է մնացել։ Ունեցել է երեք դուռ, որոնցից երկուսը կանգուն են։ Դրանցից մեկը արևմտյան պարսպի մեջտեղից բացվում է ցածում գտնվող հեղեղատի վրա և շատ փոքր է։ Դա հավանաբար ծառայել է ցածում գտնվող բնակատեղի հետ կապ պահպանելու համար։ Այդ դռան առաջ, ներսից, նկատելի են տաշած քարից շինված, քառակուսի հատակագծով, գավթի նման մի շենքի մնացորդներ։ Երկրորդ, միջակ մեծությամբ դուռը

գտնվում է ամրոցի հարավ-արևելյան ծայրին գտնվող երկու մեծ շենքերի անկյունները միացնող, ոչ շատ բարձր պատի մեջ։ Փաստորեն դա պարսպի դուռը չէ, որովհետև հիշյալ պատի և պարսպի մեջ, այդ դռան առաջ, մի փոքրիկ, եռանկյունաձև արտաքին բակ կա։ Հավանաբար այդ դռան դիմաց, պարսպի մեջ եղել է արտաքին դուռ, որն այժմ չի նկատվում, պարսպի քանդված լինելու պատճառով։ Նույն պատճառով անկատելի է և երրորդ, ամենամեծ դուռը, արևելյան պարսպի մեջտեղում, հեղեղատի վրա բացվող դռնակի դիմացը։ Այդ դռան տեղը ծածկված է խիտ աճած ծառերով և մացառներով, ուստի և առաջին հայացքից անկատելի է։

§ 5

Ամրոցի ներսում գտնվում են հետևյալ շենքերը.

Գլխավոր եկեղեցին.— Շինված է ամրոցի հյուսիսային ծայրին, կից կանգուն մնացած պարսպին։ Դա համեստ չափերի (10,25×7,45 մ.)[1] մի շենք է, արտաքուստ պատած կաթնագույն; գեղնագույն և կապտավուն սրբատաշ քարով, իսկ ներսից՝ կրով սվաղված։ Ունի բարձր, կլոր թմբուկ և սրածայր վեղար ունեցող գմբեթ։ Արտաքուստ և ներքուստ որևէ զարդաքանդակ կամ արձանագրություն չունի։ Լուսամուտները փոքր են, ընդամենը վեց հատ, որոնցից չորսը գմբեթի վրա, չորս գլխավոր ճակատներին, մեկը եկեղեցու հարավային պատի մեջտեղում, իսկ վեցերորդը՝ արևելքի ճակատին, արևելքից։ Ինչ եկեղեցին անպաճույճ է, սակայն շնորհիվ իր մասերի համաչափության, գեղեցիկ և գրավիչ տեսք ունի։ Ներքուստ, արևելյան կողմում, ունի մեծ և խորն ընկած արսիդ։ Ինքը բարձր է, սանդուղքը հարավից, երեք աստիճանով։ Խորաններ (ավանդատուն) չունի։ Արսիդի եզրերից մոտավորապես 0,5 մետր ներս և հյուսիսային պատի մոտ, գտնվում է մի մեծ քարե սեղան։ Դրանց հատակագիծը ուղղանկյուն է, ինչպես նաև ամբողջ շենքինը։ Դրանց հարավային պատերի մեջտեղում, դրսից, մի-մի դուռ կա

յին ու հարավային պատերին կից տեղավորված որմնասյուների վրա են հիմնված գրմբեթակիր կամարները։ Եկեղեցին հյուսիսից սնփական պատ չունի, դրա փոխարեն օգտագործված է ամրոցի պարիսպը։ Միակ մուտքը (դուռը) բացվում է արևմուտքից, հետագայում շինված ժամատան միջից։ Թե՛ հատակը և թե՛ կտուրը սալապատ են եղել։

Այս եկեղեցու շինարարական առանձնահատկություններից գլխավորն այն է, որ դրա տանիքը մեկ սագ (թեքություն—скат) ունի։ Այդ սագի հյուսիսային կողը արհեստական

Ժամատան երդիկը

ձևով բարձրացված է և կցված պարսպին, որտեղից սկսվում է տանիքի աստիճանական թեքությունը, մինչև հարավային պատի եզրը։ Այդ հանգամանքը նկատելի է ցածից, եկեղեցու արևելյան ճակատից։ Հյուսիսային սագի տեղում, տանիքի վրա, պարսպի գծի երկարությամբ, շինված է թաղապատ մի անցք, ծածկված խրամատի ձևով, այն նկատառումով, որ հյուսիսից սագի բարձրացման հետևանքով առաջացած բեռնավորումը եկեղեցու թաղի վրա, ըստ հնարավորին թեթևանա։ Հյուսիսային սագի վերացման պատճառներից մեկն էլ այն է, որ անձրևի և ձյունի ջրերը չծծվեն պարսպի և եկեղեցու արանքը, որը տեղի կունենար տանիքը երկսագ շինելու դեպքում, որովհետև որքան էլ հմտորեն փակելու լինեին պարսպի և սագի միացման տեղը, ջերմության տատանումների և երկրաշարժի հետևանքով այդ կարը մշտական բացման վտանգի տակ կլիներ։

Եկեղեցին կանգուն է, սակայն երկրաշարժերից ճեղքեր են բացվել արևելյան և հարավային պատերի մեջ, լուսամուտների գծով, նաև արևմտյան պատի մեջ, մուտքից վերև։ Թափված և խախտված են գմբեթի վեղարի ծածկը, տանիքի սալերը և հարավային ու արևելյան պատերի վերին շարքերի քարերը։

§ 6

Ժամատունը.— Քառակուսի, միջին չափերի (10,4×9,5 մ.) մի պարզ շենք է, եկեղեցու կառուցումն ավարտելուց հետո շինված, կից վերջինիս (եկեղեցու) արևմտյան պատին, միևնույն քարից։ Սյուներ չունի։ Վրանաձև տանիքը գոտկում են իրար խաչաձևող կամարները, որոնց կրունկները նստած են պատերին կից մույթերի, կիսամույթերի և կալունակների (кронштейн) վրա, որոնք դասավորված են հետևյալ կարգով. զույգ մույթեր կցված են արևմտյան պատին, մի զույգ կիսամույթեր՝ հարավային, իսկ մյուս երկու պատերին երկուական կալունակներ, որոնցից մեկը, եկեղեցու մուտքից աջ, ընկած է։ Պատերի քարերի վերին շարվածքն աղեղնաձև է, նման Դեղձնուտի վանքի ժամատան պատերի շարվածքին։ Ժամատան պատերը, թե՛ ներսից և թե՛ դրսից, սրբատաշ քարերով են պատված։

Այս ժամատունը նշանավոր է իր հռչակավոր սողոմաքաղ երդիկով, որի առանձնահատկությունը հետևյալն է։ Իրար հատող կամարների վերևում առաջացած կենտրոնական քառակուսի բացվածքի անկյունները կտրված են դրանց վրա շարված, 20 սմ. հաստություն ունեցող մեծ սալերով. ստացված անկյուններն իրենց հերթին կտրվում են հաջորդ շարքի սալերով և այսպիսով անցքը (բացվածքը) աստիճանաբար թե՛ նեղանում և թե՛ բարձրանում է վերև, նման գյուղական վայրերում տեղ-տեղ դեռևս գոյություն ունեցող հին տների՝ գրխատների կամ ղարաղամների երդիկների, որտեղ այդ իրացված է փայտի գործածությամբ։ Բացի երդիկից ժամատունը լույս է ստանում արևմտյան պատի (պարսպի) մեջ բացված, միջին մեծության, մի թաղապատ, ցածրադիր լուսամուտից, որը նայում է հեղեղատի խորն ընկած ձորի և դիմացի սարալանջում փռված բնակատեղի վրա։ Այդ տեղից բացվող տեսարանը հիանալի է. հեռվում երևում են Առաքելոցը արևմուտքից

շրջապատող անտառապատ լեռների մշուշապատ, բարձր շղթաները և Կունեն դետակի գեղեցիկ և հակայական ձորը։

Ժամատան մուտքը բացվում է հարավային պատի արևելյան կեսի միջից, այդ դռան առաջ շինված գավթի մեջ։

Ժամատան շենքը սեփական միայն մի պատ ունի, հարավայինը, և արևելյան պատի մի փոքրիկ հատվածը, մոտավորապես երկու մետր երկարությամբ, որով այդ շենքը դուրս է ընկնում դիխավոր եկեղեցու հարավային դռից։ Մնացած կողմերից իրեն պատեր օգտագործել են, արևմուտքից և հյուսիսից՝ այդ կողմերի պարսպամասերը, իսկ արևելքից՝ եկեղեցու արևմտյան պատը։

§ 7

Գավիթը.— Մի փոքրիկ, քառակուսի (անհավասար կողերով) շենք է, շինված ժամատան մուտքի առաջ։ Եղել է կամարակապ և թաղապատ, հարավ-արևելյան անկյունում ունեցել է մի սյուն, որը կրել է հարավային և արևելյան կամարների ուղները։ Արևմտյան պատն ամբողջովին բռնված է կամարակապ մի լայն խորշով։

§ 8

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ժամատան մուտքի հակատաքարի վրա.

1 Ի ԹՎ. ԿՆԻՍ...[1]

2 ։ ԿԱՄԱՒ ԲԱՌԵՐԱՐԻՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԱԹԱ-

3 ԲԱԿ ԵՒ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ԽՈՒԹԼՈՒԲՈՒՂԻՆ ԵՍ ԳՈՒԳՈՐ ԹՈՌՆ Խ(Ա)Ջ[2]ԷՆ-

4 ԻՍԵԱՆՑ[3] ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ ԱՌԱՔԵԼՈՑՍ ԻՍ ՀԱԼԱԼ ԱՌԴԵ(Ա)Մ(Բ)Ք ԵՒ ԲՆԱԿԻՋՔ

5 ՈՒԽՏԻՍ ԵՏՈՒՆ Բ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՍԲ ԳՈՒԳՈՐԻ ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑՆ ԿԱՏ-

6 ԱՐԻՋՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ ԵՒ ԽԱՓԱՆՈՂՔՆ ԴԱՏԻՆ Ի ՏԷ ՍՏԵՓ[ԱՆ] ԳԵ[ՈՐ]

1. Թվագրի տեղում քարը հողմաքարված է։ Ջալալյանը այդ վերծանել է ՈՂԴ= 1244 թ.։ Երևի նրա այցի ժամանակ գրերը դեռևս որոշ են եղել (տե՛ս Կ. Կոստանյանց, «Էջմիածնի տարեգիրք», էջ 87)։

2. «Խաչենիսանոց» ազգանվան առաջին վանքի (հաշ) Ա գիրը բացակայում է, իսկ Ջ գրի գլխի մեջ դրված է փոքր խաչ, որպիսին կա նաև Ժ-ով շարքի վերջին «Ընակիչք» բառի Ջ-ի գլխի մեջ և կարդացվում է իբրև Ք, հետևաբար, եթե փորագրիչը հետևողական է վարվել, ուրեմն «Խաչենիսանոց» ազգանունը կկարդացվի «Խաչքենիսանոց»։

3. Նույն ազգանվան վերջավորությունը «անոց» ևս կարդում և ոչ «ենոց», որովհետև Ն գրի վերջավորության դիծը տարված է վերև, որը կարող է լինել միայն Ն և Ա գրերի միացման դեպքում։

Բ. Գալթի արևմտյան կամարի հարավային կրունկի և դրա տակի մույրի իոյակի վրա.

1 ՅՈՒՍՈՎՆ ԱՅ ՏԻԿԻՆՍ

2 [ՄԻ]ԱԲԱՆԵՑԱ Ի ՍԲ ԱՌԱ-

3 [Ք]ԵԼՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒ-

4 Ն ։Ա։ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ՀՈԵՄ-

5 ՍԻՄԷ ԽԱՓԱՆԻՋՔՆ ԴԱՏԻՆ

Գ. Նախորդի տակին.

1 ԿԱՄԱՀ ԱՅ Ե-
2 Ս ՍԱՐԷՄՏՈՒՐ: ՄԻԱԲ-
3 ԱՆԵՑԱ ԱՌԱՔԵԼՈՑ ՍԲ ՈՒ-
4 ԽՏԻՍ ԻՍ ՀԱԼԱԼ + ԱՐՈՂԵ(Ա)Մ(Բ)Ք ԵՒ [ՄԻ]-
5 ԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ :Բ: ՊԱՏԱՐ-
6 ԱԳ Ի ՏԱՒՆԻ ՍԲ ԳՈՒԳՈՐ[Ի]
7 ԽԱՓԱՆԻՋՔՆ ԴԱՏԻՆ ՅԱՅ

§ 9

Խաչաքանդ Ս. Կարապետ.—Գլխավոր եկեղեցու հարավային պատի տակ կա մի մեծ դեղեցիկ խաչքար, պատվանդանի վրա։ Խաչքարը կարմիր տուֆից է, քանդակները՝ բուսական և երկրաչափական։ Խաչից վերև, բուսական քանդակների մեջ Քրիստոսի քանդակն է, կողքերից մեկական հրեշտակներ (ենթադրում ենք)։ Այս խաչքարի վրա փորագրված է.

Դ. I. Քրիստոսի ձեռքին և դրա տակին.

1 ԵՍ ԵՄ ԼՈՅՍ ԸՆԴ ՀԱՒՐ ԲԱՐՁ[ՐԵԼՈՅՆ] ԱՆԸՍԿԸՍԲԱՆ
2 ԿԱՐԱՊԵՏԻՆ ԼԵՐ ԱՒԳՆԱԿԱ(Ն)
3 Ա — Ս
4 Ջ Ա Ի } խաչը գրելով[1]
5 Ա Ծ

1. Եթե 4-րդ շարքի առաջին գիրը համարենք իբրև շարքը եղած բուսական քանդակազարդի մի մաս, այդ դեպքում 3—5 կարճ շարքերի անհասկանալի գրերի խմբերը կլինի «ԱՍԱԻ (?) ԱԾ», որը կվերաբերի 1-ին շարքին իբրև պարզաբանում։ Այդպիսով կստացվի հետևյալը.
1՝ «Ես եմ լույս բեզ ճար բարձրելոյն անսկզբան
3—5՝ ասա։ (?) Աստուածդ»:

II. Խաչի տուրքը, սկսած խաչքարի նակոտի աջակողմի ցածից.

6 ՈՎ ՔԱՌԱԹԵՒ ՍԲ ՊԱՆԾԱԼԻ: ՓՈԿԱԳՈՐԾՈՂ ՄԱՐԴԿԱՆ ԱՋ-
7 ԳԻ ՏԵՍԻԼ
8 ՓԱՌԱՑ ԱՆՃԱՌԵԼԻ
9 ԳԵՐԱՊԱՅ-
10 ԾԱՌ ԵՒ ՍԽՐԱԼԻ: ՅՈՐԺԱՄ ՓԱՅ-
11 ԼԵՍ ԸՆԴ ԱՄԲՍ ԵՐԿՆԻ: ԼԵՐ ԲԱՐԵԽԱՒՍ ՏՆ
12 ՅԻ: ԿԱՐԱՊԵՏԻՆ ՔՈ ԿԱՆԳՆ-
13 ՈՂԻ: ԱԼՍ-
14 ԿԱՆՆ ԻՒՐ ԿԵՆԱԿՑԻՆ: ԵՒ
15 ՋԱՒԱԿԱ-
16 ՑՆ ԳՈՎԵԼԻ ՀԱՄԱՅՆ ԱՋԳԱՑՆ ՈՐ Ի ԿԱՐԳԻ ՔԱՒԻՋ ՄԵՂԱՑ ԼԵՐ ԱՄԵՆԻ[1]

1. Խաչի շուրջը փորագրված արձանագրության շարքերի (6—16) անջատումը կատարված է ըստ գրության գծի բնկումների։

* III. Խաչքարի ճակատի աջ կողմում.

17 ՍԲ ԽԱՉՍ ԱԻԵՏԵՑՆ Է

* IV. Խաչքարի ճակատի ձախ կողմում.

18 ՍԲ ԽԱՉՍ ՍԲ

* V. Խաչքարի հարավային կողի վրա.

19 ՍԲ ԿԱՌ-
20 ԱՊԵՏ

§ 10

Վանք-ամրոցի մյուս շենքերը.— Գլխավոր եկեղեցու և պարիսպների մեջ, արևելքից, երևում են մի քանի սենյակների հիմքեր։ Այդ շենքերի ինչ լինելը դժվար է որոշել. հավանաբար եղել են նշխարատուն և ծիսական առարկաների պահեստ։

Վանքից հարավ, մինչև գլխավոր մուտքի և արևմտյան դռնակի գիծը, մի բաց տարածություն է ընկած, որտեղ շենքերի հետք չի երևվում։

Հիշյալ գծից ցած, ամրոցի հարավային մասի մեջտեղում, երևում են հյուսիսից հարավ ուղղությամբ ընկած մի շարք շենքերի հիմքերը։ Այդ շենքերը դասավորված են երկու շարքով, մեջտեղով ձգված մի նեղ կարճ փողոցի աջ ու ձախ կողմերում։ Այդ երկշարք սենյակների և փողոցի կենտրոնում եղել է ավելի ընդարձակ, կլոր հատակագիծ ունեցող մի շենք, որի մեջ նկատելի են բուխարիկի հետքեր։ Դրանք բոլորն էլ հավանաբար եղել են վանականների բնակարանները։

Գլխավոր մուտքից հարավ, արևելյան պարսպին կից, գտնվում է ամրոցի երկրորդ եկեղեցին, որը մի պարզ շենք է, երկարավուն քառակուսի հատակագծով, շինված շերտավոր խոշոր ավազաքարից։ Ունի լայն արսիդ։ Քաղաքատ է։ Թեթև կորություն ունեցող, փակագծի ձևի քարը գոտկված է երկու կամարով, որոնցից մեկն ընդերկայնական պատերի մեջտեղից, իսկ երկրորդը՝ արսիդի ծայրին։ Ունի չորս փոքր ու նեղլիկ լուսամուտներ, որոնցից երկուսը արևմտյան պատի մեջ, մեկը մյուսի տակ։ Մուտքը հարավային պատի միջից է, հարավ արևմտյան անկյունը մասիկ։ Տանիքը հողածածկ է։ Եկեղեցին կանգուն է։

Եկեղեցու արևմտյան պատին կից եղել է քառակուսի հատակագծով մի ընդարձակ շենք, որից հիմնաշարքն է մնացել։

Հիշյալ եկեղեցուց մոտ երկու մետր հարավ, արևելյան պարսպին կից, երկարությամբ հյուսիսից հարավ ձգվող մեծ և ընդարձակ մի շենքի ավերակներն են, ավազաքարից շինված հաստ պատերով։ Այդ շենքից միայն արևմտյան բարձր պատն է մնացել կանգուն. մնացած պատերը կիսաքանդ կամ բոլորովին ավերված են։ Արևմտյան պատի մեջ կան երեք ընդարձակ կամարակապ խորշեր։ Կենտրոնական խորշի միջից շենքի մուտքն է, ենթադրում ենք, որ այդ շենքը վանքի սեղանատունը կամ խոհանոցն է եղել։

Նախորդ շենքի հարավ-արևմտյան անկյունից, շեղ գծով դրված մի պատ միանում է վանք-ամրոցի վերջին շենքի հյուսիս-արևելյան անկյանը։ Այդ պատի մեջ է ամրոցի երկրորդ դուռը, որի մասին հիշել ենք վերևում։

Վերջին շենքը մի ընդարձակ, մեծ սենյակ է, տեղավորված վանք-ամրոցի քարաժայռի հարավային ծայրին։ Դրա պատերից հարավայինը, արևմտյանը և արևելյանի մի մասը միաժամանակ ծառայել են իբրև պարիսպ։ Կանգուն մնացել են միայն հյուսիսային և արևելյան պատերը, որոնց մեջ կան երկուական ընդարձակ կամարակապ խորշեր։ Հավանական է, որ ժամատան օրինակով այդ սենյակի լուսամուտները եղած լինեն հեղհղատի ձորի եզրին դրված պարսպի միջից։ Առհասարակ այդ շենքը հիանալի դիրք ունի ցածում տարածվող բնակատեղի և ձորի նկատմամբ։ Սենյակի պատերը խոշոր ավազաքարից են. կարերը խնամքով ծեփված կրաշաղախով։ Հավանաբար սենյակի միջում եղել են քարե կամ փայտյա սյուներ, որովհետև, առանց այդպիսի հենարանների, հնարավոր չէր լինի ծածկը կատարել քաղով կամ հեծաններով։ Նկատի ունենալով այդ սենյակի լայնարիկ գեղեցիկ դիրքը և համեմատաբար ավելի խնամքով շինված լինելը, թվում է թե սխալված չենք լինի, եթե այդ ընդունենք իբրև ամրոցի կամ վանքի ընդունարան-դահլիճը։

(Շարունակելի)



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ*

Իր դասախոսությամբ նեփվայացնել հայագետների ողջ աշխատանքը Մայր Հայրենիքում, թվարկել թեկուզ այն հիմնական հաջողությունները, որ մենք ունենք հայագիտության տարբեր ասպարեզներում՝ անկարելի է, ուստի և ես պիտի վանգ առնեմ հայագիտության ասպարեզում՝ մեր ունեցած ակնթարթ հաջողություններին, մեր հայտնի գիտնականների ու նրանց վատարած կարևոր ուսումնասիրությունների վրա։

Իմ ներկա դասախոսության մեջ ես ուզում եմ ծանրանալ հայագիտական այն աշխատանքների վրա, որ կատարված են մեզ մոտ հատկապես վերջին շրջանում, որովհետև տարիներ առաջ նման մի դասախոսությամբ ես հանդես եմ եկել Թեյրության սրահներից մեկում, և դուք մեր նախորդ աշխատանքների հետ մասամբ ծանոթ եք. իմ ներկա դասախոսությունը կդառնա յուրատեսակ շարունակություն իմ առաջին զեկուցման. ես կանգ չեմ առնի այն փաստերի վրա, որոնք արդեն ձեզ ծանոթ են։

Հասկանալի է, որ մեր աշխատանքը հայագիտության ասպարեզում՝ ամբողջովին հիմնված է մեր անցյալի մատենագրական հարուստ ժառանգության վրա, այն ժառանգությունը, որ ստեղծագործել են մեր գրասեր պապերը և փայփայանքով պահել ու հասցրել մեզ։ Մատենագրական այդ ժառանգությունը՝ մեր ուսումնասիրությունների փաստական նյութի ոսկյա շտեմարանն է եղել և է այժմ։

Հայագետների մեր նոր սերունդը երախտագիտական խորը հարգանքով է վերաբերվում դեպի ականավոր այն հայագետները, որոնք հայագիտական մեր նոր դպրոցի հիմնադիրները հանդիսացան հայրենի երկրում։ Ես նկատի ունեմ ակադեմիկոսներ Հակոբ Մանանդյանին, Հրաչյա Աճառյանին, Ստեփանոս Մալխասյանցին, Մանուկ Աբեղյանին, Ադամ Տերտերյանին և մեր մյուս անվանի հայագետներին։ Նշված գիտնականները ո՛չ միայն հարստացրին հայագիտությունը նոր ստեղծագործություններով, այլև կարողացան, ժամանակի ընթացքում, ստեղծել ընտիր սերունդ, պատրաստված սերունդ՝ շարունակելու իրենց սկսած շնորհակալ գործը։

Բնական է, մենք հարգանքով ենք վերաբերվում և գնահատում այն աշխատանքը, որ կատարվում է նաև ձեզ մոտ՝ արտասահմանում։ Այսպես, մենք չենք կարող չնշել այն աշխատանքը, որ կատարել է այստեղ երանաշնորհ Գարեգին Կաթողիկոսը՝ Գոշչանների և հայ մանրանկարչության պատմության ուսումնասիրության ասպարեզում, գիտական այն խոշոր մուծումները, որ կատարել են Նիկոլայ Ադոնցը հայագիտության ասպարեզում, հանգուցյալ Արշավիր Ջոպանյանի կատարած աշխատանքը մեր ձեռագրերի, հատկապես տաղերի հավաքման և ուսումնասիրության գործում, օրիորդ Ս. Տեր-Ներսիսյանի և Ա. Երեմյանի ուսումնասիրությունները՝ մանրանկարչության պատմության, պարոն Ա. Ակոպյանցյանի աշխատանքը՝ Հայաստանի պատմական աշխարհագրության, պարոն Շ. Պերպերյանի ուսումնասիրությունները հայ արվեստի պատմության ասպարեզ-

* Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի ներկա աշխատությունը Անթիլիասում նրա կարդացած դասախոսությունների շարքից առաջինի ամբողջությունն է. արված են խմբագրական փոքրիկ միջամտություններ։— ԽՄԲ.։

ներում, Հայր Ներսես Ակինյանի, պարոն Գառնիկ Գյուզալյանի, վերապատվելի Եղիա Քասունու, Հայր Ոսկյանի, Հայր Մսրլյանի, պարոն Սիմոն Սիմոնյանի և մյուս հայագետների աշխատությունները, որոնց մի մասի հետ ես այստեղ եմ հնարավորություն ունեցել ծանոթանալու։ Սակայն մենք արտասահմանի հայագետներից շատ մեծ աշխատանք սպասել չենք կարող, քանի որ գիտենք, թե նրանք զրկված են պետական հովանավորությունից, նյութական և բարոյական ինչպիսի ծանր պայմաններում են աշխատում, և նրանց ուսումնասիրությունների հրատարակությունը ինչպիսի դժվարությունների հետ է կապված։

Որպեսզի դուք կարողանաք պարզ պատկերացում կազմել Սովետական Հայաստանում կատարվող մեր հայագիտական աշխատանքների մասին, նախքան դասախոսության բուն նյութին անցնելը, ես ցանկանում եմ փոքրինչ կանգ առնել հայրենի երկրի գիտական այն օջախների վրա, որոնք կոչված են հայագիտական պատվաբեր աշխատանքներ կատարելու։

Հայագիտության գլխավոր կենտրոններից մեկը հանդիսանում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, կամ ինչպես դուք այստեղ ասում եք՝ Գիտությանց կաճառը։ Գիտական այդ հաստատությունը ղեկավարում է Ակադեմիայի պրեզիդենտ աշխարհահռչակ ակադ. Վիկտոր Համբարձումյանը՝ մասնագիտությամբ աստրոֆիզիկոս։ Այս այն գիտնականն է, որ վերջին ժամանակներս հրավիրված էր Լոնդոն՝ արևտերի համաշխարհներում դասախոսություններ կարդալու։ Ակադ. Համբարձումյանը ունի իր օգնականները, որոնք կոչվում են վիցե-պրեզիդենտներ (փոխ-նախագահներ)՝ ամեն մեկը գիտության մի ասպարեզի համար։ Նրանցից մեկը ղեկավարում է ճշգրիտ գիտությունների խմբի գիտական աշխատանքները, երկրորդը՝ քիմիաբանության և հարակից մյուս գիտությունների խմբի աշխատությունները և երրորդը՝ հումանիտար գիտությունների ասպարեզը։ Հումանիտար գիտությունների խումբը ղեկավարում է պրոֆ. Մկրտիչ Ներսիսյանը։

Ակադեմիան, հումանիտար գիտությունների գծով, ունի երեք ինստիտուտ՝ Պատմության, Լեզվի, և Գրականության, իսկ ամեն ինստիտուտ ունի իրեն ենթակա փոքր խմբերը, որոնք մեզ մոտ կոչվում են սեկտորներ (բաժանմունքներ), օրինակ՝ Պատմության ինստիտուտն իր մեջ ընդգրկում է հնագիտության, հայ ժողովրդի պատմության հին և միջին շրջանների, հայ ժողովրդի պատմության նոր ու նորագույն շրջանների և Հայրենական պատերազմի պատմության սեկտորները։ Ակադեմիայի նախագահությանն են ենթարկվում տնտեսագիտության, արվեստի պատմության և փիլիսոփայության բաժինները, որտեղ ուսումնասիրվում են արվեստի, փիլիսոփայության և տնտեսագիտության մաքի զարգացումը Հայաստանում։

Հայագիտական երկրորդ օջախը հանդիսանում է Հայկական ՍՍՌ Երևանի Պետական համալսարանը, որտեղ աշխատում եմ և ես։ Հայագիտական աշխատանքներն այստեղ կենտրոնացված են գլխավորապես Հայ ժողովրդի պատմության, Հայոց լեզվի և Հայոց գրականության և այլ բաժիններում, որոնք մեզ մոտ կոչվում են ամբիոններ։

Գիտական զգալի աշխատանք է կատարում նաև Հայաստանի Պետական մատենադարանը, որտեղ աշխատում են աղբյուրագետ գիտական աշխատողներ, այն մասնագետները, որոնք ուսումնասիրում են մեր հայկական ձեռագրերը և վավերագրերը։

Վերջապես, հայագիտական կարևոր օջախներ են հանդիսանում նաև մեր ինստիտուտները, առանձնապես մանկավարժական ինստիտուտները։ Ես հատկապես նկատի ունեմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտը, Լենինականի մանկավարժական ինստիտուտը և Երևանի Հեռակա մանկավարժական ինստիտուտը, ուր նույնպես աշխատում են հայ ժողովրդի պատմության, գրականության և լեզվի մասնագետներ, դասախոսում են այստեղ և միաժամանակ գիտական աշխատանք կատարում։

Հայագիտական աշխատանքները, ինչպես և գիտության բոլոր ասպարեզների աշխատանքները, մեզ մոտ կատարվում են ըստ նեղ մասնագիտությունների։ Մեզ մոտ դուք երբեք չեք հանդիպի մի պատմաբանի ընդհանրապես։ Չի կարող որևէ մեկը լինել ամենագետ պատմաբան։ Մեզ մոտ պատմաբանը ունի իր նեղ մասնագիտությունը։ Ո՞ր ժողովրդի պատմության պատմաբան ես, և այդ պատմության ի՞նչ շրջանի մասնագետ։ Չի կարող մեկը ասել՝ թե ես հայ ժողովրդի պատմության բոլոր շրջանների մասնագետն եմ։ Ընդհանուր, բազմակողմանի զարգացություն, իհարկե, պիտի ունենա, բայց դրա հետ նաև՝ յուրաքանչյուր հայագետ ընտրում է իր նեղ մասնագիտությունը և խորանում նրա մեջ։ Այդպես է դրվում մեզ մոտ հարցը, այդպես են խորացվում, մասնագիտացվում բոլոր գիտությունները, որոնց թվում նաև հայագիտությունը։ Կաշխատեմ ըստ նեղ մասնագիտական խմբերի նեղակացնել հայագիտական մեր նորությունները։

Ես սկսում եմ հնագիտության ասպարեզից՝ հնագիտությունից, այն գիտությունից, որը կապված է երկրի պեղումների հետ։ Դուք գիտեք, որ մեր Հայրենիքը հարուստ է հնու-

թյուններով։ Ռուս գիտնականներից մեկը շատ դիպուկ է ասել, թե «Հայաստանը հնությունների թանգարան է առանց տանիքի։ Իրոք, Հայաստանում ամեն մի քայլափոխում դուք կհանդիպեք հին և միջին դարերի մի հուշարձանի, և երբեմն շատ արժեքավոր հուշարձանի։ Հայագիտության այս ճյուղը կոչված է փորփրելու և գտնելի տակից դուրս հանելու, լուսաբանելու մեր անցյալի հողով ծածկված հնությունները։

Այս ասպարեզում կատարված խոշոր աշխատանքներից մեկը վերաբերում է նախնադարյան հասարակության ամենահնագույն շրջանին։ Այս ասպարեզի ամենանշանակալից գյուտը կապված է մի հասարակ, փոքրաթիվ դիտական աշխատողի՝ Սանդրո Սարգարյանի անվան հետ. մի գյուղացի մարդ, որ Վաղարշապատի շրջանի գյուղերի մեկից եկել է սովորելու Երևանի համալսարանում, հաջողությամբ վերջացրել է այն և մտել Ակադեմիա աշխատելու։ Այս երիտասարդին հաջողվել է Արագածի լեռնախմբի մեջ մտնող Արտին լեռան Արեգունի բլրի Սատանի դար կոչվող վայրում գտնել բազմաթիվ օբսիդիանի գործիքներ (հատիչներ, քերիչներ, կացիններ, մուրճեր և այլն), որոնք հին քարեդարյան կամ պալեոլիթյան շրջանին են պատկանում և մարդկային փուստուրայի ամենահին նմուշներն են հանդիսանում։ Այդպիսի գործիքներ գտնված են Ֆրանսիայում, Ջինստանում և այլ վայրերում։ Սարգարյանի այդ գյուտը մեծ հետաքրքրություն ստեղծեց մեր հնագետների շրջանում. շատերն անդրադարձան այդ գյուտին, և վերջ ի վերջո բոլորը եկան այն եզրակացության, որ Սարգարյանի գյուտը իրապես բացառիկ է. դրանով փաստվում էր, որ Հայաստանը մարդկային հնագույն բնօրրաններից մեկն է։ Եվ այժմ Սովետական Միության ժողովուրդների պատմության դասընթացքներում Հայաստանը դրվում է աշխարհի հնագույն պատմություն ունեցող այն ժողովուրդների շարքում, որոնք անցել են հին քարեդարյան շրջանով։ Պետք է ասեմ, որ նախքան Սարգարյանի գյուտը, իշխող տեսակետն այն էր, որ Հայաստանը չի ապրել հին քարեդարյան շրջանը, որովհետև կարծվում էր, որ Սև ծովը և Կասպից ծովը ժամանակին միացած են եղել, իսկ Անդրկովկասի բաց տեղերում եղել են խոշոր հեղեղումներ, որոնք և ակոսել են մեր երկիրը, և ելնելով սրանից եզրակացնում էին, թե հնարավոր չէ հին մարդկային բնակություն փնտրել մեզ մոտ։ Ճիշտ է, նախքան այդ գտնվել էին հին քարեդարյան գործիքներ — Մորգանի գյուտը Արագածի փեշերին, ինչպես և մամոնտի որոշ մնացորդներ Լենինականում և Երևանի մոտիկ։ Ինչպես հայտնի է, մամոնտին հետևում է մարդը՝ նրան որսալու և նրա մսով և ողնուղեղով սնվելու համար։ Սակայն այդ ամենը ենթադրական եզրակացություններ էին համարվում, եզրակացություններ՝ խախուտ հիմքի վրա։ Իսկ Սանդրո Սարգարյանի գյուտից հետո անվիճելի դարձավ, և հեղինակավոր բոլոր գիտնականները համաձայնվեցին, որ Հայաստանը, իրոք, հնագույն մարդկային բնակության վայրերից մեկն է եղել։

Հնագիտական պեղումների ամենախոշոր աշխատանքները մեզ մոտ կատարվում են Երևանում, Կարմիր բլուր կոչվող վայրում։ Այս աշխատանքները ղեկավարում է պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին, որին կատակելով «փենսա» ենք ասում, որովհետև փինը հայուհի է։ Նա, խանդավառված իր գյուտերով, տարիներ շարունակ փորփրում է գետինը։ Ու պետք է ասել, որ նրա կատարած պեղումները բացառիկ արժեք ունեցան մեր պատմության համար։ Այն հարցը, որ Ուրարտուի պատմության վերջին շրջանը շատ հետաքրքիր է և սերտորեն կապված մեր հայրենի երկրի պատմության հետ, այդ, անվիճելի, ապացուցեց Պիոտրովսկին, և ապացուցեց՝ Կարմիր բլուրի պեղումների հիման վրա։ Այնտեղ բացվեցին հարյուրավոր սենյակներ, հայտնաբերվեցին հազարավոր զանազան իրեր։ Բարեբախտաբար, այս շքեղ ամրոցը երբ ընկել է, ընկել է սկյութական հարձակումից, ընկել է հրդեհից, և որովհետև նրա տանիքը եղել է փայտածածկ՝ ուստի և հրդեհված ամբողջ տանիքը նստել է, հարյուրավոր սենյակներն ավերվել են, հողով ծածկվել, ստեղծվել է հոդե մի բլուր, որը հետագայում հայտնի է դարձել Կարմիր բլուր անունով, Ոչ ոք չի ենթադրել, որ այդ բլուրն իր տակ ծածկել է հնությունների մի ամբողջ թանգարան։ Պիոտրովսկու բացահայտած հնությունները բացառիկ արժեք ունեն։ Այսպես օրինակ, հայտնաբերված է հակայական քանակությամբ կիսածխացած ցորեն, վարսակ, չուք և այլն, որով փաստվում է երկրագործության զարգացումը Ուրարտուում։ Ի դեպ, մեր գյուղատնտես մասնագետները հայտնաբերված այդ ցորենը համարում են վայրի ցորենից դեպի ընտանի ցորենն անցնող տեսակ։ Հայտնաբերված են դեկորատիվ վահաններ, սաղավարտներ, կապարճներ, որոնք ունեն ուրարտական զարդաքանդակներ և գրություններ, ոսկյա, պղնձյա և մետաղյա զանազան իրեր, ամաններ և այլն։

Հայտնաբերված նյութերից առանձնապես ուշադրության արժանի են մշակած քարերը. նրանք այնքա՜ն գեղեցիկ են, այնքա՜ն լավ հղկված, որ մարդ ակամա ապշում է ուրարտական քարակոփության վրա։ Կարմիր բլրից երևան եկած նոր հայտնաբերումների հիման վրա սովետական գիտնականները եկել են

այն եզրակացության, որ Ուրարտուն եղել է մեկը այն երկրներից, ուր առաջին անգամ երկաթ է գործածվել։ Քանի որ մենք Ուրարտուի ժողովրդին համարում ենք մի ժողովուրդ, որը հիմնականում ասիմիլյացիայի ենթարկվեց, այսինքն ձուլվեց մեր ժողովրդի էթնիկ խմբի մեջ, ուստի և այն մշակույթը, որ ստեղծել են ուրարտացիները, հիմնականում, մենք, հայրենի պատմաբաններս, համարում ենք հայ ժողովրդի սեփականություն։ Պրոֆ. Պիոտրովսկին Կարմիր բլրի պեղումների արդյունքները հրատարակել է «Կարմիր բլուր I» և «Կարմիր բլուր II» խորագրերով աշխատությունների մեջ։

Պեղումների երկրորդ խումբը կատարվում է Դվինում, Դվինի պեղումները ղեկավարում է դոցենտ Կարո Ղաֆադարյանը, մեր շնորհալի հնագետներից մեկը, որը միաժամանակ տնօրենն է մեր Պետական պատմական թանգարանի։ Դվինի պեղումները կատարում են թանգարանի գիտական աշխատողները։ Այս պեղումները ևս հետաքրքիր նորություններ են բերել հայ ժողովրդի պատմության, հատկապես մեր միջին դարերի պատմության համար։ Այն ենթադրությունը, որ Հայաստանում գտնված կուլտուրայի որոշ մնացորդներ նկամուտ են, դրսից բերված, հերքվում է Դվինի պեղումներով, որովհետև Դվինում գտնված են տեղական արտադրության բազմաթիվ նմուշներ։ Պեղումների արդյունքները հաստատում են արաբական աղբյուրների տեղեկությունները Դվինի մասին՝ որպես արհեստավորական և առևտրաշատ խոշոր կենտրոնի։

Պեղումների երրորդ խումբը կատարվում է Գառնիում։ Երևի դուք թերթերում կարդացել եք, որ պատահական ձևով մեր նկարիչներից մեկը՝ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը Գառնիում գտել է հունարեն մի արձանագրություն։ Այդ արձանագրությունն առաջին անգամ ուսումնասիրեց և «Սովետական Հայաստան» թերթում հրատարակեց հանգուցյալ պրոֆ. Ստ. Լիսիցյանը, նա առաջին անգամ հաղորդեց, որ այդ արձանագրությունը պատկանում է հայոց Տրդատ թագավորին։ Հետագայում այդ արձանագրության շուրջ ստեղծվեց բավականին մեծ հետաքրքրություն. նրա վերծանումով զբաղվեցին ակադ. Մանանդյանը, պրոֆ. Տրեվերը և մենք։ Պարզվեց, որ այդ իսկապես ուշագրավ մի արձանագրություն է, Արշակունյաց թագավորության շրջանից։ Մեզ մոտ միայն վեճ առաջացավ այն մասին՝ թե ո՞ր Տրդատի արձանագրությունն է, Տրդատ առաջինի՞, թե երկրորդի։ Բայց քանի որ արձանագրության մեջ ասվում է, թե տաճարը կառուցվել է ի պատիվ «Այրի աստվածների», ուստի և անվիճելի դարձավ, որ այդ առաջին Տրդատի, այսինքն Արշակունյաց հարստության հիմնադիր Տրդատի կառուցումն է։

Այս արձանագրության գյուտը մեր հնագետներին միտք ներշնչեց ձեռնարկելու Գառնիի պեղումները, որը պետք է ասել, տվեց լավ արդյունքներ։ Հողի շերտից բացվեց հրապարակային պարիսպը, շարված մինչև 8 տոննա ծանրություն ունեցող բազալտ քարերից։ Հայտնաբերվեցին բազմաթիվ իրեր, դրամներ, գործիքներ և այլն։ Բացվեց մի շատ հետաքրքիր շենք՝ մոզաիկածածկ (խճանկար) հատակով։ Բազմագույն խճաքարերով հատակի վրա զարդանկարված են մարդիկ, ձկներ և հունարեն գրություններ։ Ենթադրում են, որ այդ արքայական բաղնիքի շենք պիտի եղած լինի։ Հայտնաբերված այդ մոզաիկան հետաքրքիր է ոչ միայն այն տեսակետից, որ բացառիկ մի նորություն է թերում իր պատմությամբ, այլ հաստատում է մոզաիկայի արվեստի գոյությունը մեզ մոտ սկսած վաղեմի շրջանից։ Մենք ունեինք քրիստոնեական շրջանի մոզաիկայի երեք հատակ՝ Սրուսաղեմում, մի նոր մոզաիկա հայտնաբերվել է Դվինում, ահա ձեզ և նոր մոզաիկա՝ հեթանոսական շրջանից։

Հնագետների մի խումբ պեղումներ է կատարում Երևանից 6 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Արին բերդի ուրարտական ամրոցում։

Հայաստանում պեղումներ է կատարում և Հնությունների պահպանության կոմիտեն։ Այստեղ աշխատողներից ես պիտի հիշեմ Հ. Եղիազարյանի՝ տասնյակ տարիներ հնություններով զբաղվող, հնությունների հետ իր կյանքը կապած մի պատվական գիտնականի անուն, նա հավաքում է մեր վիմագիր արձանագրությունները, և արդեն զգալի աշխատանք է կատարել այդ ուղղությամբ։

Հնագիտության ասպարեզում շոշափելի աշխատանք է կատարել դրամագետ Ասլան Շահնազարյանը, ինչպես և Թորամանյանի աղջիկը, որ զբաղվում է իր հոր թողած գիտական ժառանգությունը հրատարակության պատրաստելու գործով։

Ի՞նչ աշխատանք է կատարվում աղբյուրագիտության գծով։

Աղբյուրագիտության գծով հիմնական աշխատանքը մեզ մոտ տանում է Պետական Մատենադարանը, և որոշ չափով՝ նաև Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը։

Մենք ուզում ենք թվարկել այն աշխատությունները, որոնք կարծում ենք, ձեզ համար նորություն են և կարող են հետաքրքիր լինել։

Ամենից առաջ, պետք է ուրախությամբ այստեղ հայտարարենք, որ արդեն ավարտած է Եղիշեի պատմության գիտական-համեմատական տեքստի կազմելու աշխատանքը. շու-

տով մենք կունենանք Եղիշեի՝ 5-րդ դարու ազատագրական շարժման մեր այդ ամենավոր պատմիչի գիտական-համեմատական տեքստը ճիշտ այն ձևով, ինչ ձևով ժամանակին կազմված է Խորենացու, Փարպեցու, Ագաթանգեղոսի և մի քանի այլ մատենագիրների համար։ Եղիշեի Պատմության տեքստը կազմել է հայտնի բանասեր պրոֆ. Երվանդ Տեր-Մինասյանը։ Այս գործը այս տարի, կարծում եմ, լույս կտեսնի։

Աղբյուրագիտական բնույթ ունեն և շատ արժեքավոր են վավերագրերի այն ժողովածուները, որոնք կազմվում են մեր Ակադեմիայի Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ։ Նրանք վերաբերում են հայ ժողովրդի պատմության նոր շրջանի տարբերնագրյուրներին։ Այս աշխատանքը կատարում են Ակադեմիայի մի խումբ գիտնականներ, որոնք ցարական նախկին արխիվներից ուսումնասիրում և հանում են այն բոլոր վավերագրերը, որոնք արժեքավոր են մեր ժողովրդի պատմության համար։ Այդ շարքի առաջին հատորը լույս է տեսել պրոֆ. Վարդան Պարսամյանի գլխավորությամբ և այժմ աշխատանք է տարվում երկրորդ հատորի վրա։

Մատենադարանի դիրեկտոր (տնօրեն) Լեվոն Խաչիկյանը կազմել է Հիշատակարանների ժողովածուի երկրորդ հատորը, որ դարձյալ ծրագրված է այս տարի հրատարակվելու համար։

Պրոֆ. Կարո Մելիք-Օհանջանյանը, որը մեր հին և ճանաչված հայագետներից է, այն գիտնականը, որ հանգուցյալ Մանուկ Աբեղյանի հետ միասին կազմեց ու հրատարակեց «Սասնա ծռերի» ժողովածուն, այժմ աշխատում է Կիրակոս Գանձակեցու Պատմության գիտական տեքստի կազմելու աշխատանքի վրա։ Կիրակոս վարդապետ Գանձակեցին, ինչպես հայտնի է, մեր լավագույն պատմիչներից է, սակայն նրա պատմության հրատարակված տեքստում տեղ են գտել բազմաթիվ աղավաղումներ։ Պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը մեր Մատենադարանի լավագույն ձեռագիր ընդօրինակությունների հիման վրա կազմում է Գանձակեցու գիտական-համեմատական տեքստը։

Մատենադարանի հանձնարարությամբ մի քանի տարի է, որ մենք աշխատում ենք Հովհաննես Սարկավագի գիտական մատենագրության վրա։ Հայտնաբերված են տվյալ մատենագրի ավելի քան քսան նոր տեքստեր, որոնք պատրաստել ենք տպագրության։ Ամբողջ աշխատանքը, ծավալով մոտ քսան մամուլ, պետք է լույս տեսնի այս տարի Պետական Համալսարանի հրատարակությամբ։

Երևի դուք ծանոթ եք Վազգեն Հակոբյանի «Մանր ժամանակագրությունների» հետ, որ հրատարակվեց տարիներ առաջ։ Մենք մեր առջև խնդիր ենք դրել հավաքել մեր մանր ժամանակագրությունները, որոնք ցրված են ձեռագրերում,— նրանց մի մասը տպագրված է, իսկ մյուս մասն անտիպ,— և ամփոփել առանձին հատորների մեջ։ Այդ աշխատանքը ծրագրված ձևով առաջ է տարվում։ Հակոբյանն այժմ պատրաստել և տպագրության է հանձնել «Մանր ժամանակագրությունների» երկրորդ հատորը։

Զգալի աշխատանք է կատարվել նաև մեզ մոտ հայկական տաղերի հավաքման և ուսումնասիրության ուղղությամբ։ Այդ գործի վրա աշխատում է հայագետների մի ամբողջ խումբ— տիկին Շուշանիկ Նազարյան (բանասիրական գիտությունների թեկնածու), տիկին Մարիա Ավդալբեկյան (բանասիրական գիտությունների թեկնածու), Ա. Մնացականյան (Մատենադարանի գիտական աշխատող) և ուրիշներ։ Նաղաշ Հովնաթանի տաղերն արդեն լույս են տեսել, իսկ այս տարի պիտի լույս տեսնի նաև «Հայերենները» ժողովրդական բանահյուսության հավաքման գործում մեծ աշխատանք է կատարվում Գրականության ինստիտուտի ֆոլկլորի բաժնում, գիտական աշխատող Արամ Ղանալանյանի գլխավորությամբ, որի կազմած «Հայկական առածանին» հետ դուք այստեղ ծանոթ եք։

Աղբյուրագիտության խմբին պետք է դասել նաև մանրանկարչության պատմության գծով կատարված ուսումնասիրությունները։ Պետք է ասել, որ ոչ միայն հայ, այլև ռուս և մեր հարևան մյուս ժողովուրդների մասնագետների կարծիքով, հայ մանրանկարչությունը բացառիկ տեղ ունի մարդկային կուլտուրայի պատմության մեջ։ Երևի դուք ծանոթ եք օրիորդ Դուտնովայի կազմած և խմբագրած «Հայկական մանրանկարչություն» ալբոմի հետ։ Պետք է ասել, որ այդ ալբոմը մանրանկարչության պատմության գծով մեր սկսած աշխատանքների սկիզբն է միայն, նրա առաջին պտուղը։ Ի դեպ, հայ մանրանկարչության մի խումբ մասնագետներ, օրիորդ Դուտնովայի գլխավորությամբ, այժմ աշխատում են Էջմիածնի Մայր Տաճարի մանրանկարչության վրա՝ նպատակ ունենալով վերականգնել Նաղաշ Հովնաթանի նախկին բոլոր որմանկարները։ Այս տարի ռուսերեն թարգմանությամբ լույս տեսան Մխիթար Հերացու «Զերմանց մխիթարութիւն» աշխատությունը և Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»։

Բարձր պատրաստություն ունեցող մի խումբ հայագետներ տեսական-հետազոտական լուրջ աշխատանքներ են կատարում հայ ժողովրդի համար ակզբունքային նշանակություն ունեցող հարցեր լուծելու ուղղությամբ։ Այս խմբի մեր գիտնականների գլուխ է կանգնած ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյա-

նը։ Ինչպես իր առաջացած տարիքին, երիտասարդի ավյունով աշխատում է նա մեր անցյալի պատմության և լեզվի կնճռոտ հարցերը լուսաբանելու ուղղությամբ։ Նրա ուսումնասիրության թեման գլխավորապես մեր նախաբնիկների պատմությունն է ու լեզուն՝ ովքե՞ր են եղել մեր երկրի նախաբնիկները, ի՞նչ մշակույթ են ունեցել, ի՞նչ ասելություն են ունեցել մեզ հետ, ի՞նչ փոխհարաբերություններ մեջ են գտնվել մեր հարևանների հետ և այլն. խնդիրներ՝ որոնք հազարավոր տարիների հնություն ունեն և որոնց լուծումը կապված է մեծ դժվարությունների հետ։ Բայց մեր մեծանուն գիտնականի քաջ հմտությունը հին ասվելյան մի շարք լեզուների, ընձեռում է նրան հնարավորություններ՝ հեռավոր անցյալի շատ կընճռոտ հարցերի լուծման համար։

Այս նույն ժամանակաշրջանով զբաղվում է Մարգո Խաչատրյանը՝ մեր լավագույն ուրարտագետներից մեկը։ Ի պատիվ մեր աղջկանց և կանանց պետք է ասեմ, որ կանայք մեզ մոտ խոշոր գործ են անում և արժեքավոր մուծումներ ունեն գիտության ասպարեզում։ Մարգո Խաչատրյանը այժմ զբաղված է ուրարտական արձանագրությունների հավաքման, գիտական մշակման և թարգմանության գործով։

Հայ ժողովրդի պատմության հին շրջանի մեր լավագույն ուսումնասիրողներից է պատմական գիտությունների դոկտոր Սուրեն Երեմյանը, մեր Ակադեմիայի Պատմության ինստիտուտի դիրեկտորը։ Այս գիտնականը վերջերս գտնվում էր Լոնդոնում, մասնակցում էր այնտեղ հրավիրված արևելագետների ժողովին, և հանդես եկավ գիտական զեկուցումով։ Նա վերին աստիճանի հավասարակշռված, գիտականորեն պատրաստված և սուր տրամաբանությամբ օժտված գիտնական է։ Նա հատկապես խոշոր գործ է կատարում Արտաշիսյան շրջանի տնտեսական կյանքի ուսումնասիրության ուղղությամբ։ Նա է առաջադրել սարկատիրական հասարակության թեզը հին Հայաստանում։ Նրա առաջքաշած այս և մյուս թեզերն, ընդհանրապես, ինքնատիպ են և հետաքրքիր։

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության գծով մեծ աշխատանք է կատարում Մորուս Հասրաթյանը՝ մի համեստ գիտնական, որի անունը դուցե աստեղ շեք էլ լսել, բայց որը, իրականության մեջ, տաղանդավոր անձնավորություն է։ Նա այժմ աշխատում է հայ ժողովրդի պատմության միջնակարգ դպրոցների դասագրքի վրա։

Ես, ի դեպ, պետք է ասեմ, որ հայ ժողովրդի պատմության գիտական դասընթացքի կազմումը մեզ համար կարևոր մի խնդիր է, քանի որ մեր բոլոր դպրոցներում, առանց բացառության, նույնիսկ Հայաստանում եղած ռուսական դպրոցներում, պարտադիր ձևով անցնում են հայերեն լեզուն և հայ ժողովրդի պատմությունը որպես Մայր Հայրենիքի պետական լեզու և պատմություն։ Ըստ այդում, մեր դպրոցների բարձր դասարաններում հայ ժողովրդի պատմությունը դասավանդվում է երեք տարվա դասընթացքով՝ հին, միջին և նոր։ Հայ ժողովրդի պատմության բարձրագույն դասընթացքը դասավանդվում է մեր մանկավարժական ինստիտուտների և Պետական համալսարանի պատմության և բանասիրական ֆակուլտետներում, ներառյալ նաև ռուսական բանասիրական բաժինը։

Հայ ժողովրդի պատմության գիտական դասընթացք կազմելու գործում, Մորուս Հասրաթյանի հետ միասին, զգալի աշխատանք է կատարում դոցենտ Համո Հարությունյանը։

Դուք ճանաչում եք անշուշտ Հայկազ Ժամկոչյանին. ձեր այստեղի որբերից է, որ եկել է Հայրենիք, իր ընդունակություններով հասել է բարձունքների և այժմ ղեկավարում է մեր Պետական համալսարանի պատմության ֆակուլտետը։ Իսկ Համո Հարությունյանը վանեցի է, հայ ժողովրդի պատմության նվիրված մի մասնագետ, որ հոգեին ապրում է իր առարկայով։ Աշխատում է մանկավարժական ինստիտուտում։ Նա հայ ժողովրդի պատմության որևէ շրջան դասախոսելիս կոնսպեկտ չի օգտագործում. մի գավազան ունի ձեռքը, որ գետին խփելով բարձրանում է ամբիոն, հարցնում՝ «որտե՞ղ կանգնեցինք», և հանգիստ շարունակում դասախոսությունը։

Պետական համալսարանի մեր ճանաչված դասախոսներից է Սերոբ Պողոսյանը, որը ուսումնասիրում է հայ ժողովրդի պատմության միջին դարերի սոցիալ-տնտեսական հարաբերությունները։ Իր այդ ուսումնասիրության երկու հատորները, ավելի քան 1.000 էջ ծավալով, որպես դոկտորական թեզ ներկայացրել է քննության հայ ժողովրդի պատմության մեր ամբիոնին։

Հայ ժողովրդի պատմության արարական և մոնղոլական շրջանների մասին արժեքավոր հետազոտություններ են կատարել երիտասարդ գիտնականներ Լևոն Բարսեղյանը, Հայկարամ Ուլիմաջյանը և Ստեփան Մելիք-Բաշխյանը, երեքն էլ պատմական գիտությունների թեկնածուներ։ Նրանց ուսումնասիրությունները լույս են տեսել մեզ մոտ, Մելիք Բաշխյանի աշխատությունը նվիրված է Պավլիկյան սոցիալական շարժմանը։

Հայրենի երկրում զգալի աշխատանք է կատարված նաև Կիլիկիայի պատմության ուսումնասիրության ուղղությամբ։ Ես ի նկատի ունեմ առաջին հերթին հանգուցյալ սրբազ.

Գրիշա Միքայելյանի «Կիլիկիայի պատմությունը» աշխատությունը, որը, իմ կարծիքով, Կիլիկիայի պատմության ամենից գիտական և վերլուծական ուսումնասիրությունն է, նա օգտագործել է ոչ միայն մեր հայ մատենագիրները, եվրոպական ու հայ գիտնականների ուսումնասիրություններ, այլև բազմաթիվ հիշատակարաններ և այլ աղբյուրներ, որոնք մեծ նորություն են բերում Կիլիկիայի պատմությանը։ Կիլիկեան շրջանով զբաղվում է նաև դոցենտ Աշոտ Գալստյանը, թեզ ունի «Հեթումը որպես դիվանագետ», նրա բանակցություններով Մանկու խանի հետ։

Հայ փիլիսոփայության պատմությամբ է զբաղվում դոկտ. Վազգեն Չալոյանը, հայ փիլիսոփայության պատմության շնորհալի մասնագետներից մեկը։ Նա գիտի հին հունարեն ու հին հայերեն լեզուները, տիրապետում է հայ փիլիսոփայության պատմությանը։ Նա հրատարակած ունի ուսումնասիրություններ՝ Եզնիկի և Դավիթ Անհաղթի մասին, իսկ այժմ աշխատում է Վերածննդի հարցի վրա։ Չալոյանի կարծիքով, Վերածունդը, որը համարվում է եվրոպական երևույթ, նախապես ստեղծվել ու զարգացել է Արևելքում. Վերածննդի նախնական հայրենիքն են հանդիսացել Արաբիան, Պարսկաստանը և Անդրկովկասը։ Պետք է ասել, որ նա բավականին համոզեցուցիչ փաստեր է բերում այն մասին, որ արևմտյան եվրոպացիները շատ բան ընդօրինակել են մեր՝ արևելյան ժողովուրդներից, յուրացրել են ճարտարապետության որոշ ձևեր, մանրանկարչական արվեստի նմուշներ, սոցիալական գաղափարներ և այլն։ Այս մասին ես չեմ ցանկանում ծավալվել, որովհետև այս թեմայով ես զեկուցում ունեմ և կխոսեմ իր ժամանակին։ Փիլիսոփայության պատմությամբ է զբաղվում նաև մեր լուրջ գիտնականներից պրոֆ. Հենրի Դաբրիելյանը։

Նոր շրջանի պատմության մեր լավագույն ուսումնասիրողներից է պրոֆ. Վահան Ռըշտունին, Պետական համալսարանի մեր հին պրոֆեսորներից, որը մեր միջին սերնդի պատմաբաններից շատերի ուսուցիչն է եղել։

Հայագիտության մեջ ստեղծագործ ներդրում ունի դոցենտ Բենիամին Հարությունյանը, որը ուսումնասիրում է հայ ժողովրդի տնտեսական կյանքի պատմությունը։

Նոր շրջանի մեր լավագույն պատմաբաններից է պրոֆ. Վարդան Պարսամյանը. նա ղեկավարում է պատմաբանների այն խմբին, որը, ինչպես ասացի, զբաղված է Մոսկվայի արխիվներում հայ-ռուսական հարաբերությունների՝ վերաբերող վավերագրեր հավաքելով։

Նոր շրջանի մեր պատմության լավագույն մասնագետներից են պրոֆ. Մ. Ներսիսյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Ստեփան Հարությունյանը, Վարդան Ավետիսյանը, Ավետիք Ադամյանը, Խաչիկ Բաղալյանը, Օ. Ինճիկյանը, Բենիկ Օհանյանը, Արշավիր Հարությունյանը և տասնյակ երիտասարդ այլ պատմաբաններ, որոնք ուսումնասիրում, ստեղծագործում են, հրատարակում իրենց աշխատությունները։ Հայ ժողովրդի պատմության նոր շրջանին վերաբերող աշխատությունների վրա, դժբախտաբար, մենք կանգ առնելու հնարավորություն չունենք, բայց կարող եմ հավատիացնել, որ նրանք իրենց մեթոդոլոգիայով, իրենց տեսությամբ շատ բարձր են կանգնած։

Ի տարբերություն մեր անցյալի հայագիտության, մեզ մոտ այժմ մեծ ուշադրություն է դարձվում գիտության պատմությանը։ Պարզվում է, որ մեր պապերը, մեր դարաբաս պապերը, իրենց համեստ մուծումներն ունեն նաև գիտության պատմության մեջ։

Մեզ մոտ, բժիշկների մի ամբողջ խումբ ուսումնասիրում է հայ բժշկության պատմությունը։ Պետք է ասել, որ հայ ձեռագրերը շատ հարուստ են բժշկարաններով, բժշկարաններ, որոնք ամփոփում են, կարելի է ասել, ողջ Արևելքի իմաստասիրությունը. այնտեղ դուք կգտնեք և՛ արաբական, և՛ պարսկական, և՛ սասորական, և՛ հրեական, և՛ տեղական՝ հայկական բժշկության վերաբերող հազարավոր, տասնյակ հազարավոր դիպուտմաներ այս կամ այն հիվանդության մասին, եվ այս ամենը պահվել են հայ բժշկարաններում։

Հայ բժշկության պատմության ուսումնասիրությամբ զբաղվողներից միայն ակադ. Ս. Մալխասյանցն է, որ բժիշկ չէ եղած, իսկ մյուս բոլորը բժիշկներ են։ Հանգուցյալ Մալխասյանցը հրատարակել է Ամիրդովլաթի, 17-րդ դարի հայ նշանավոր բժշկի՝ «Գաղտ բժշկութեանց», «Հաւատն բժշկութեան» և «Ախրաբադին» աշխատությունները։ Սակայն նա չէր կարող այն արդյունքն ունենալ, ինչ որ հետագայում ունեցան բժիշկ մասնագետները, որոնք այս կամ այն խնդիրը կարողանում են հեշտ ըմբռնել և պատշաճ ձևով գնահատել։ Միութենական ակադեմիայի իսկական անդամ պրոֆ. Լևոն Հովհաննիսյանը ուսումնասիրել է ու հրատարակել «Հայ բժշկության պատմությունը», բաղկացած հինգ մեծածավալ հատորներից, ռուսերեն լեզվով, որոնք ամփոփում են հայ բժշկության ողջ պատմությունը։ Ըստ որում, հեղինակը դեռ դժգոհ է իր աշխատանքից, գտնում է, որ դեռ թերի է այն։ Նա ցանկանում է իր այդ աշխատությունն ավելի ընդարձակել և հրատարակել նաև հայերեն թարգմանությամբ։

Բժիշկներից պրոֆ. Մելիք-Փարսադանյանը, ականջի և կոկորդի մասնագետ, երկար

տարիներ ուսումնասիրում էր Մխիթար Հերացու «Ցաղաղաց չերմանց մխիթարութեան» աշխատությունը, որը լույս է տեսել վերջերս։ Այժմ նա շարունակում է իր աշխատանքները Գաղիանոսի քառարանի հայկական տեքստի վրա։ Հայ բժշկության պատմության գծով շնորհակալ ուսումնասիրություններ է տալիս երիտասարդ բժիշկ Արծրունի Կծոյանը ևս, որը աշխատում է հայկական բժշկարանների վրա և միաժամանակ Բժշկական ինստիտուտում դասախոսում հայ բժշկության պատմություն։ Նրա ուսումնասիրության առանձին գլուխները հրատարակվում են Գիտությունների ակադեմիայի տեղեկագրերում։

Հայկական ձեռագրերում բացառիկ արժեք ունեցող նյութեր հայտնաբերվեցին մաթեմատիկայի պատմությունից։ Հավանական է գիտենք այն նորությունները, որոնք կապված են 7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու անվան հետ, որին մենք պիտի անդրադառնանք մեր հաջորդ զեկուցումներից մեկում։

Հայոց մաթեմատիկայի պատմության ուսումնասիրության գծով խոշոր գործ է կատարում մեր համալսարանի ռեկտորը՝ դոց. Գարեգին Պետրոսյանը։ Ինքը գյուղացու, չարքաշ գյուղացու տղա է եղել, ժամանակին եկել, սովորել է համալսարանում և իր տքնաջան աշխատանքով բարձրացել մինչև դասախոսի և ռեկտորի աստիճանի։ Նա այժմ աշխատում է դոկտորական դիսերտացիայի վրա՝ թեզ ունենալով «Հայ մաթեմատիկայի պատմությունը»։ Աշխատանքն ավարտել է. երկու ստվար հատոր է կազմում այն, ես մոտից ծանոթ եմ այդ աշխատության հետ, և պետք է ասեմ, որ նա կատարել է խոշոր և շատ գնահատելի աշխատանք, մեր ժողովրդին պատիվ բերող աշխատանք։ Իմ մի զրախոսականում ես առաջարկել եմ այդ ուսումնասիրությունը հրատարակել ինչպես հայերեն, այնպես և ռուսերեն լեզուներով։

Զգալի աշխատանք է կատարվում նաև ալքիմիական ձեռագրերն ուսումնասիրելու ուղղությամբ։ Թվում է, թե այս մի սապարեզ է, որ գիտության հետ ոչ մի կապ չունի, և նրանով զբաղվելն անմտություն է։ Բայց, իրականության մեջ, մեր գիտնականները պարզեցին, որ այդ ևս արժանի է ուշադրության։

Մեր կին շնորհալի գիտնականներից մեկը՝ Աշխեն Հարությունյանը, որը ղեկավարում է բժշկական ինստիտուտի քիմիական բաժինը, այժմ ուսումնասիրում է հայկական ալքիմիական ձեռագիր ժողովածուները՝ խնդիր ունենալով պարզել մեզ մոտ հնում գործածված ներկերի բաղադրությունը։ Կարևոր հարց է՝ թե մեր ձեռագրերի ներկերը, մանավանդ մանրանկարչության մեջ գործածված վառ գույները ինչի՞ց են պատրաստված, ինչպե՞ս է, որ դարերը չեն կարողացել խունացնել այդ նկարները։ Եվ, պետք է ասել, որ տիկին Հարությունյանի համար աշխատանքները տվել են արդեն որոշ արդյունքներ։ Նրան հաջողվել է պարզել այդ ներկերից մի քանիսի բաղադրությունը։ Նա իր ստացած գույներով կտորներ է ներկել և ենթարկել փորձարկման— ուժեղ լույսը, օդի ատիճանը չեն ազդում այդ ներկերի վրա։ Եվ այժմ մեզ մոտ խոսվում է այն մասին, թե չի՞ կարելի արդյոք այդ գույները օգտագործել արտադրության մեջ, ներկել, զոր օրինակ, մետաքսյա կերպասներ և այլն։

Քիմիայի պատմության գծով լուրջ աշխատում է նաև դոցենտ Տիգրան Ղազանչյանը։ Նա գրել և հրատարակել է մի շարք ուսումնասիրություններ նվիրված քիմիայի պատմությանը Հայաստանում։

Մեր կին գիտնականներից հայ արվեստի պատմության գծով շնորհալի աշխատանք է կատարում պատմական գիտությունների թեկնածու Վալիկ Աբրահամյանը, որի ստվարածավալ աշխատությունը՝ «Արհեստները հին Հայաստանում» գտնվում է տպագրության ընթացքի մեջ։

Շատ եմ ցավում, որ դուք այստեղ չեք ստանում մեր Գիտությունների ակադեմիայի տեղեկագրերը, ինչպես և մեր Պետական համալսարանի գիտական աշխատությունների շարքը։ Այդ հատորների մեջ տեղավորված են շատ արժեքավոր ուսումնասիրություններ մեր անցյալի պատմությունից, դրականությունից, արվեստի պատմությունից։

Մեր գիտնականներից մի քանի հոգի զբաղվում են խազերի ուսումնասիրությամբ։ Ինչպես հայտնի է, մեզ հասել են բազմաթիվ հայերեն ձեռագրեր, խաղագրքեր, շարակնոցներ և տաղարաններ, որոնք խաղագրված են, այսինքն նոտագրված մեզ անհայտ նշաններով։ Հայկական խազերով ժամանակին զբաղվել է Կոմիտասը. աշխատել է վերծանել նրանց, բայց արդյունքները մնացել են մեզ անհայտ։ Մեզ մոտ հայկական խազերի վերծանման աշխատանքով զբաղվում են Ռոբերտ Աքայանը և Մուշեղ Աղայանը՝ Ղազարոս Աղայանի որդին։ Երբ նրանց հաջողվի վերծանել մեր խազերը, այն ժամանակ մենք հնարավորություն կունենանք ո՛չ միայն կարդալու մեր հին տաղերը, մեր գանձերը, մեր շարականները, այլև երգել այն եղանակով, ինչ եղանակով ժամանակին երգել են և խազագրել։

Տասնյակ տարիներ հայկական տոմարի պատմությամբ է զբաղվում պրոֆ. Լեոն Սեմյոնովը, նա հայկական տոմարի մասին գրել է մի ուսումնասիրություն երեք հատորից։

որը, որքան մեզ հայտնի է, այս տարի պիտի հանձնվի տպագրության։

Ես չեմ ուզում ծանրանալ լեզվաբանության վրա. ձեզ հայտնի են ակադ. Աճառյանի և նրա աշակերտների ուսումնասիրությունները այդ ասպարեզում։ Բավական է թեկուզ նշել, որ տպել է մեծանուն լեզվաբանի «Հայերենի լիակատար քերականություն» աշխատության հրատարակությունը՝ 552 լեզուների համեմատությամբ։ Դուք ծանոթ եք անվանի լեզվաբաններ պրոֆ. Ա. Ղարիբյանի, դոց. Ա. Աբրահամյանի, պրոֆ. Գ. Սևակի և պրոֆ. Է. Աղայանի աշխատությունների հետ։

Մի քանի խոսքով ես ցանկանում եմ կանգ առնել այն հարցի վրա, թե ի՞նչ ձևով է մեզ մոտ կատարվում հայագիտների մասնագիտացման գործը։

Ինչպես գիտեք, մեզ մոտ երիտասարդների համար լայն հնարավորություններ կան զարգանալու և դրսևորելու իրենց ունակությունները։ Մեզ մոտ միջնակարգ դպրոցն ավարտած ամեն մի երիտասարդ կարող է սովորել Պետական համալսարանում և 17 տարբեր ինստիտուտներում և սովորել պետության հաշվին, պետությունից թոշակ ստանալով։ Արտեղ ես իմացա, որ ձեզ մոտ ով գնում է համալսարան սովորելու, նրանից փող են առնում։ Մեզ մոտ հակառակն է. նա՝, ով սովորում է, փող է ստանում։ Մեզ մոտ հնարավորություն են ստանում սովորելու և՛ քաղաքի, և՛ գյուղի երիտասարդներն առանց խտրանքի։

Մեզ մոտ ուսանողները սովորում են 4—5 տարի։ Հինգ տարվա ընթացքում դասախոսը ուշադիր հետևում է ուսանողների զարգացման ընթացքին և հաշվի առնում, թե ո՞րն է, որ բացակի ընդունակություններ է դրսևորում։ Մեր լավագույն ուսանողների միջից, կամ ինչպես ասում են՝ գերազանցիկ ուսանողների միջից, իսկ գերազանցիկ է կոչվում այն ուսանողը, որը հինգ տարվա ընթացքում անվերջ «հինգեր» է շարում իր գնահատականների ցուցակում, ֆակուլտետի գիտական խորհուրդը ընտրում և հանձնարարում է նրան՝ ասպիրանտուրայում ընդունվելու համար։ Ահա այսպես ենք մենք ընտրում այն երիտասարդներին, որոնք ապագայի գիտնականներ պիտի դառնան։ Բայց սրանով դեռ մեր աշխատանքը չի սպառվում. երիտասարդի վրա դեռ երեք տարի ևս աշխատանք ենք թափում՝ ղեկավարությունը հանձնելով իր մասնագիտության ոլորտով ճանաչված գիտնականի։ Ղեկավարը դասախոսը պարտավոր է աճեցնել այդ երիտասարդն այնպիսի հասունության, որ վերջինս կարողանա ներկայացնել իր թեկնածուական դիսերտացիան, այսինքն՝ ավարտական թեզը։

Մի քանի խոսք մեր դաստիարակության մեթոդի մասին. այդ գուցե հետաքրքիր կլինի այստեղ ներկա գտնվող դասատուներից նրանց համար, ովքեր հայ ժողովրդի պատմության դասատուներ են։

Այդ հարցը մեզ մոտ հատուկ քննության է առնվում։ Մեր ժողովրդի պատմությունն ինչի՞ վրա է, որ պետք է ուշադրություն դարձնի։ Դուք գիտեք, որ մեր ժողովրդի պատմությունը լի է դժբախտություններով և դառնություններով։ Բայց մենք դրանց վրա չէ, որ ծանրանում ենք։ Մեր պատմության մեջ ունենք և հերոսական էջեր. վերջինիս վրա է, որ մենք շեշտ ենք դնում։ Մեր ցանկությունն է, որ մեր երիտասարդները ո՛չ թե հոգեպես ճնշվեն անցյալի լաց ու կոծը լսելով, այլ ոգևորվեն, թևավորվեն անցյալի հերոսապատումներով։ Մենք ցանկանում ենք մեր երիտասարդությանը դաստիարակել հերոսական ոգով, սովորեցնենք մեր նախնիքների հերոսական էջերի վրա։ Մենք չենք ուզում, որ մեր երեխաները, մեր ուսանողները ճնշվեն այն մտայնությամբ, որ մենք խեղճ ենք եղել, որ մեր պապերը միամիտ են եղել և այլն։

Հայրենասիրության հետ միասին մենք դաստիարակում ենք նաև մարդասիրության վեհ սկզբունքով. մենք ասում ենք՝ սիրեցե՛ք ձեր ժողովուրդը, սիրեցե՛ք ձեր Սովետական Հայրենիքը, սիրեցե՛ք ձեր ողջ հոգով, ձեր սրտով, բայց միևնույն ժամանակ մի՛ առեցեք ձեր հարևաններին։ Այս մեր դաստիարակության հիմնական սկզբունքներից մեկն է՝ լինել հումանիստ, լինել մարդասեր։

Եվ, ի պատիվ Սովետական Հայաստանի մեջ աճող, բարձրացող սերնդի, պետք է ասել, որ նրանք բարձր են կանգնած. բարձր մեր միջին սերնդից, բարձր իրենց հայրենասիրությամբ, արժանապատվության գիտակցությամբ, ընկերասիրությամբ ու մարդասիրության վեհ դաղափարներով։

Եվ, վերջապես, մի քանի խոսք մեր հայրենադարձների մասին՝ կապված հայագիտության հետ, որը, անշուշտ, ձեզ շատ է հետաքրքրում։

Ինչպես ուսման և աշխատանքի բոլոր ասպարեզներում, այնպես և հայագիտության ասպարեզում մեր հայրենադարձները լիովին արդարացրին իրենց։ Մեր հայրենադարձների մեջ գտնվեցին շնորհալի երիտասարդներ, որոնք մասնագիտանալով մեր բարձրագույն ուսումնական հաստատություններում, ի շարս գիտության մի շարք ասպարեզների, կարողացան օգտակար լինել նաև հայագիտական ասպարեզում։ Նրանց հաջողության գործում պետք է առանձնապես նշել մեր

հայրենի պետության, մեր կազմակերպությունների, մեր գիտնականների և դասախոսների ցուցաբերած բացառիկ սիրացավ վերաբերմունքը։ Գաղտնիք չէ, որ միջնակարգ կրթությունը դիտում ստացած մեր ուսանողությունը վատ գիտեր հայոց լեզուն, հայ ժողովրդի պատմությունը, մասամբ նաև՝ դրական գիտությունները՝ ֆիզիկան, մաթեմատիկան և քիմիան։ Կարելի է ասել բոլորովին չգիտեին ռուսաց լեզուն։ Հայրենիքի դասախոսները նախ աշխատեցին վերացնել դրսից եկած իրենց եղբայրների այդ թերությունները, օգնեցին հասնելու իրենց ընկերներին, և կարճ ժամանակում հայրենադարձները կարողացան արդարացնել իրենց վրա դրված հույսերը։

Ես ճանաչում եմ հայրենադարձ շատ ուսանողների Պետական համալսարանում, բայց նրանցից մեկի հետ կապված է ինձ հուզող մի դեպք, որ ուզում եմ պատմել այստեղ։ Տարիներ առաջ, երբ ես եկել էի որպես Ամենայն Հայոց Հայրապետի պատվիրակ (1944 թվականին), իսկ այն ժամանակ դեռ ոչ մի խոսք չկար հայրենադարձի մասին, ինձ է մոտենում մի ուսանող և առաջարկում է հուշատետրը ստորագրելու։ Ես, չգիտեմ ի՞նչ զգացմունքով տարված, հետևյալ տողերն եմ գրել այնտեղ. «Ես ինձ երջանիկ կզգայի, եթե Ձեզ հաջորդ անգամ հանդիպեի Երևանում, Պետական համալսարանում, և դուք որպես իմ ուսանողը մոտենայիք ինձ ու հարցնեիք՝ «Պրոֆեսոր, ճանաչո՞ւմ եք ինձ, չէի՞ք ուզենա իմ հուշատետրում վերհիշել Ձեր երկուսդը»։ Եվ ի՞նչ պատեհություն. այդ ուսանողը տարիներ հետո, իրոք, իր այս հուշատետրը մեկնում է ինձ մեր Պետական համալսարանում... Դուք կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ երջանկություն եմ ապրում ես այդ բոպեին։

Որպեսզի դուք պատկերացնեք մեր հայրենադարձ ուսանողության հաջողությունները գիտության ասպարեզում, ես միայն մի թիվ կարող եմ տալ. Գիտությունների ակադեմիայում ներկայումս սովորող 170 ասպիրանտներից 14-ը հայրենադարձներ են (ասպիրանտ է կոչվում այն մասնագետը, որ պատրաստվում է գիտական աշխատող դառնալու համար)։ Ըստ որում այդ դիրքին նրանք հասել են իրենց աղնիվ աշխատանքով, իրենց համառությամբ, իրենց բրտինքով։

Հայագիտության ասպարեզում աշխատող մեր երիտասարդ հայրենադարձներից երևի դուք ճանաչում եք Գասպար Գասպարյանին, որը մասնագիտությամբ փիլիսոփա է և զբաղվում է նոր շրջանի փիլիսոփայության պատմությամբ՝ թեզ ունենալով, կարծեմ, «Գալուստ Կոստանյանի փիլիսոփայական հայացքները»։ Իր ընդը նա գրել, պաշտպանել է, քննվել է այն փիլիսոփայական սեկտորում և այժմ մնում է հրատարակել այն։

Վերջերս ավարտական փուլում թեզ պաշտպանեց և Պատմության ինստիտուտի գիտական աշխատանքի անցավ հայրենադարձ Հակոբ Փափազյանը։ Իրանից նա հրաշալի գիտի սարսկերենը, իսկ այդ մեզ կարևոր է սարսկերեն աղբյուրները ուսումնասիրելու և հայոց պատմության մեջ օգտագործելու համար։

Պատմության նույն ինստիտուտում ասպիրանտ է հայրենադարձ Բարտիկյանը, որ եկել է Հունաստանից։ Նա լավ գիտի հունարեն, ուզում է «Հելլեն դիք» աշխատության հեղինակին, հայրը աշխատում է Ակադեմիայի գրադարանում, կարծեմ օտար գրականության բաժնում, իսկ տղան, որ անցել է հորից, այժմ ասպիրանտ է և մասնագիտանում է հայ ժողովրդի պատմության մեջ, նրա դեկավարն է ակադեմիկոս Հովսեփ Օրբելին։ Բարտիկյանը երեք ամիսը մեկ անգամ գնում է Լենինգրադ, ուսաղդրություններ է ստանում իր դեկավարից և դալիս է Հայաստան, աշխատում սկզբնաղբյուրների վրա և կատարում տրված առաջադրությունները։

Հայագիտության ասպարեզում հայրենադարձ հայագետներից մասամբ ճանաչում եմ Ա. Տիրացյանին, Հակոբ Արամյանին, Առաքել Պատրիկին, Գևորգ Տերյանին, Տիրան Խրմոյանին, Հակոբ Թրյանցին, Սյուսահյաններից երկու հոգու, և մի քանի ուրիշներ, որոնց անունը չեմ հիշում։

Մեզ, հայագետներիս հատկապես ուրախացնում է այն իրողությունը, որ հայագիտությունն այժմ այն վիճակի մեջ չէ, ինչ անցյալում էր, և կամ ինչպես ներկայումս ձեզ մոտ է։ Հայրենիքում հայագիտությամբ և նրա նորությունները հետաքրքրվում է ոչ միայն մեր գիտական աշխատողների նեղ շրջանակը, այլև մեր մտավորականների բազմահազար մասսան։ Բավական է ասել, որ նոր լույս տեսած հայագիտական գրականությունը, եթե ժամանակին դուք չգնեք գրախանութներում, երկրորդ օրն իսկ չեք գտնի այն։ Եվ այդ հասկանալի է, եթե նկատի ունենաք մի երկիր, մի պետություն, որի բարձրագույն հաստատություններից տարեկան մի քանի հազար շրջանավարտներ են մտնում կյանք։

Ես լավ գիտեմ մեր անցյալը, տիրելի հայրենակիցներ. ես 25 տարի շարունակ թերթել եմ մեր մագաղաթյա ձեռագրերը և պետք է ասեմ, որ նրանց բոլոր էջերից լացի, ողբի ձայն եմ լսել։ Որպես Հայրենիքի բաղաքացի, որ ակամաս է իր երկրի վիթխարի վերելքին, նրա ծաղկմանն ու բարգավաճմանը, չէի կարող անտարբեր լինել և ինձատեղ Հայ-

ռենիքի հաշողությունները ուսման, աշխատանքի և գիտության բոլոր ասպարեզներում, այդ թվում և հայագիտության ասպարեզում, իմ կարծիքով, եթե մենք ուզում ենք խոսել իսկական վերածնդի մասին, ապա այն չպիտի փնտրենք անցյալի մութ իրականության մեջ, այլ ներկայումս, հայ ժողովուրդն այժմ է ապրում իր իսկական ոսկեդեն Վերածնունդը։

Ի տես այս ամենի, չեմ ուզում հավատալ, որ արտասահմանում կարող է գտնվել մի հայ մարդ, որ սրտով չուրախանա, երբ կարդում է թերթերում, որ մի հայ դիտնական, երբեմնի Բայազետ գյուղացի՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը եկել է Լոնդոն՝ աստրոֆիզիկայից դասախոսություններ կարդալու անգլիական համալսարաններում։ Չեմ ուզում հավատալ, որ արտասահմանում կարող է լինել մի հայ մարդ, որ սրտի ուրախությամբ չլսի այն հաղորդումը, թե մի Սիմոնյան, մի հասարակ հայ մարդիկ, ֆուտբոլի դաշտում մրցման է դուրս եկել անգլիացիների դեմ և մի գնդակ ավելի է անցկացրել հակառակորդի դարբասից, Որպես հայ մարդ չես կարող չհպարտանալ, երբ լսում ես, որ մի հայ երաժշտի՝ Արամ Խաչատրյանին ծափահարում է ամբողջ Լոնդոնը, ամբողջ Անգլիան։

Եվ մի՞թե այս ամենը ցայտուն, անհերքելի ապացույցներ չեն մեր աչքի լույս Հայրենիքի վերելքի ու բարգավաճման։

ՇԻՐԱԿՅԱՆ ԽՐՈՆԻԿԱ

Հունիս ամսի 25-ին, շաբաթ օրը, Լենինական ժամանեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան սրբազան արքեպիսկոպոս Կոստանյանը։ Սրբազանին ուղեկցում էին բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետը և հոգեշնորհ Տ. Մուշեղ աբեղան։ Թարձրաստիճան հյուրին դիմավորելու համար բազմահարյուր հավատացյալներ հավաքվել էին Ս. Աստվածածին մկեղեցու շրջափակում, Սրբազանը եկեղեցական թափորով և «Հրաշափառ» շարականով առաջնորդվեց եկեղեցի, որը զարդարված էր տոնականորեն։

Հավատացյալները հոգեկան հրճվանքով ընդունեցին սրբազան հոր բերած՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության ողջույններն ու օրհնությունները։

Հավարտ երեկոյան հանդիսավոր ժամերգության, Նորին Սրբազնությունը կատարեց բարեկրոն դպիր Արամ Թոյաջյանի սարկավագ ձեռնադրության կոչման հանդիսավոր և խորհրդավոր արարողությունը։ Խարտաշիլակի պաշտոնը կատարում էր Տ. Կոմիտաս վարդապետը։ Կոչման արարողությունը շարունակվեց մինչև ուշ երեկո։

Հաջորդ օր, 26 հունիս կիրակի, Տ. Մուշեղ աբեղան մատուցեց սուրբ պատարագ։ Եկեղեցին և վերնատունը լցվել էր հավատացյալների անհամբեր թարմությամբ։ Սրբազանը կատարեց սարկավագական և քահանայական շնորհաշնություն, նորընծային անվանակոչելով իր ավագանի անունով Տ. Արամ, Օձումից հետո սրբազանը խոսեց մի հոգեշունչ քարոզ և ծանրացավ մասնավոր կերպով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայ ժողովրդի կյանքում կատարած նախախնամական պատմական դերի մասին՝ ազգային գոյության պահպանման և հայ մշակույթի զարգացման և պահպանման գործում։ Ապա խոսեց տասնվեց դարերի պատկառելի հնությամբ հավերժացած Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության մասին՝ հայկական հարազատ կառավարության ծախսով։ Իր քարոզի վերջում սրբազանը դոհունակություն հայտնեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ դերապատիվ Տ. Գնորգ ծայրագույն վարդապետ Վաթյանի շինարարական-վարչական գործունեության մասին։ Մեծ խանդավառություն առաջացրեց սրբազան հոր այն հայտարարությունը, թե մոտ օրից սգի շղարշը կվերանա Մայր Աթոռից ալժանավոր Գահակալի ընտրությամբ սնպտեմբեր ամսում։

Նույն օրը Վահան սրբազանը, հայր սուրբի ընկերակցությամբ, այցելեց Արթիկի շրջանի Վահրամա գյուղը, իսկ հաջորդ առավոտուն վերադարձավ Ս. Էջմիածին։

Հուլիսի 3-ին, կիրակի օր, առաջնորդական փոխանորդ հայր սուրբը, նորընծա Տ. Արամ քահանայի և դպրաց դասի հետ գնաց Կիրովական և թափորով առաջնորդվեց եկեղեցի, ուր և մատուցեց սուրբ պատարագ և բանին կենաց քարոզությամբ մխիթարեց հավատացյալներին։

Առաջնորդական փոխանորդ հայր սուրբը իր հովվական հաճախակի այցելություններով մխիթարում է Շիրակի թեմին ենթակա բոլոր հայ հավատացյալներին։ Իր այցելությունների ընթացքում հայր սուրբը դրազվում է եկեղեցիների, հոգաբարձությունների, վանքերի վարչական-տնտեսական հարցերով և անում է ինչ անհրաժեշտ է թեմի եկեղեցիների պայծառացման համար։

Հ. ՊԱԼՅԱՆ

ՆՈՐԸՆԾԱ Տ. ԱՐԱՄ ՔԱՀԱՆԱ ԲՈՅԱՋՅԱՆ

Նորընծա Տ. Արամ քահանա Բոյաջյանը ծնվել է 1928 թվականի հոկտեմբեր ամսի 30-ին Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում։ Իր ուսումը ստացել է տեղի Գալստյան ազգային միջնակարգ վարժարանում, որի ուսանողական շրջանն ավարտել է փայլուն կերպով, իր մանկության օրերին կրոնական կոչում զգալով իր մեջ, և ունենալով դաշնակավոր ձայն, յոթ տարեկանից սկսյալ կանոնավոր հաճախել է Եգիպտոսի երգանկահիշատակ Տ. Թորգոմ սրբազան արքեպիսկոպոս Գուշակյանի ջանքերով կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ հոյակապ եկեղեցին։ Իր հետևողական և նվիրյալ ծառայության ու քաղցրահնչյուն ձայնի շնորհիվ արժանացել է Կահիրեի եկեղեցասեր ազգայինների գնահատանքին և դպրապետ Ղազարոս Ղազարոսյանի մասնավոր հոգածության, որի շնորհիվ նրան հաջողվել է տիրանալ եկեղեցական երգեցողության։

1947 թվականին Մայր Հայրենիք ներգաղթելով, հաստատվել է Լենինականում և միևնույն նվիրվածությամբ շարունակել է ծառայել տեղի Ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում, որտեղ էլ արժանացել է Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանի համակրանքին և ներկայիս առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գևորգ ծայրագույն վարդապետ Վաթյանը, գնահատելու համար նրա նվիրյալ ծառայությունը և ընդառաջելով Լենինականի հավատացյալների բաղձանքին, դիմել է Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ նրան քահանա ձեռնադրելու համար։

Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ, հունիս ամսի 26-ին, Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում, հավատացյալների բազմության ներկայությամբ նրան շնորհվել է քահանայական կոչում։ Նորընծան, իր սովազանի անունով, վերանվանվել է Տ. Արամ։

Տ. Արամի քահանայական ձեռնադրությամբ, Լենինականի քահանայական դասը օժտված կլինի իր կոչման գիտակից, համեստ մի հոգևոր ոպասավորով։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՕՏԱՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՉԻՆ-ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում հինգ օր հյուր եղավ Չին-սովետական ընկերության դելեգացիան, որին գլխավորում է ժողովրդական ներկայացուցիչների Համաշխարհային ժողովի մշտական կոմիտեի անդամ, Պեկինի քաղաքագլխի տեղակալ Վան Խուն-լունը։

Մեկնումից առաջ դելեգացիայի անդամները Հայաստանի հեռագրական գործակալության թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ հաղորդեցին ռեսպուբլիկայում գտնվելու ժամանակ ստացած իրենց տպավորությունները և խնդրեցին մամուլի միջոցով ամբողջ հայ ժողովրդին արտագին շնորհակալություն հայտնել իրենց ցույց տրված բարեկամական ընդունելության ու հյուրընկալության համար, և իրենց հայ բարեկամներին ստեղծագործական ու աշխատանքային հետագա հաջողություններ ցանկացան երջանիկ կյանք կառուցելու գործում։

— Սովետական Հայաստանում մեր անցկացրած կարճատև ժամանակը,— ասաց դելեգացիայի ղեկավար Վան Խուն-լունը,— այն աստիճան հագեցված էր հետաքրքրական իրադարձություններով, անմոռանալի տպավորություններով ու հաճելի հանդիպումներով, որ իր բովանդակությամբ այն համարժեք է շատ ավելի երկարատև ուղևորության։ Մենք ձեր ռեսպուբլիկայում հետաքրքրական և ուսանելի շատ բան տեսանք։ Մեզ վաղուց հայտնի էր, որ հայ ժողովուրդն ունի բազմադարյան պատմություն և կուլտուրա, որ նա Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում ներկայումս հիանալի հաջողությունների է հասել ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բոլոր բնագավառներում։ Բայց այն ամենը, ինչ մենք տեսանք սեփական աչքով, ղգայիորեն դերազանցեց մեր բոլոր սպասումները։ Մատենադարանում, Պետական պատմական թանգարանում և Պատկերասրահում, ինչպես նաև մեր հայ բարեկամների պատմածներից մենք իմացանք ձեր ժողովրդի հերոսական անցյալի մասին և համոզվեցինք, որ հայ ժողովուրդը տաղանդավոր և աշխատասեր ժողովուրդ է։

Այնուհետև Վան Խուն-լունը ասաց, որ չին և հայ ժողովուրդների կուլտուրական կապերը խոր արմատներ և բազմադարյան պատմություն ունեն։

— Դելեգացիայի անդամների մեջ,— ասաց Վան Խուն-լունը,— մեծ հետաքրքրություն առաջացրեց արդյունաբերական ձեռնարկությունների, Սևանի հիդրոէլեկտրակայանի, ժամացույցի ու դինու գործարանների դիտումը։ Նրանք բոլորն էլ հագեցված են հիանալիորեն և առաջավոր ձեռնարկություններ են։ Բայց մեր վրա առանձնապես մեծ տպավորություն գործեց Սևանի հիդրոէլեկտրակայանը։

Վան Խուն-լունը մեծ ջերմությամբ և խորին գոհունակությամբ խոսեց Արտաշատի շրջանի Դվին գյուղը կատարած ուղևորության մասին։

— Մենք բերկրալից մի օր անցկացրինք,— պատմեց նա,— «Շինարարս» կոլտնտեսությունում։ Մենք մանրամասնորեն ծանոթացանք արտելային տնտեսությանը, հյուր եղանք կոլտնտեսականների մոտ։ Մենք դրացինք, որ ցանկալի հյուրեր ենք, ուստի և անկեղծորեն ուրախացանք։ Կցանկանայի

խոսել այն մեծ տպավորության մասին, որ մեր դելեգացիայի անդամների վրա գործեց Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլի համերգը։ Ձեր ազգային պարերը մեզ ապշեցրին իրենց բարձր տեմպերամենտով, հստակությամբ ու գեղեցկությամբ։

Մենք եղանք շատ այլ վայրերում, հանդիպեցինք ոչ քիչ թվով մարդկանց և ամենուրեք մենք հոգատարությամբ ու սիրով էինք շրջապատված։

Վերջում ցանկանում եմ մի քանի խոսք ասել երկու հոյակապ գագաթների՝ Արարատի ու Արագածի միջև գտնվող Երևանի մասին։

Ձեր քաղաքում դեռևս պահպանված հին շինքերը է՛լ ավելի վառ կերպով են ընդգծում նորի վեհությունն ու հոյակապությունը։ Ես, որպես քաղաքային շինարարության հարցերով զբաղվող մի մարդ, շատ բան քաղեցի այս ուղևորությունից։ Եթե ես նկարիչ լինեի, անպայման կնկարեի Հաղթանակի մոնումենտը զարդարող հիասքանչ զարդագրվագը։ Մենք Հայաստանից մեկնում ենք՝ մեր սրտերում տանելով ամենալավագույն տպավորությունները և խորին երախտագիտության զգացմունքը։ Հայրենիք վերադառնալուց հետո մենք մեր հայրենակիցներին մանրամասնորեն կպատմենք այն ամենի մասին, ինչ մենք զգացինք և տեսանք ձեր հյուրընկալ ռեսպուբլիկայում։

Իր տպավորությունները հաղորդեց նաև գրող Գեն Բաո-ցյուանը։

— Ես շատ ուրախ եմ Հայաստանում ուղևորություն կատարելու համար,— ասաց նա։ — Իրականացավ իմ վաղուցվա երազանքը։ Առաջ ես Հայաստանի մասին գիտեի միայն գրքերից, իսկ այժմ մենք հնարավորություն ստացանք անմիջականորեն ծանոթանալու տաղանդավոր հայ ժողովրդի բազմաբովանդակ կյանքին։ Ես իմ տպավորությունները հայտնում եմ սովետական գրականության, այդ թվում հայ գրականության սիրողի ու թարգմանչի տեսանկյունից։

Հայաստան բառը նվիրական է ինձ համար։ Ես հիշում եմ. ավելի քան 10 տարի առաջ մենք սկսեցինք «Մասունցի Դավիթ» էպոսի թարգմանությունը չինարեն։ Անա հենց այն ժամանակ մենք մեր հայացքները ուղղեցինք դեպի Հայաստան։ Դեռ այն ժամանակ իմ սիրտը թռչում էր Հայաստան։

Երևան ժամանելու հենց առաջին օրը ես տեսա արևային հիասքանչ մի քաղաք և իսկույն սիրեցի այն։

Ես շատ ուրախ եմ, որ հնարավորություն ստացա ավելի մանրամասնորեն և ակնթարթորեն ծանոթանալու հայ ժողովրդի պատմությանը, նրա կուլտուրական տրադիցիաներին։ Ինձ բախտ վիճակվեց հետաքրքրական շատ բան իմանալ։ Հաճելի է գիտակցել, որ մեր ժողովուրդների կուլտուրական կապերը սկիզբ են առնում դարերի խորքից։ Մատենադարանում մենք տեսանք 5-րդ դարի մի մատյան՝ հայ պատմիչ Մովսես Խորենացու աշխատությունը։ Պատմիչը շատ բան ու մեծ համակրանքով է խոսում Չինաստանի ու չին ժողովրդի մասին։

Ձերմ ու սրտագին մթնոլորտում անցավ մեր հանդիպումը հայ գրողների հետ։ Ուրախ էի անձամբ ծանոթանալու ավագագույն գրողներ Իսահակյանի և Դեմիրճյանի հետ, որոնց ստեղծագործությունները, ինչպես նաև ձեր մեծանուն կլասիկ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ես բավականությամբ թարգմանել եմ չինարեն։ Իմ հայ կրտսեր կոլեգաները ինձ օգնեցին պարզելու Աբովյանի ու Թումանյանի ստեղծագործության վերաբերյալ ինձ հետաքրքրող մի շարք հարցեր։

Այստեղ գտնված ժամանակ մենք ձեր քաղաքում հանդիպումներ ունեցանք շատ պրոֆեսիաների, հասակների, տարբեր կոչումների մարդկանց։ Նրանք բոլորն էլ հարազատ էին մեզ համար։ Մեզ միմյանց հետ կապում էր ինչ-որ մի ավելի մեծ բան, քան հյուրընկալի և հյուրի փոխհարաբերությունը. նրանք մեր եղբայրներն էին։

(ՀՀԳ)

(Երևան, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթ, 22 մայիսի 1955 թ.)

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՍԻՐԻԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԴԵՊՈՒՏԱՏ ՏԻԳՐԱՆ ՉՐԱՉՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Ինչպես հայտնի է, ՍՍՌՄ Գերագույն Սովետի հրավերով, սույն թվականի հուլիսին Սովետական Միություն ժամանեց Սիրիական պառլամենտի պատվիրակությունը։ Պատվիրակությունն այցելեց Սովետական Միության մի շարք քաղաքներ և ոնսպուրիկաներ։

Պատվիրակության անդամ, սիրիական պառլամենտի դեպուտատ պարոն Տիգրան Չրաչյանը հուլիսի 18-ին ժամանեց Երևան և մի քանի օր մնաց Հայաստանում, ծանոթանալով ռեսպուբլիկայի տնտեսական, կուլտուրական և հասարակական կյանքին։

Պարոն Տիգրան Չրաչյանը այցելեց Հայաստանի պատմական թանգարանը, դիտեց մայրաքաղաքի շինարարությունը, եղավ Էջմիածնի լրջանի Միկոյանի անվան կոլտնտեսությունում, ուր զրույց ունեցավ կոլտնտեսության վարչության նախագահ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Ե. Մարգարյանի հետ։

Նա այցելեց նաև Էջմիածնի վանքը, մանրամասն ծանոթացավ Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքներին և ընդունվեց գերապատիվ Տ. Վահան արքեպիսկոպոսի կողմից։

Հուլիսի 19-ին պարոն Չրաչյանին ընդունեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության բարեկամ Ս. Ղևոնդյանը և ունեցավ նրա հետ զրույց։ Զրույցին մասնակցեցին Արտաշատի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության նախագահ Բ. Ասատուրյանը, Հայաստանի Արհեստակցական Միությունների խորհրդի նախագահ Հ. Արվազյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ն. Հարությունյանը, լուսավորության մինիստր Շ. Միմոնյանը, կուլտուրայի մինիստր Ա. Նահինյանը, առևտրի մինիստր Զ. Զարչյանը։

Հուլիսի 21-ին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահությունը ճաշկերույթ տարավ ի պատիվ պարոն Տիգրան Չրաչյանի։ Ճաշկերույթին ներկա էին Գերագույն Սովետի Նախագահության քարտուղար Ս. Ղևոնդյանը, մինիստրները, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատները, գիտության և արվեստի գործիչները։

Ճաշկերույթն անցավ ջերմ, բարեկամական մթնոլորտում։

ԼԱՉՈՒՏԻՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ.— Ինչպես հաղորդել էինք մեր ամսագրի նախորդ համարում, սույն թվականի հոկտեմբերին նշվելու է Հայ մեծ լուսավորիչ, Հայ նորագույն գրականության հիմնադիր, անմահ Լաչատուր Աբովյանի ծննդյան 150-ամյակը։

Այդ առթիվ Սովետական Հայաստանում նախապատրաստական լայն աշխատանք է տարվում։ Դեռևս 1956 թվականին ամբողջովին կավարտվի մեծանուն գրողի երկերի ակադեմիական հրատարակությունը 8 հատորով։ Երկերի հրատարակությունն է պատրաստում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը։

Ընթացող հասարակության ամենալայն սնփականությունն է դարձել Լաչատուր Աբովյանի հոչակավոր «Վերք Հայաստանի» վեպը, որը վերջին տասնամյակում Սովետական Միությունում լույս է ընծայվել բազմաթիվ տպագրություններով։ Վեպի մեր ամենավաղ կերպով տրամաբանված է հեղինակի կրտսեր դեպի Հայրենիքը։ Առաջին հոդվածի կարդացողությամբ «Վերք Հայաստանի»-ն լույս կտեսնի նոր հրատարակությամբ՝ հայերեն և ռուսերեն լեզուներով։

Հրատարակության են պատրաստվում մի շարք բաներ մեծ գրողի կյանքի և գրական-հասարակական գործունեության վերաբերյալ։

Անպտմբեր ամսին տեղի կունենան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, Երևանի Պետական համալսարանի և Լաչատուր Աբովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտի գիտական սեսիաները՝ նվիրված մեծ լուսավորչի ծննդյան 150-ամյակին։

Ռեսպուբլիկայի քաղաքներում, շրջանային կենտրոններում և գյուղերում կկազմակերպվեն դասախոսություններ, երեկոներ և ցուցահանդեսներ՝ նվիրված գրողի կյանքին և գործունեությանը։

Թարգմանվելու է Լաչատուր Աբովյանի տասն-քառասներորդ, որը գտնվում է Քանաքեռում, ինչպես նաև սան բակը և շրջակայքը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.— Սույն թվականի հուլիսի 8-ին Մոսկվայում տեղի ունեցավ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահությունների համատեղ նիստը։ Քննության առնվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գործունեությունը և նշվեցին այն հիմնական ուղղությունները, որով պետք է ընթանա վերջինս իր գիտական հետազոտությունների ընդլայնման։

Քննարկված հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի արենդիենտ Վ. Համբարձումյանը, հարակից զեկուցում տվեց ակադեմիկոս Բ. Կնունյանը։

Նիստի մասնակիցները նշեցին, որ Հայաստանի գիտնականները որոշակի հաջողություններ են հասել գիտության շատ բնագավառներում և ժողովրդական տնտեսության մեջ ներդրել են գիտական հետազոտությունների մի շարք կարևոր արդյունքներ։ Առանձնապես արժեքավոր աշխատանք են կատարել մաթեմատիկոսները, ֆիզիկոսները, երկրաբանները, բիմիկոսները, տեխնիկները։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան հայտնի է իր աստրոֆիզիկական հետազոտություններով։ Այն հայտնաբերել և ուսումնասիրել է նոր տիպի աստղային

համակարգություններ Դալակտիկայում։ Այդ համակարգությունները ստացել են աստղային ասոցիացիաներ անունը։

Հայաստանի երկրաբանների մեծ ծառայությունն է հանդիսանում այն, որ նրանք ուսումնասիրել են ռեսպուբլիկայի տերիտորիայի երկրաբանական կառուցվածքը, մշակել են Հայաստանի, հատկապես Զանգեզուրի մետալոգենիան և կազմել ռեսպուբլիկայի երկրաբանական քարտեզը՝ մեծ մասշտաբով։

Հայ գիտնականների կողմից ձեռք բերած նվաճումների թվին են պատկանում բժշկական ինքնատիպ պրեպարատների՝ «Դիտիլինի» և «Սամբունալի» ստեղծումը, ինչպես նաև քարի վերամշակման նոր տեսակի մեքենաների, շարժաշղթի (անչմոմնոր) կոչված խիստ արժեքավոր գործիքի, էլեկտրականությունը վերամշակող սարքերի համար մի շարք հարմարանքների ստեղծումը։ Հայաստանի բուսաբանները վերջին տարիներին ուսումնասիրել են ցորենի, պտղատու կուլտուրաների և խաղողի նոր տեսակներ։

Հրատարակվել են մի շարք մենագրական աշխատություններ հայ ժողովրդի պատմության, էկոնոմիկայի, գրականության, լեզվի և արվեստի վերաբերյալ։

Համառոտ նիստում նշվեցին այն ուղիները, որոնցով այսուհետև պետք է ընթանա Հայաստանի գիտնականների գործունեությունը։

ՎԻՐԱԲՈՒԾ ՌՈՒԲԵՆ ՅՈՒՅՆԻ ՄԱՀԸ.— Հուլիսի 1-ին Երևանում իր մահկանացուն կնքեց Հայաստանի բժշկական ինստիտուտի պրոֆեսոր, սովետական հոչակավոր վիրաբույժ Ռուբեն Հովսեփի Յույանը։

Հանգուցյալը ծնվել էր 1894 թվին Դորպատում։ Բարձրագույն բժշկական կրթությունը ստացել էր Կիևի համալսարանում, որն ավարտել է 1919 թվականին։ 1927 թվականին նա հրավիրվում է աշխատելու Երևանի բժշկական ինստիտուտում, որտեղ և անցել է նրա թելադրավոր գործունեության վերջին 28 տարին։

Պրոֆ. Ռ. Յույանը իր ամբողջ եռանդը նվիրել էր սովետական բժշկական գիտության զարգացմանը։ Նրա գրչին են պատկանում ավելի քան 50 գիտական աշխատություններ՝ բժշկական գիտության տարբեր հարցերի վերաբերյալ։ Նրա ձեռքի տակ դաստիարակվել են բազմաթիվ երիտասարդ բժիշկներ։

Լինելով ուսանավոր վիրաբույժ և ծանրարհանված լինելով իր հիմնական աշխատանքներով, Ռ. Յույանը միաժամանակ զբաղվում էր հասարակական եռանդուն գործունեությամբ։ Նա ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ էր, վիրաբույժների միջազգային ընկերության անդամ, ՍՍՌՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ։ Ռ. Յույանին շնորհված էր գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀՅՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի հրավերով հուլիսի սկզբներին Սովետական Միությունն այցելեց Լատինական Ամերիկայի երկրների խաղաղության կոմիտեների պատվիրակությունը, որը եղավ նաև Հայաստանում։ Պատվիրակության անդամները շրջագայեցին Հայաստանում, դիտեցին Երևանի շինարարությունը, եղան կոլտնտեսությունների մի շարք հիմնարկներում, արդյունաբերական ձեռնարկություններում։

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԵՐ.— Ներկայումս Հայաստանի մի շարք շրջաններում աշխատում են Գիտությունների ակադեմիայի 5 արշավախմբեր։ Դրանցից 3-ը շարունակում են ուսումնասիրել ռեսպուբլիկայի երկրաբանական կառուցվածքի հետ կապված առանձին հարցեր։ Արշավախմբերից մեկի առաջ խնդիր է դրված՝ ուսումնասիրել լեռնային շրջաններում ստորերկրյա ջրերի քանակն ու բաղադրությունը՝ արոտավայրերն ու մարդատեղերը ոռոգելու նպատակով։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԻ ՀԵՏ.— Երևանում, տպագրական աշխատողների ակումբում տեղի ունեցավ ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանի հանդիպումը հանդիսականների հետ։ Ակումբի դահլիճը լի էր հոծ բազմությամբ։ Արտիստի բեմական գործունեության մասին խոսեց արվեստի վաստակավոր գործիչ Տիգրան Հախումյանը։

Վերջում Վահրամ Փափազյանը արտասանեց հատվածներ Նեքրասովի «Օթելլոյից» ու «Համլետից» և Լերմոնտովի «Դիմակահանդեսից»։

Ներկա եղողները արտիստին դիմավորեցին բուռն ծափերով։

ՌԱԴԻՈՅԻ ՏՈՒՆ.— Ինչպես հայտնի է, Երևանի ռադիոհաղորդումները կատարվում են Լենինի հրապարակի վրա գտնվող փոքր-հեռագրատան շենքից։ Նկատի ունենալով շենքի նեղվածքը և մի շարք այլ անհարմարություններ, ՍՍՌՄ Կապի միներտությունը Երևանում կառուցում է հինգհարկանի մի գեղեցիկ շենք— Ռադիոյի տուն— հատկապես ռադիոհաղորդումների համար։ Այստեղ, 6 խոշոր դահլիճներում կտեղավորվեն նորագույն սարքավորումներով կահավորված ստուդիաներ։ Նոր շենքը հնարավորություն կտա ընդլայնել ռադիոհաղորդումների որակը, ընդարձակել հաղորդումների ծրագիրը։

Ռադիոյի տան կից կառուցվում է Ռադիոինֆորմացիայի գլխավոր վարչության շենքը։ Երկու շենքերն էլ երևապատվում են լոսվա գեղեցիկ, սպիտակավուն բարով։ Ռադիոյի տունը օգտագործման կհանձնվի 1956 թվականի առաջին կեսին։

ԵՐԵՎԱՆԻ ՏՐԱՄՎԱՅԻՆ ՊԱՐԿԸ.— Բացի բազմաթիվ տաքսի մեքենաներից և ավտոբուսներից, Երևանի փողոցներով ներկայումս երթևեկում են տրոլեյբուսի 43 վագոններ։ Բացի այդ, բազմաթիվ աշխատում են նույն քանակությամբ տրամվայի գնացքներ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 2 վագոնից։

Օրջոնիկիձեի պողոտայի և Թամանյանների փողոցի հատման կետում կառուցվում է տրոլեյբուսային վագոնների առանձին պարկ 100 մեքենայի համար։ Պարկը կունենա նորոգման արհեստանոցներ և այլ հարմարություններ։

ՊԵՐՃ ՊՈՈՉՅԱՆԻ «ՀԱՅՑԻ ԽՆԴԻՐԸ ՌՈՒՍԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ.— Դեղարվեստական դրականության Մոսկվայի պետական հրատարակչությունը պարբերաբար հրատարակում է ինչպես կլասիկ, այնպես էլ ժամանակակից հեղինակների լավագույն գործերը ռուսերեն թարգմանությամբ։

Վերջերս լույս տեսավ ականավոր հայ վիպասան Պերճ Պոոչյանի «Հայցի խնդիր» նշանավոր վեպը։ Վեպը ռուսերեն է թարգմանել մեր նշանավոր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի դուստր Անետ Հովհաննիսյանը։ Գրքին կցված է գրականագետ Հր. Ապրնյանի առաջաբանը՝ «ժողովրդական դրողը» վերնագրով։ Վեպը լույս է տեսել 75.000 օրինակ տպարանակով։

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԵՂՈՒՄՆԵՐ.— Մի քանի տարի է, ինչ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հատուկ արշավախումբը, պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆադարյանի ղեկավարությամբ, պեղումներ է կատարում Արտաշատի շրջանի Գվին գյուղի շրջակայքում, որ մի ժամանակ գտնվել է Հայաստանի համանուն մայրաքաղաքը։

Այս տարի պեղումները հիմնականում կատարվում են միջնաբերդում։ Այստեղ հողից մաքրվում են արաբական կուսակալների պալատի (8-րդ դար) մնացորդները։ Միջնաբերդից մեկ կիլոմետր հեռավորության վրա հայտնաբերված են արքատաշ տուֆ քարով կառուցված սյունազարդ մի շենքի ավերակներ։ Ենթադրվում է, որ այդ շենքը 3—6-րդ դարերի կառուցված պետք է լինի և այժմ պարզվում է նրա նշանակությունը։

Հետախույզները միջնաբերդում հայտնաբերել են մեծ քանակությամբ դանապան իրեր՝ պղնձյա մոմակալներ, կնքանոթներ, մետաղամշակման գործիքներ, ոսկրյա արվեստներ, ոսկրյա գարդեր։ Գտնված են արտարական, վրացական, բյուզանդական, պարսկական և այլ դրամներ, որոնք վկայում են միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքի առևտրական լայն կապերի մասին։

Գվինի պեղումները կշարունակվեն նաև ընթացիկ տարվա աշնանը։

Վերսկսվել են նաև Կարմիր բլուրի հշխատանքները, որոնք կատարվում են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Լենինգրադի Պետական էրմիտաժի համատեղ լանջերով՝ հայտնի հնախույզ Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ։

Պեղումները կատարվում են Ուրարտական հին քաղաքի (մեր թվագրությունից առաջ 7—8-րդ դարերի) կենտրոնական մասերում, ուր տեղավորված են նրա տոնական շենքերը։ Այդ շենքերը մասնավոր կերպով ուսումնասիրվում են։

Կարմիր բլուրի պեղումները, որոնք մի քանի տարի է, ինչ շարունակվում են, հարուստ նյութեր են տալիս մեր պատմագետներին՝ ուսումնասիրելու ուրարտացիների կուլտուրան։

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ՏԱՐԵՎԵՐՋԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դասավանդությունները կանոնավորապես շարունակվեցին մինչև մայիսի 15-ը։ Որոշ դասերի ստուգողականները տեղի ունեցան մայիսի 16—21-ը, իսկ տարեվերջի քննությունները՝ մայիսի 23-ից մինչև հունիսի 8-ը։

Քննություններին ներկա եղան գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը, արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Գամաղելյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պարոն Մինաս Մինասյանը, վերատեսուչ պարոն Մարտիրոս Տեր-Ստեփանյանը և ուրիշներ։

Հայոց լեզվի ու գրականության, հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու պատմության դասերի քննության ժամանակ հայտնի եղավ, որ ուսումնական տարվա ընթացքում ուսանողների կողմից դեպի Պատմական թանգարանը, Պետական պատկերասրահը, Աստղադիտարանը, Կարմիր բլուրը, Պանթեոնը, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը, Հրազդանի կիրճը, Արաղածոտն գավառի բազմաթիվ հնությունները, Գառնիի Տիգրան Ա.-ի բերդն ու Այրիվանքը (Ս. Գեղարդ) կատարված արշավները (էքսկուրսիա) մեծ օգուտ էին ունեցել ուսանողների Հոգևոր Ճեմարանում սովորած գրականության, գեղարվեստի և պատմության վերաբերյալ դիտելիքները հիմնավորելու տեսակետից։

Քննությունների արդյունքը ցույց տվեց, որ բոլոր ուսանողներն էլ փոխել էին իրենց դասարանները՝ առավել կամ նվազ հաջողությամբ, մանավանդ զգալի սեր ու կապվածություն ցուցադրելով Հայ Եկեղեցու ժամերգությունները ակտիվ մասնակցելու գործում։ Դրա ակներև փաստն էր այն, որ Հոգևոր Ճեմարանի ուսանողները, հավասակ քննությունների օրերին զուգադիպելուն, մեծ խանդավառությամբ մասնակցեցին հունիսի 6-ին՝ Ս. Հռիփսիմեի տաճարում, 7-ին՝ Ս. Գայանեի տաճարում, 9-ին՝ Ս. Շողակաթի տաճարում, համանուն կույսերի տոների կապակցությամբ կատարված սուրբ պատարագի արարողություններին։

ՓԱԿՈՒՄ 1954—1955 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Հունիսի 12-ին, Ս. Էջմիածնի տոնի առթիվ Ս. Հռիփսիմեի տաճարում կատարված պատարագին մասնակցելուց և գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի խոսած հոգեշունչ քարոզը լսելուց հետո, Հոգևոր Ճեմարանի ուսանողները հավաքվեցին Ճեմարանի ճաշարանում այդ օրվա համար հատուկ պատրաստված ճաշասեղանների շուրջը։

Վերատեսուչ պարոն Մարտիրոս Տեր-Ստեփանյանը պատշաճ խոսքերով ամփոփեց վերջացող ուսումնական տարվա ընթացքում Հոգևոր Ճեմարանում կատարված կրթական աշխատանքը և գործադրեց փակման հանդեսի ծրագիրը։ Խմբով երգվեցին «Հայր մերը», «Էջ Միածինն ի Հօրէն» և Հայկական ՍՍՌ Պետական հիմնը։ Արտասանեցին ուսանողներ Ժիրայր Բոյաջյանը՝ հայրենադարձ Արսեն Տեր-Սարգսյանի «Էջմիածինը», Աշոտ Սանթուրյանը՝ Վահան Թեքեյանի «Եկեղեցին Հայկականը», Հովհաննես Դանիելյանը՝ Գեվորգ Դոդոխյանի «Նոր սերունդը», որի վերջին տունը, որպես պատգամ, դրոշմված պիտի մնա ուսանողների մտքում.

«Հիմունք ազգության—լեզու և հավատ,
Պահիր սրտիդ մեջ, հայ եղբայր, հաստատ.
Օտարին լավն միշտ քաղե օգուտ,
Բայց «էոնը» թող շատ մոտ լինի հոգուդ»

Հանուն ուսանողության կարճ ելույթ ունեցավ ուսանող Մանդրո Թեհրուդյանը՝ խոստանալով առաջիկա ուսումնական տարում եռանդով աշխատել, սովորել և արդարացնել Գերագույն Հոգևոր Խորհրդի և Ազգի հույսերը։ Նա իր ելույթը վերջացրեց դոշելով. «կեցցե՛ Գերագույն Հոգևոր Խորհուրդը, կեցցե՛ Հոգևոր Ճեմարանը, թող Աստված անսասան պահի Ամենայն Հայոց Հայրապետությունը»։

Ճաշի և հանգեսի վերջում վերատեսուչը խոսեց «Հուսկ բանքը», տալով նաև հրահանգներ, ըստ որոնց Հոգևոր Ճեմարանը, առաջիկա ուսումնական տարվա համար վերաբացվելու է սույն թվականի սեպտեմբերի 5-ին, ուսանողներ Կարապետ Թենլիյանն ու Ազատ Սանթուրյանը, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի կարգադրությամբ, մնալու են Ճեմարանում՝ սպասարկելու համար եկեղեցական ժամերգություններին, եկեղեցական երգեցիկ խմբին մասնակցող ուսանողներն ամեն կիրակի գալու են Ս. Էջմիածին՝ մասնակցելու սուրբ պատարագի արարողություններին և այլն։

Ընտանեկան ջերմ մթնոլորտում կատարված հանդիսությունից հետո, ուսանողները հարգալից հրաժեշտ տվին իրենց վերատեսչին և այլ պաշտոնյաներին, և ստանալով ամառնային նոր հագուստներ և ճանապարհածախս, մեկնեցին իրենց ծնողների մոտ՝ ամառնային արձակուրդը նրանց հետ անցկացնելու և առաջիկա ուսումնական տարվա համար լավագույնս պատրաստված Ճեմարան ներկայանալու առաջադրությամբ։

— Տեր ընդ ձեզ, սիրելի ուսանողնե՛ր։

ՄՈՒՇԵՂ ԱԲԵՂԱ

ՀԵՆԳԻՍՏ
ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՌՈՒԲԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆԱՍԵԱՆԻ
(1882—1955)

Երուսաղեմից ստացված հեռագիրը գուժեց Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբան Ռուբեն արքեպիսկոպոս Մանասյանի հանկարծահաս մահը, որը տեղի է ունեցել սույն թվի հուլիսի 10-ի առավոտյան։ Ռուբեն արքեպիսկոպոսի մահով Հայ Եկեղեցին կորցնում է իր բարձրաստիճան, հայրենասեր և բազմափորձ հոգևորականին։

Հոգելույս սրբազանը ծնվել է 1882 թվին Երևանում։ Սովորել է Երևանի թեմական դպրոցում և ավարտելով նրա լրիվ դասընթացը, որոշ ժամանակ ուսուցչությամբ զբաղվելուց հետո, նա միանգամայն ընդմիշտ ընտրում է հոգևոր կյանքի ասպարեզը։

Հանգուցյալը 1911 թվին Ս. Էջմիածնում ձեռնադրվում է կուսակրոն վարդապետ և մտնում Մայր Աթոռի միաբանության շարքերը։

Եկեղեցական գործունեության իր առաջին շրջանում մենք հանգուցյալին տեսնում ենք Գևորգյան Ճեմարանում երաժշտության դասատուի պաշտոնում, իսկ Կոմիտաս վարդապետի էջմիածնից մեկնելուց հետո, նրան է հանձնվում Մայր Տաճարի երգեցիկ խմբի ղեկավարությունը։

Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսի օրով, 1922—1923 թվականներին, հանգուցյալ սրբազանը նշանակվում է Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդ, ուր ձեռնհասորեն վարում է թեմական գործերը։ Այնուհետև նա նշանակվում է Հեռավոր Արևելքում (Մանջուրիա, Խարբին-Մուկդեն) հոգևոր հովիվ։ Երջանկահիշատակ Գևորգ Ե. Կաթողիկոսը, հաշվի առնելով նրա փորձառությունը և եկեղեցական օգտաշատ գործունեությունը, 1928 թվին ձեռնադրում է նրան եպիսկոպոս և նշանակում Իրաքի թեմի առաջնորդ։ Հոգելույս սրբազանը այստեղ երկար տարիներ կոլոովով և սրտեռանդ նվիրումով վարում է իր առաջնորդական պարտականությունները։ Եկեղեցանվեր այդ գործունեության համար նա խորեն Ա. Կաթողիկոսի կողմից արժանանում է արքեպիսկոպոսության բարձր պատվին և աստիճանին։

Հանգուցյալ սրբազանը մինչև իր կյանքի վերջը մնաց հայրենասեր և էջմիածնասեր եկեղեցական. նա երբեք չդավաճանեց իր ուխտին և հայ ժողովրդի Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնին։

Ռուբեն սրբազանը իր կյանքի վերջին տարիներին, խոր ծերության հասակում, թողել էր առաջնորդական պարտականությունները, քաշվել Երուսաղեմի հայոց վանքը և Ս. Հակոբյանց միաբանության շարքերում, հյուրընկալության վայրում, անց էր կացնում իր կյանքի վերջին տարիները։ Այնտեղ էլ կնքեց իր մահկանացուն։

Ճիշտասակն արդարոց օրհնութեամբ հոգիցիս։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

„ԵՂՆԿԸՑ ԵՂԲ ԵՂԷՆԴՈՑ Ի ՋԱՄԱԳՈՎՈՒԹԻՆ ՀԱՅՈՒԹԵՍ ԺԱՄԱՐՈՅ"

Նկու խոմր. նկարագրություններ և աշխատասիրական բարգմանություններ
ԴԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

(Բուենոս-Այրես, 1951 թ., տպարան «Երարատ», ԺԶ + 148 ճանգիպադիր կրկնված էջեր)

Գյուրքիայի հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանը Բուենոս-Այրեսի «Երարատ» տպարանից լույս է ընծայել հայ միջնադարյան փիլիսոփայական մտքի ավագագույն ներկայացուցիչ Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատության աշխարհարար թարգմանությունը։

Եղնիկ Կողբացին, իր խորաթափանց մտքով, գիտական բազմակողմանի պատրաստությամբ, հատկապես սակրդնիկ ու բյուրեղացած դրաքարով, իրավամբ, գրիչավորում է 5-րդ դարի հայ մտքի հսկաների սերունդը։

Եղնիկ Կողբացին հայ մատենագիրների այն հազվագյուտ թվին է պատկանում, որոնց գրվածքները, ցավոր սրտի, մեզ են հասել միայն մեկ (ունիկում) ձեռագիր օրինակով։

Այդ ձեռագիրը, որ ընդօրինակել է Լուսավորիչը, հավանաբար Գլաձորցի, 1280 թվականին ներսես Վարդապետի և նրա աշակերտ Եսայու պատվերով, այժմ գտնվելով պահվում է Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանում։ Ձեռագիրը 1762 թվականին Զմյուռնիայում տպագրվելուց հետո, կարծվում էր, թե այրվել է 1845 թվականին Զմյուռնիայում պատահած հրդեհի ժամանակ, բայց 1902 թվականին բազմավաստակ գիտնական Հ. Ակինյանը, Իշխանի մատենադարանում կատարած պրպտումների ընթացքում, կարողացավ գտնել Եղնիկի ընդմիջտ կորած համարված այդ ձեռագիրը։ Հետագայում Գ. Տեր-Մկրտչյանն ու Հ. Ակինյանը, իրենց «Քննություն Եղնիկեան Եկեղեցական Մատենագրության» աշխատության մեջ, որը լույս տեսավ նախ 1904 թվականին «Հանդէս ամսօրեայի» մի շարք համարներում, իսկ հետո, նույն տարում առանձին գրքույկով, կարողացան պարզել, թե Եղնիկի հիշյալ ձեռագիր օրինակը հիմք է հանդիսացել Եղնիկի բոլոր տպագիր հրատարակությունների համար։ Եղնիկի սույն ձեռագիրը այժմ գրանցված է Երևանի Պետական մատենադարանի 1097 համարի տակ (անցյալում նրա համարն է եղել 1111, իսկ բուն գարինյան ցուցակի՝ 1091)։ Եղնիկի հիշյալ աշխատությունը ընդօրինակված է ձեռագրի 187բ—314բ էջերում։

Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունը գրքերի ընթացքում շատ բարձր է գնահատվել թե՛ հայ և թե՛ օտար գիտնականների և ընթերցող հասարակության կողմից։ Առաջին անգամ Եղնիկը լույս է տեսել Զմյուռնիայում 1762 թվականին Մատենի Մարկոսի տպարանից և Աբրահամ վարդապետի ջանքերով ու Հակոբ Նալյան գիտուն և ասպետ Պատրիարքի հրամանով և սրբազան թագով, Առաջարանը գրել է Հակոբ Նալյան Պատրիարքը։ Եղնիկի այդ առաջին հրատարակության վերնագիրն է՝ «Ծիրմ ընդդիմանալոց աղանդոց ի Սրբոյ եղեցական Կողբացոյ Հայոց վարդապետ, և յայսմանէ մեծի բարգմանչին մեր՝ Սրբոյն Մեսրոպայ»։ Երկրորդ անգամ նա լույս է տեսել Վենետիկում, Մխիթարյանների Ս. Ղազարի տպարանից 1826 թվականին, բարգմանիչ Հ. Արսեն վարդապետ Բագրատունու հրատարակությամբ։ Բագրատունին, նկատի ունենալով, որ հասած միակ ձեռագրում չի պահպանվել Եղնիկի աշխատության վերնագիրը, ստիպվել է ինքն էլ իր հերթին այն կնքել «Եղծ աղանդոց» նոր անունով, և ահա՝ այդ անունն էլ մինչև օրս մնացել է իբրև հայ մատենագրության մեջ։ Երրորդ անգամ Եղնիկը հրատարակվել է գարձյալ Վենետիկում 1850 թվականին։ Չորրորդ տպագրությունը կատարվել է Փարիզում 1860 թվականին, հայտնի Արամյանի տպարանից։ Հինգերորդ անգամ հրատարակվել է 1863 թվականին գարձյալ Վենետիկում։ Կոստանդնուպոլսում 1864 թվականին Եղնիկը լույս է տեսնում վեցերորդ անգամ։ Դրանից հետո Եղնիկի «Եղծ աղանդոց»ը

Կոստանդնուպոլսում է, որ տպագրվում է 3—4 անգամ՝ 1869 թ., 1871 թ., 1879 թ. (այս վերջինը ստերեոտիպ տպագրություն է)։ Ըստ Հ. Ա. Ղազիկյանի՝ 1884 թվականին վերատպ է հրատարակվում 1871 թվականին կատարված տպագրությունը։ Եղնիկի գրքից որոշ հատված հրատարակվում է 1913 թվականին Թիֆլիսում, իսկ 1914 թվականին Եղնիկի «Եղծ աղանդոցաց» լույս է տեսնում Թիֆլիսի Ղուկասյան մատենաշարքում։ Ենթադրվում է, որ Եղնիկը հրատարակվել է նաև 1774 թվականին Մադրասում, Հակոբ Նահամիրյանի տպարանից։

Բացի Եղնիկի հայերեն վերոհիշյալ չորս 12 հրատարակություններից, նա թարգմանվել է նաև այլ լեզուներով։ 1853 թվականին Փարիզում ֆրանսերեն լեզվով լույս է տեսել պրոֆ. Լը Վայան դը Ֆլորիվալի թարգմանությամբ։ Ավելի ուշ, դարձյալ ֆրանսերեն, լույս է տեսել Եղնիկի աշխատությունից մի հատված։ 1900 թվականին Վիեննայում հրատարակվել է Եղնիկի «Եղծ աղանդոցի գերմաներեն թարգմանությունը պրոֆ. Եմիդի կողմից, գործակցությամբ Հ. Գ. Գալեմքյարյանի։ Ըստ Հ. Գ. Զարպհանալյանի՝ Եղնիկի աշխատությունից որոշ հատվածներ հրատարակվել են նաև անգլերեն լեզվով։

Պատկառելի թվով հայ և օտար հեղինակներ երկար տարիներ շարունակ ուսումնասիրել են Եղնիկի կյանքն ու գործունեությունը և նրա գլուխգործոց «Եղծ աղանդոցաց» հայերից պետք է հիշել՝ Ն. Ադոնցին, Հ. Գ. Գալեմքյարյանին, Հ. Գ. Զարպհանալյանին, Հ. Թորոսյանին, Հ. Վ. Հացունուն, Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանին, Գ. Նահապետյանին, Գ. Տեր-Մկրտչյանին, Հ. Ե. Փելիկյանին, Հ. Ղ. Ալիշանին, Ե. Տեր-Հովհաննիսյանին, Կ. Եղյանին, Հ. Մ. Ջամշյանին, Վ. Փափազյանին և ուրիշներին։ Օտարներից պետք է հիշել Գելցերին, Ա. Կարիերին, Վեբերին, Նոյմանին, Վ. Լանդաուային, Դյուլորիեին, Ֆեղղերին, Մարինովն և ուրիշներին։

Սովետական Հայաստանի գիտնականները մեծ հետաքրքրությամբ են ուսումնասիրել և այժմ էլ ուսումնասիրում են Եղնիկի քարոզած մեծարժեք ժառանգությունը։ Սովետահայ գիտնականներից ակադեմիկոսներ Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, Ստ. Մալխասյանցը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր պրոֆ. Վ. Ջալոյանը և ուրիշներ ունեն Եղնիկի և նրա երկի մասին դրված գիտական հոդվածներ ու մենագրություններ։ Եղնիկի ուսումնասիրությամբ են զբաղվում ներկայումս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության, Պատմության, Լեզվի և Գրականության ինստիտուտների երիտասարդ գիտնականներից մեկը։

Եթե հայ դասական հեղինակներից յուրաքանչյուրի մասին ունենք լույս տեսնելու աշխարհարար թարգմանությամբ, այն էլ ոմանք մի քանի անգամ, ապա Եղնիկը դեռ մինչև վերջերս, հակառակ իր մեծարժեք բովանդակությանն ու լեզվի անաղարտ գեղեցկությանը, գեռևս մատչելի չէր հայ ընթերցող լայն հասարակությանը։ Եվ ահա շնորհիվ Թյուրքիայի հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի վերն հիշված աշխարհարար թարգմանության, լրացվում է այս կարևոր պակասը։

Հեշտ գործ չէ Եղնիկը թարգմանելը։ Այն թարգմանելու համար պետք է լինել ո՛չ միայն հմուտ հայագետ ու խորհրդազգած մտքի տեր գիտնական, ո՛չ միայն պետք է լավ ճանաչել 5-րդ դարի Հայաստանն ու նրա ներսում և դրսում տիրող ժամանակակից աշխարհայացքը, այլ նաև պետք է լինել խոշոր ստվածաբան և քաջ գրաբարագետ։

Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքը, իբրև Արմաշի անմահ Դպրեվանքի բազմամիտ սան, որ ահռելի պաշտոնով լավագույնս է կարողացել պահպանել իր սքանչելի ու սիրելի ուսուցիչների՝ Օրմանյանի և Դուրյանի շունչն ու հոգին, և շարունակելով նրանց անմոռանալի տարեդիմանները, տքնաջան աշխատանքով նպաստել է հայ գրականության հարստացմանը, իր թարգմանողական պատրաստությամբ լավագույն անձն էր, որ կարող էր ստանձնել Եղնիկի «Եղծ աղանդոցի» նման բարդ մի աշխատություն թարգմանելու գործը։

Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքի գրչին են պատկանում ոչ միայն մի շարք պատմա-բանասիրական և եկեղեցագիտական բնույթի աշխատություններ, որոնցից արժե հիշել հատկապես «Լիլիտոնի Լոյսն ի Հայս» երկու հատորանոց մեծածավալ ու հոյակապ գործը, նորին Սրբազնության գրչին են պատկանում ոչ միայն Էջմիածնի Մայր Աթոռի վերածնունդ և իր ազգեցությամբ ապրող Սովետական Հայաստանի մասին ուրախարիթ լուրեր ավետող թանկարժեք հաղորդումներ, որոնցից պետք է հիշել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության կապակցությամբ 1946 թվականին Լոս-Անջելեսի մի շարք հայաշատ քաղաքներում կարդացած հայտնի «Զեկույցը», այլ նաև թարգմանական ստվար գործեր։ Եվ ահա նոր Կտակարանի աշխարհարար թարգմանության հոգնատանջ աշխատանքից հետո, որն այն կատարել է հունարենի, լատիներենի և անգլերենի թարգմանությունների հետ համեմատելով, հայ ընթերցողին ավելց նաև հայ հանճարեղ ստվածախոս սրբի՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթամատյանի աշխարհարար թարգմանությունը, իսկ այժմ էլ ահա լույս հրատարակությանը մատուցում է Եղնիկի թարգմանությունը։

Իբրև քաջ գրաբարագետի ու ստվածաբանի, իբրև խորհրդազգած մտքի ու ներքին բանասերի աշխատանքի, ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքի սույն թարգմանությունը իսկապես ոսկեղենի մի գործ է։

Հարգելի թարգմանիչը Եղնիկի գիրքը նվիրել է «Սրբոց Վարդանանց դյուցազնամարտին 1500-ամյակի հիշատակին»։ Եվ ինչ հիանալի զուգադիպություն, իսկապես, քանի որ Եղնիկի գիրքը ամեն բանից ավելի լինելով իր ժամանակի իրադրությանց արգասիքը, այն հայ մատենագրական մեծերի ձեռքին հանդիսացել է մի հզոր զենք՝ պայքարելու համար նաև պարսկական զրադաշտականության դեմ և դրանով կարելի է դարձյալ նպաստել հայերին Վարդանանց դյուցազնամարտին։ Եղնիկի աշխատությունը

քաղաքականապես անկման եզրին հասած Հայաստանի համար, օտարների հակազդեցությունների դեմ խոյացող մի ուժեղ հակահարվածություն է ու հայերի սրբազան հավատքին ու գրանով էլ Հայաստանի ինքնուրույնության պահպանմանը նվիրված մի խոշոր կոթող։

Իր «երկու խոսքում» ամենապատիվ Գարեգին Պատրիարքը նշում է Եզնիկի մասին գրված և կարևոր նշանակություն ունեցող բոլոր այն աշխատությունները, որոնք իր ալբի տակ է ունեցել թարգմանության ընթացքում։ Ապա ներածական մասում (էջ Ը—ԺԶ) ամենապատիվ Գարեգին Պատրիարքը ամփոփ, բայց միանգամայն բավարար կենսագրական տեղեկություններ է հաղորդում Հեղինակի կյանքի, գործունեության և թողած ժառանգության մասին։

Եզնիկի թարգմանությունը ընդգրկում է 148 կրկնված (այսինքն՝ 296) էջ, հանդիպագրությամբ գրաբար բնագրի, մի բան, որ մեծապես հեշտացնում է ուսումնասիրողների աշխատանքը։

Թարգմանության լեզուն միանգամայն պարզ ու հստակ է՝ պահպանելով հանդերձ իր պատկերավորությունն ու գեղեցկությունը։

Նկատի ունենալով, որ Եզնիկի աշխատության միակ մեզ հասած ձեռագիրը անվերնագիր է և կրում է միայն «Երանելոյն Եզնկայ վարդապետի» կարմիր թանաքով գրված խորագիրը և որը ուրիշ մի գրքի կողմից ուղղվել է՝ սև թանաքով ավելացնելով սրբոյ տառեր և մի բառ և ստացվել է հետևյալը՝ «Երանելոյն Եզնակ վարդապետին Կողբացւոյ», և որը Զմյուռնիայի 1762 թվականի հրատարակության մեջ անվանվել է «Գիրք ընդդիմութիւնաց», իսկ սկսած 1826-ից՝ «Եղծ աղանդոց»։ Թարգմանիչ սրբազանը Եզնիկի գործը ճիշտ կերպով անվանել է «Եղծ աղանդոց ի ջատագովութիւն Աստուծոյ ճշմարտի», հատկապես նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս գործը բացի բրիստոնեության բոլոր տեսակի հակառակորդների ուսմունքները հերքելուց, սքանչելի մի յատագովություն է՝ ուղղված Աստուծուն։ Այս նոր վերնագիրը, մենք ևս կարծում ենք, որ լիապես արդարացնում է Եզնիկի աշխատության բովանդակությունը։

Դարձյալ հիշատ են կատարված թարգմանչի կողմից Եզնիկի աշխատության առանձին գլուխների մեծ մասի վերնագրումները (օրինակ՝ «Վենդանիներու բնագրոց», «Երազները, տեսիլները և ցնորքները» և այլն) և մեծապես դյուրացնում են գրքի ընթերցումը։

Ամենապատիվ Սրբազանը թեև չի կարողացել օգտվել ուղղակի Եզնիկի միակ ձեռագրից, իսկ մյուս կողմից՝ ներածականում համեստորեն նշել՝ թե որպես թարգմանության բնագիր ունեցել է Վենետիկի Մխիթարյաններից Հ. Արսեն Բագրատունու ձեռքով հրատարակված օրինակը, բայց աբեռամանելով, մենք տեսնում ենք, որ նկատի է առել բանասերների կարևոր նշումները (օրինակ, նախկին հրատարակությունում՝ «ատորնեայք», ճիշտը՝ «ատորնեայք» և այլն), այս ևս մեծապես բարձրացնում է թարգմանության դիտականությունը։

Այս բոլորից բացի, թարգմանիչը ուշի ուշով քննել է Եզնիկի Աստվածաշնչից բերած մեջբերումները և նշել է նրանց Աստվածաշնչի ո՛ր մասից լինելը։ Հանախ տողատակին նշել է նաև բանասերներ Հ. Աճառյանի, Ստ. Մալխասյանի, Ե. արքեպիսկոպոս Դուրյանի, Հ. Գ. Գալեմքարյանի, Մարիեսի և ուրիշների տվյալ բառերի ուրույն ընթերցումները կամ հակացողություններ։

Բացի աշխարհաբարի թարգմանության ունեցած մեծ օրժանիքներից, որոնցից յուրաքանչյուրը մեր այս փոքր գրախոսականում դժվար է մի առ մի թվել, սակայն է ասել, որ ամենապատիվ Գարեգին Պատրիարքի վերոհիշյալ Եզնիկի գրաբար բնագիրը ևս կարևոր նշանակություն ունի, քանի որ ցարդ Եզնիկի ձեռագիրը գիտական հրատարակությամբ դեռևս լույս չի տեսել, իսկ հրապարակի վրա գտնվող հայերեն շուրջ 12 հրատարակություններն էլ սխալաշատ են, հետևաբար, այսպիսով, ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքի հրապարակած ներկա բնագիրը միակն է, որ նկատի է ունեցել ոչ միայն Եզնիկի ստաջին հրատարակությունից անցած երկար տարիների ընթացքում գիտնականների կողմից Եզնիկի հրատարակություններում նշմարված սխալների ուղղումները, այլև ինքն ևս կատարել է մի շարք կարևոր ճշտումներ, այսպիսով, գիտությանը և ընթերցող հասարակությանը տվել Եզնիկի ցարդ հրատարակված ամենաճիշտ բնագիրը։

Ի սրտե ողջունելով ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքի կատարած Եզնիկի գրքի ազատակար ու գիտական թարգմանությունը, ցանկանում ենք ստեղծագործական նոր հաջողություններ՝ ի շահ մեծաքանչ հայ մատենագրության։

Ա. Ք.